ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Արժեթղթերի շուկայի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի «է» ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ) են համարվում՝

ա. արժեթղթերի, արտարժույթի, տոկոսադրույքի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ֆինանսական ինդեքսների կամ ֆինանսատնտեսական ցուցանիշների հետ կապված օպցիոն, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել բնեղենով կամ դրամական միջոցներով,

բ. ապրանքների հետ կապված օպցիոն, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը պետք է իրականացվի դրամական միջոցներով կամ կարող է իրականացվել դրամով՝ կողմերից մեկի ցանկությամբ (բացառությամբ խախտման կամ այլ հիմքերով պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքերի),

գ. ապրանքների հետ կապված օպցիոն, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել բնեղենով, պայմանով, որ այդ պայմանագրերը շրջանառվում են կարգավորվող շուկայում,

դ. ապրանքների հետ կապված օպցիոն, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել բնեղենով, և որոնք նախատեսված չեն սույն կետի «գ» ենթակետով, ինչպես նաև չեն կնքվել առևտրային նպատակներով, որոնց հատուկ են այլ ածանցյալ ֆինանսական գործիքների բնութագրիչ հատկանիշները, այդ թվում՝ դրանցով փոխադարձ պարտավորությունների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացումը հաշվարկային համակարգի միջոցով, կամ այդպիսի պայմանագրերի ենթակա լինելը պարբերական լրացուցիչ ապահովման պահանջին,

ե. վարկային ռիսկի փոխանցման հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքները,

զ. տարբերության վրա հիմնված ֆինանսական պայմանագրերը,

է. կլիմայի փոփոխությունների, ֆրախտի վճարների, արտանետումների թույլատրելի չափերի, գնաճի դրույքների կամ այլ պաշտոնական տնտեսական վիճակագրական ցուցանիշների հետ կապված օպցիոն, ֆյուչերս, սվոփ, ֆորվարդ և այլ ածանցյալ պայմանագրերը, որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը պետք է իրականացվի կամ կողմերի ցանկությամբ (բացառությամբ խախտման կամ պայմանագրի այլ հիմքերով վաղաժամկետ լուծման դեպքերի) կարող է իրականացվել դրամով, ինչպես նաև սույն կետով չնախատեսված ակտիվների, իրավունքների, պարտավորությունների, ցուցանիշների կամ չափերի հետ կապված այլ ածանցյալ պայմանագրերը, որոնք ունեն ածանցյալ ֆինանսական գործիքների բնութագրեր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, դրանցով պարտավորությունների փոխադարձ քլիրինգը և վերջնահաշվարկն իրականացվում է հաշվարկային համակարգի միջոցով, կամ այդպիսի պայմանագրերը ենթակա են պարբերական լրացուցիչ ապահովման պահանջի.».

3) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«4) ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք է համարվում այն ածանցյալ ֆինանսական գործիքը, որը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին.».

4) 31-րդ կետը «արժեթղթերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքների» բառերով, իսկ «արժեթղթերով» բառից հետո՝ «, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքներով» բառերով:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 3.1. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով, ապա սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի դրույթները տարածվում են ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիքների և դրանց շուկայի վրա, ինչպես նաև սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում կամ օրենքի հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ ածանցյալ ֆինանսական գործիքների և դրանց շուկայի վրա:

2. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր նորմատիվ իրավական ակտերով կարգավորելու ածանցյալ ֆինանսական գործիքները և դրանց շուկաները, եթե նշված կարգավորումների բացակայությունը կարող է հանգեցնել ֆինանսական կայունության խաթարմանը կամ ներդրողների շահերի ոտնահարմանը կամ ածանցյալ ֆինանսական գործիքների ռիսկայնության աճի կամ ֆինանսական շուկաների բնականոն գործունեության խաթարմանը:

3. Կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ իրավական ակտով սահմանել միջազգային շուկաներում լայնորեն կիրառվող ածանցյալ ֆինանսական գործիքների կամ ֆինանսական գործարքների տիպային պայմանագրեր: Սույն կետով նախատեսված տիպային պայմանագրեր կնքելիս կամ դրանց գործողության ընթացքում կողմերը կարող են տվյալ պայմանագրերի պայմանների նկատմամբ կիրառել այն պետության իրավունքը, որը սովորաբար կիրառվում է տվյալ տիպային պայմանագրերի նկատմամբ: Սույն կետին համապատասխան կիրառվելիք օտարերկրյա իրավունքի նորմը չի կիրառվում, եթե դրա կիրառման հետևանքներն ակնհայտ հակասում են Հայաստանի Հանրապետության իրավունքի իմպերատիվ նորմերին կամ Հայաստանի Հանրապետության իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին):

4. Կենտրոնական բանկը ստեղծում է ածանցյալ ֆինանսական գործարքների միասնական գրանցամատյան (առևտրի գրանցամատյան): Ածանցյալ ֆինանսական գործարքների գրանցման կարգն ու ժամկետները, գրանցամատյանի վարման, տեղեկությունների ներկայացման, մշակման, պահպանման, տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով: Հարկային մարմնին առևտրի գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման կարգը, ժամկետները և ծավալները սահմանվում են Կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ իրավական ակտով:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ածանցյալ ֆինանսական գործիքների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած ածանցյալ ֆինանսական գործիքների վրա.»:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ և 8-րդ կետերով.

«7) այն անձանց վրա, որոնք արժեթղթերով գործարքներ են կատարում իրենց հաշվին կամ հաճախորդներին մատուցում են սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի «է» ենթակետով նախատեսված ապրանքների հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ներդրումային ծառայություններ, պայմանով, որ նույն խմբին պատկանող ընկերությունների համար այդպիսի գործարքների կատարումը

կամ ծառայությունների մատուցումը չի հանդիսանում հիմնական գործունեություն, այդ անձի հիմնական գործունեությունը, սույն օրենքի իմաստով, ներդրումային ծառայությունների մատուցումը չէ, կամ այդ անձը չի հանդիսանում ներդրումային ծառայություններ մատուցող անձ.

8) այն անձանց վրա, որոնց հիմնական գործունեությունն իրենց հաշվին ապրանքներով և այդ ապրանքների հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքներով կամ միայն այդ ապրանքների հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների իրականացումն է, բացառությամբ այն անձանց, որոնց հիմնական գործունեությունն իրենց հաշվին ապրանքներով և (կամ) այդ ապրանքների հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների իրականացումն է, և որոնք, սույն օրենքի իմաստով, հանդիսանում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց խմբի անդամ, կամ այդ անձը հանդիսանում է ներդրումային ծառայություններ մատուցող անձ:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխով, ապա սույն բաժնով սահմանված դրույթները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք մատուցում են ածանցյալ ֆինանսական գործիքներով ծառայություններ:»:

Հոդված 5. Օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենքի 11-14-րդ գլուխների՝ արժեթղթերին և ածանցյալ ֆինանսական գործիքներին վերաբերող դրույթները չեն կիրառվում սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների և դրանց շուկայի վրա: Նշված արժեթղթերը և ածանցյալ ֆինանսական գործիքները թույլատրվում են շուկայում առևտրին և վաճառվում են շուկայում տվյալ շուկայի կանոններին համապատասխան:

6. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր նորմատիվ իրավական ակտերով կարգավորելու սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների՝ շուկայում առևտրին թույլտվության, դրանց առևտրի և դրանցով կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) քլիրինգի և վերջնահաշվարկի հատուկ պայմաններ և կարգ:»:

Հոդված 6. Օրենքի 159-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սույն գլխի դրույթները տարածվում են նաև՝

1) սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արժեթղթերի հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքների վրա.

2) այն ածանցյալ ֆինանսական գործիքների վրա, որոնք հաշվի են առնվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արժեթուղթը գնելու կամ վաճառելու որոշում կայացնելիս.

3) այն ածանցյալ ֆինանսական գործիքների վրա, որոնցով գործարքները կարող են էական ազդեցություն ունենալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արժեթղթերի գնի վրա.

4) արտարժույթի հետ կապված ածանցյալ ֆինանսական գործիքների վրա:»:

Հոդված 7. Օրենքի «ածանցյալ գործիք» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիք» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-189-Ն

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225.1-ին հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքի 15-րդ գլխով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի) կամ արժեթղթի գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարվելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի պայմանագրից ծագող իրավունքը լիազորված մարմնի կողմից վարվող գրավի գրանցման մատյանում առավել վաղ գրանցած գրավառուն, մյուս՝ համապատասխան գույքի գրավի պայմանագրերից ծագող իրենց իրավունքներն առավել ուշ գրանցած կամ չգրանցած գրավառուների հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի:»:

Հոդված 3. Օրենսգրքի 249-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ֆինանսական գործարքների դեպքում գրավի բռնագանձման առանձնահատկությունները սահմանվում են 252.1-ին հոդվածով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը «համաձայնությամբ» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված դեպքի)» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Գրավ դրված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած համապատասխան գույքի արժեքից այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին: Գրավառուի՝ գրավով չապահովված պահանջները սույն կետով նախատեսված գումարից (արժեքից) բավարարվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 252.1-ին հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 252.1. ԳՐԱՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

1. Սույն գլխով նախատեսված դրույթները կիրառվում են ֆինանսական գործարքներից բխող պարտավորության գրավի հետ կապված հարաբերությունների վրա, եթե սույն հոդվածով այլ բան նախատեսված չէ:

---

* *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

2. Սույն հոդվածի իմաստով ֆինանսական գործարքներ են համարվում՝

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքները.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած պահանջները բավարարող գլխավոր համաձայնագրերի շրջանակներում կնքված գործարքները:

3. Այն դեպքում, երբ գրավով ապահովվում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքներից կամ գլխավոր համաձայնագրերի շրջանակում կնքված գործարքներից բխող պարտավորություն, գրավատուն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պայմանագրային ներդրումային ֆոնդ է, և գրավի առարկան ֆինանսական գործարքներին բնորոշ արժեթուղթ է կամ դրամական միջոց, ապա գրավով ապահովված այդ պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն բռնագանձման ծանուցում է ուղարկում գրավատուին (պարտապանին):

Այն դեպքում, երբ կողմերը պայմանագրով ավելի երկար ժամկետ չեն նախատեսել, բռնագանձման ծանուցումը պարտապանին (գրավատուին) ուղարկելուց անմիջապես հետո գրավառուն իրավունք ունի սույն օրենսգրքի ուժով գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան կամ վերցնելու ի սեփականություն՝ համաձայն գրավի պայմանագրի:

4. Այն դեպքում, երբ գրավով ապահովվում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքներից կամ գլխավոր համաձայնագրերի շրջանակում կնքված գործարքներից բխող պարտավորություն, գրավատուն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ պայմանագրային ներդրումային ֆոնդ է, և գրավի առարկան ֆինանսական գործարքներին բնորոշ արժեթուղթ է կամ դրամական միջոց, ապա՝

1) գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ կարող է սահմանվել նաև հասարակ գրավոր ձևով կնքված գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև հասարակ գրավոր ձևով կնքված համաձայնությամբ.

2) հասարակ գրավոր ձևով կնքված գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև հասարակ գրավոր ձևով կնքված համաձայնությամբ կարող է գրավառուին իրավունք վերապահվել գրավի գործողության ժամկետի ընթացքում ցանկացած պահի դադարեցնելու գրավը և որպես սեփականություն ձեռք բերելու գրավադրված գույքը՝ այն որպես իր պարտավորությունների ապահովման միջոց օգտագործելու նպատակով (rehypothecation): Սկսած այն պահից, երբ գրավառուն օգտվում է նշված իրավունքից, գրավատուն գրավառուի նկատմամբ ձեռք է բերում գրավի առարկայի վերադարձման կամ վերջինիս արժեքի չափով պահանջի իրավունք, որն իրավասու է իրացնելու իր պարտավորության մարման օրը, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան գրավի պայմանագրով կամ համաձայնությամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 996-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքները ապահովագրության պայմանագիր չեն հանդիսանում:»:

Հոդված 8. Օրենսգրքի 1039-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքների վրա հիմնված պահանջները չեն համարվում ռիսկի վրա հիմնված խաղեր կամ գրազ (մոլեխաղեր), նույնիսկ եթե դրանք պարունակում են խաղերին և (կամ) գրազին (մոլեխաղերին) բնորոշ կամ համանման պայմաններ:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-190-Ն

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» [*] *Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին*[**]

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Բանկի անվճարունակության մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը, ինչպես նաև բանկի սնանկության մասին դատարան դիմում ներկայացնելը չի կարող սահմանափակել զուտացման համաձայնությամբ նախատեսված զուտացման իրականացումը:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Բանկը սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև բանկը սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռը չի կարող սահմանափակել զուտացման համաձայնությամբ նախատեսված զուտացման իրականացումը:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության «հիփոթեքային պարտատոմսերից բխող պարտավորությունների և դրանց ապահովման միջոց հանդիսացող ակտիվների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների զուտացման դեպքում» բառերով:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունը «և գործողությունների վրա» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքով նախատեսված ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող պարտավորությունների կամ գործողությունների զուտացման)» բառերով.

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» կետով.

«դ) սույն օրենքով նախատեսված ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող զուտացման վրա:»:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.

«ե) ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող իննսուն օրվա ընթացքում կնքված զուտացման համաձայնությունը և (կամ) ապահովության պայմանագիրը, եթե՝

1) կնքման պահին պարտապան բանկի համար սնանկությունը կամ սնանկության հնարավորությունը կանխատեսելի էր, և

2) այդպիսի զուտացման համաձայնություն և (կամ) ապահովության պայմանագիր կնքելը չէր բխում բանկի շահերից և հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ:»:

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 16.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքի իմաստով ֆինանսական գործարքներ են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված գործարքները:

2. Սույն օրենքի իմաստով ապահովության պայմանագրեր են համարվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերի հետ կապված՝

ա) հետևյալ ապահովված իրավունքները.

1) արժեթղթերի և դրամական միջոցների նկատմամբ ապահովված իրավունքը,

2) երաշխավորությունը և երաշխիքը,

3) մարժայի և նույնաբնույթ այլ պայմանագիրը,

4) գրավչության գործիքները.

բ) այն գործարքները, որոնց պարտադիր բաղկացուցիչ մաս է կազմում որպես ապահովման միջոց արժեթղթերի կամ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, ներառյալ՝ ռեպո գործարքները, արժեթղթերի փոխառության գործարքները, արժեթղթերը գնելու և հետ վաճառելու հետ կապված գործարքները:

3. Սույն օրենքի իմաստով զուտացման համաձայնություն է հանդիսանում կողմերի գրավոր համաձայնությունը՝

ա) որը նախատեսում է գլխավոր համաձայնագրի շրջանակներում կնքվող մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող վճարման կամ մատակարարման ներկա կամ ապագա իրավունքների կամ պարտավորությունների զուտացման իրավունք.

բ) որը նախատեսում է զուտացման իրավունք երկու և ավելի գլխավոր համաձայնագրերի միջև.

գ) սույն մասի «ա» և «բ» կետերով նախատեսված համաձայնագրերի հետ կապված կամ դրանց մաս կազմող ապահովության պայմանագիրը:

4. Սույն հոդվածի կանոնները տարածվում են զուտացում նախատեսող համայնությունների և ապահովության պայմանագրերի վրա բացառապես այն մասով, որը վերաբերում է ֆինանսական գործարքներին:

5. Սույն օրենքի իմաստով զուտացում է համարվում՝

ա) զուտացման համաձայնության ներքո մեկ կամ մի քանի ֆինանսական գործարքներով և ապահովության պայմանագրերով վճարման կամ մատակարարման պարտավորությունները վաղաժամկետ կատարելը կամ վաղաժամկետ դադարեցնելը, և

բ) սույն մասի «ա» կետով նախատեսված յուրաքանչյուր վճարման կամ մատակարարման պարտավորության կատարման այդպիսի դադարեցման և (կամ) վաղաժամկետ կատարում պահանջելու ուժով առաջացած արժեքի, շուկայական արժեքի, լիկվիդացիոն արժեքի կամ այդ պարտավորությունը փոխարինելու արժեքի գնահատումը և հաշվարկը, և (կամ)

գ) սույն մասի «բ» կետով հաշվարկված կամ գնահատված արժեքների փոխարկումը մեկ արժույթի, և

դ) սույն մասի «բ» կետով հաշվարկված, ինչպես նաև «գ» կետով նույն արժույթի փոխարկված արժեքների զուտ հաշվեկշռի որոշումը՝ հաշվանցի կամ այլ միջոցներով:

6. Սույն օրենքի 14-րդ հոդվածով և սույն օրենքի այլ կանոններով նախատեսված պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը, սույն օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված հաշվանցի իրականացման սահմանափակումը չեն տարածվում պարտապան բանկի մասնակցությամբ զուտացման համաձայնության վրա:

7. Ադմինիստրացիան իրավասու է միակողմանիորեն պահանջելու իրականացնել զուտացումը, եթե զուտացման համաձայնության կողմը պարտատերերի պահանջների բավարարման սառեցման պահից 45 օրվա ընթացքում չի իրականացրել զուտացման համաձայնությամբ վերջինիս տրված իրավունքները, եթե կողմերի միջև պայմանագրով այլ ժամկետ նախատեսված չէ:

8. Սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսված՝ ադմինիստրացիայի ղեկավարի իրավունքները (բացառությամբ 16-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետով նախատեսված իրավունքների) չեն տարածվում սույն հոդվածով սահմանված զուտացման համաձայնության շրջանակներում պարտապան բանկից պահված կամ պարտապան բանկի փոխանցած գումարների կամ ապահովության առարկայի վրա, ինչպես նաև ֆինանսական գործարքների վրա:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «ա» կետը «արժեթղթերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքների» բառերով.

2) «բ» ենթակետը «ակտիվների և պարտավորությունների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքով նախատեսված զուտացման համաձայնությամբ ֆինանսական գործարքներից բխող պարտավորությունների)» բառերով:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը «Բանկի պարտավորությունների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքով նախատեսված զուտացման համաձայնությամբ ֆինանսական գործարքներից բխող պարտավորությունների)» բառերով:

Հոդված 9. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետը «բոլոր տեսակի պարտավորությունների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքով նախատեսված զուտացման համաձայնությամբ ֆինանսական գործարքներից բխող պարտավորությունների)» բառերով:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով.

«2.2. Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքով նախատեսված ֆինանսական գործարքներից և ապահովության պայմանագրերից բխող զուտացման համաձայնության վրա:»:

Հոդված 11. Օրենքում «ածանցյալ արժեթուղթ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիք» բառերով:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-191-Ն

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «զ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) թողարկել, գնել (գեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել, ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործարքների կնքումը.».

2) «ը» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքներն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).».

3) «ժբ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարտեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, ածանցյալ ֆինանսական գործիքներ, փաստաթղթեր և այլ արժեքներ.»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բանկերը կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իրենց կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր, ներդրումային այլ արժեթղթեր և որպես հիմքում ընկած առարկա՝ ներդրումային արժեթուղթ ունեցող ածանցյալ ֆինանսական գործիքներ գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը, ներդրումային այլ արժեթղթերը և ածանցյալ ֆինանսական գործիքները (բաժանորդագրական գործունեություն):

Բանկերին արգելվում է տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր և (կամ) որպես հիմքում ընկած առարկա՝ ներդրումային արժեթուղթ ունեցող ածանցյալ ֆինանսական գործիքներ և միաժամանակ այդ անձին տվյալ արժեթղթերից և (կամ) համապատասխան ածանցյալ ֆինանսական գործիքներից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր տրամադրել:»:

Հոդված 3. Օրենքի 39.7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ՝ բանկի բաժնետոմսերի, այլ արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների արժեքը) այն գինը, որով գույքի արժեքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ գույքը ձեռք բերել:».

2) 5-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանկի բաժնետոմսերի, այլ արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի, այլ արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:»:

---

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

Հոդված 4. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած ածանցյալ ֆինանսական գործիքների տեղաբաշխման դեպքում տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.»:

Հոդված 5. Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին պարբերությունը «արժեթղթերում» բառից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին պարբերությունը «արժեթղթերում» բառից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներում» բառերով:

Հոդված 7. Օրենքի 57-րդ հոդվածի 5-րդ մասը «ինվեստիցիոն արժեթղթերում» բառերից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներում» բառերով:

Հոդված 8. Օրենքի մնացած բոլոր հոդվածներում «ածանցյալ արժեթղթեր» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիքներ» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-194-Ն

«Վարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ.2» կետով.

«դ.2) թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իր հաշվին և իր անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ.».

2) 3.1-ին մասի «դ» կետով» բառերը փոխարինել «դ» և «դ.2» կետերով» բառերով, իսկ նույն մասը «արժեթղթերով» բառից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներով» բառերով□

Հոդված 2. Օրենքի 14.1-ին հոդվածի 3-րդ մասի «դ» կետը «այլ արժեթղթերի» բառերից հետո լրացնել «ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարգավորված ածանցյալ ֆինանսական գործիքների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը «ներդրումային արժեթղթերում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև այն ածանցյալ ֆինանսական գործիքներով կատարված գործարքներում, որոնց հիմքում ընկած է ներդրումային արժեթուղթ,» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-195-Ն

[*] *ՀՀՊՏ 2002 N 23 (198), 03.07.02:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 38-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով պետք է սահմանվեն թողարկողների (ներառյալ՝ բանկերի՝ բանկային ավանդների մասով) և (կամ) դրանց թողարկած արժեթղթերի նկատմամբ նվազագույն չափանիշներ, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները:»:

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածի 19-րդ մասի 1-ին կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում կամ ածանցյալ ֆինանսական գործիքներում, որոնց կողմ են նրանք հանդիսանում:»:

Հոդված 3. Օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իրականացնել ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերով ամրագրված, ինչպես նաև այն ածանցյալ ֆինանսական գործիքներով տրված իրավունքները, որոնց կողմ է հանդիսանում ֆոնդը՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից»:

Հոդված 4. Օրենքի մնացած բոլոր մասերում «ածանցյալ գործիքներ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիքներ» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-196-Ն

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] *Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին*[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընկերությունները կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իրենց անունից և հաշվին գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել բաժնետոմսեր, պարտատոմսեր, ներդրումային այլ արժեթղթեր, ինչպես նաև ածանցյալ ֆինանսական գործիքներ, որոնք, որպես հիմքում ընկած առարկա, ունեն ներդրումային արժեքուղթ։»:

Հոդված 2. Օրենքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Ընկերության թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարգավորվող ածանցյալ ֆինանսական գործիքների հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները.»□

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-197-Ն

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-96-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի «ածանցյալ արժեթղթերով կնքված գործարքների» բառերը փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիքների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը կարող է կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներ բացառապես ակտիվների խմբի իրացվելիության ապահովման և ակտիվների խմբի մեջ մտնող ակտիվների սկզբնական արժեքի պահպանման նպատակով:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել արժեթղթավորման հիմնադրամի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները և ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումների առավելագույն չափը:»:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածում «ածանցյալ արժեթղթերի» բառերը փոխարինել «ածանցյալ ֆինանսական գործիքների» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-199-Ն

[*] *ՀՀՊՏ 2008 N 41 (631), 02.07.08:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«Գրավատների և գրավատնային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-43-Ն օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետը «արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի)» բառերից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներ» բառերով.

2) 2-րդ մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) վարկային միջոցների ձեռքբերման համար տեղաբաշխել պարտատոմսեր, այլ արժեթղթեր կամ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներգրավել միջոցներ այլ կերպ, քան նախատեսված է սույն հոդվածի 1-ին մասով.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-200-Ն

[*] *ՀՀՊՏ 2003 N 64 (299), 30.12.03:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-150 օրենքի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը «գործարքներից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ֆոնդային բորսայում կնքված ածանցյալ ֆինանսական գործիքներից» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 նոյեմբերի 2016 թ., Երևան, ՀՕ-201-Ն

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին (ՀՀՊՏ N 83 (1263), 16.11.16):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «Լենդո» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 192Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Ալեքս-Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի մի շարք լիցենզիաներ (որոշում թիվ 195Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1-9 մասնաճյուղերին (որոշում թիվ 196Ա):
- ***Լրացուցիչ ներդրումային ծառայություններ մատուցելու*** (արժեթղթերի փաթեթի կառավարման և արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին ներդրումային ծառայություններ իրականացնելու համար) ***լիցենզիա է տրվել*** «Ալֆասեքյուրիթիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 204Ա):
- ***Լրացուցիչ ներդրումային ծառայություններ մատուցելու*** (արժեթղթերի փաթեթի կառավարման գծով գործունեություն իրականացնելու համար) ***լիցենզիա է տրվել*** «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 205Ա):
- ***Հաշվառվել են*** «ԻԶԻ ՓԵՅ» և «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությունների «Տիգրան Մեծ», «Ավան», «Արաբկիր 1», «Սևան», «Վանաձոր» և «Մաշտոց», «Խուդյակով» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 206Ա, 207Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «Գոլդ Սթրիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 208Ա):
- ***Գրանցվել է*** «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Մերգելյան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/793Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 5 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1675000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/788Ա-1/790Ա, 1/807Ա, 1/835Ա) և 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/831Ա, 1/841Ա, 1/846Ա, 1/847Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 198Ա որոշմամբ 2016 թ. նոյեմբերի 16-ին ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6. 5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 8.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.0%:***

*Բանկի գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը և ձևը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 299-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]*

Նպատակ ունենալով կարգավորել բանկի գործունեության տեսակի փոփոխման միջոցով որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու հետ կապված հարաբերությունները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկի գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը և ձևը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 17-ի «Բանկի գործունեության տեսակի փոփոխման ընթացակարգը կանոնակարգելու մասին» թիվ 299-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հոկտեմբերի 2016 թ., N 166-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 166-Ն որոշմամբ

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ԵՎ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄՅՈՒՍ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի (այսուհետ՝ բանկ) գործունեության տեսակի փոփոխման միջոցով որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը:

2. Սույն կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմում փոփոխությունների գրանցման գործընթացի շրջա-

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566), 15.11.2016):

նակներում ներկայացվող մյուս փաստաթղթերի) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Ղեկավարների վերաբերյալ միջնորդագրերի և ղեկավարների կամ դրանց կազմում փոփոխությունների գրանցման գործընթացի շրջանակներում ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 13):

3. Սույն կարգով պահանջվող փաստաթղթերը (բացառությամբ՝ ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքների) Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերենով, Յունիկոդ տառատեսակով և «Փի Դի էֆ» ֆորմատով՝ բացառությամբ բանկի գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ ծրագրին կից ներկայացվող աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Ծրագրին կից աղյուսակները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով:

4. Կենտրոնական բանկը սույն կարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Բանկի գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ բանկի կառավարման բարձրագույն մարմնի որոշման ընդունման պահից մեկշաբաթյա ժամկետում բանկը գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) գործունեության տեսակի փոփոխման միջնորդագիր՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի,
2) բանկի գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ բանկի կառավարման բարձրագույն մարմնի որոշումը,
3) բանկի գործունեության տեսակի փոփոխման ծրագիրը՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի կառուցվածքի, որը պետք է առնվազն ներառի բանկային ավանդի, թղթակցային հաշիվների և բանկային, քարտային հաշվի պայմանագրերով, բանկերին ներհատուկ այլ գործիքների գծով ստանձնած բոլոր պարտավորությունները կատարելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան դրանք այլ բանկին փոխանցելու ժամկետները, կարգը:

6. Կենտրոնական բանկի խորհուրդը մեկամսյա ժամկետում քննարկում է ներկայացված փաստաթղթերը և կայացնում է ներկայացված միջնորդագրին համաձայնություն տալու կամ չտալու մասին որոշում, ընդ որում, նշված համաձայնությունը տրամադրելու դեպքում համաձայնությունը տրամադրելու հետ մեկտեղ Կենտրոնական բանկը տրամադրում է նաև նոր ստեղծվող վարկային կազմակերպությունների մասնակիցների նշանակալից մասնակցությանն իր նախնական համաձայնությունը:

7. Սույն կարգի 0-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու դեպքում բանկը բանկի գործունեության տեսակի փոփոխման ծրագրում սահմանված ժամկետներում իրականացնում է ծրագրով նախատեսված միջոցառումները, այդ թվում՝ բանկային ավանդի, թղթակցային հաշիվների և բանկային, քարտային հաշվի պայմանագրերով, բանկերին ներհատուկ այլ գործիքների գծով ստանձնած բոլոր պարտավորությունները կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան՝ դրանք փոխանցում է այլ առևտրային բանկի:

8. Սույն կարգի 0-րդ կետով սահմանված միջոցառումներն իրականացնելուց հետո բանկը ծրագրում սահմանված ժամկետներում հաստատում է վերագրանցվող իրավաբանական անձի կանոնադրությունը և այն գրանցելու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության վերագրանցման դիմում՝ համաձայն սույն կարգի Հավելված 3-ի,
2) վարկային կազմակերպության կանոնադրությունը, որը պետք է ունենա Կանոնակարգ 13-ի Հավելված 2-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,
3) ստեղծվող վարկային կազմակերպության ներքին իրավական այն ակտերը, որոնց ներկայացվող կանոնադրության մեջ հղումներ են կատարվել,
4) ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին

մասի «բ1» կետով սահմանված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համատեղ սահմանված կարգի,

5) բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու դեպքում բանկի բոլոր մասնաճյուղերը և ներկայացուցչությունները կամ դրանց մի մասը՝ որպես վարկային կազմակերպության համապատասխան մասնաճյուղ կամ ներկայացուցչություն վերագրանցելու, իսկ մնացած մասը փակելու վերաբերյալ,
6) յուրաքանչյուր մասնաճյուղի և ներկայացուցչության կանոնադրությունը, որը պետք է ունենա Կանոնակարգ 13-ի Հավելված 2-ով սահմանված տիտղոսաթերթ: Ընդ որում, կանոնադրությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ,
7) բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ վերագրանցվող վարկային կազմակերպության ղեկավարներ ընտրելու կամ նշանակելու մասին,
8) բանկի միջնորդագիրը վարկային կազմակերպության ղեկավարի գրանցման վերաբերյալ՝ համաձայն Կանոնակարգ 13-ի Հավելված 3-ի, և ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Կանոնակարգ 13-ի Հավելված 4-ի,
9) Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին բավարարող առանձնացված տարածքի սեփականության, անհատույց օգտագործման կամ վարձակալության (ենթավարձակալության) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան պետական մարմնում գրանցված վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի պատճենը: Ենթավարձակալության պայմանագրի դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը կամ այդ պայմանագրի առկայությունը, ինչպես նաև հիմնական միջոցը ենթավարձակալության տալու իրավունքը հավաստող փաստաթուղթը,
10) հիմնավորումներ առ այն, որ բանկը կատարել է բանկային ավանդի, թղթակցային հաշիվների և բանկային, քարտային հաշվի պայմանագրերով, բանկերին ներհատուկ այլ գործիքների գծով ստանձնած բոլոր պարտավորությունները կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան՝ դրանք փոխանցել է այլ բանկ:

9. Որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու համար բանկը պետք է բավարարի Կանոնակարգ 13-ի 24-րդ կետով սահմանված պահանջները՝ բացառությամբ Կանոնակարգ 13-ի 24-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջի: Ընդ որում, Կանոնակարգ 13-ի 24-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում բանկի գործունեության տարածքում վերագրանցվող վարկային կազմակերպության վրա:

10. Սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի ուսումնասիրությունը և որոշման կայացումը Կենտրոնական բանկն իրականացնում է վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի տրամադրման նպատակով Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քննության՝ Կանոնակարգ 13-ով սահմանված ժամկետներում և կարգով:

11. Բանկի՝ որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու և բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու Կենտրոնական բանկի որոշումը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում բանկը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի բանկային գործունեության լիցենզիան և բանկի և դրա մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների գրանցման վկայականները:

12. Որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու պահից հետո ողջամիտ ժամկետում վարկային կազմակերպությունը մինչև վերագրանցումը գործող բանկի հաճախորդներին ծանուցում է բանկի գործունեության տեսակի փոփոխության գործընթացի ավարտի վերաբերյալ, հաճախորդների ավանդների, վարկերի, հաշիվների, վճարային քարտերի հետագա սպասարկման ընթացակարգերի մասին, ինչպես նաև գործող հեռախոսահամարներ, որոնց միջոցով հաճախորդները կկարողանան սպառիչ տեղեկատվություն ստանալ նշված ընթացակարգերի մասին:

13. Բանկերի գործունեության տեսակի փոփոխման հետ կապված սույն կարգով չկանոնակարգված հարաբերությունները կարգավորվում են Կանոնակարգ 13-ի համապատասխան դրույթներով:

Հավելված 1

«Բանկի գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը և ձևը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը» կարգի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի _____
_____ բանկի կառավարման բարձրագույն մարմինը
(նշվում է բանկի լրիվ անվանումը)
(նշվում է մարմնի անվանումը) «__»_____ _____ թ. թիվ _____ որոշմամբ որոշել է փոփոխել բանկի գործունեության տեսակը և դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու նպատակով:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածը և ղեկավարվելով վերոնշյալ որոշմամբ՝ խնդրում եմ համաձայնություն տալ սույն միջնորդագրին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների՝ կից ներկայացնում եմ բանկի գործունեության տեսակի փոփոխման համաձայնությունը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ ___ էջ):

Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է սույն միջնորդագրի մերժմանը:

_____ բանկի գործադիր մարմնի ղեկավար՝
(բանկի լրիվ անվանումը)

_____ _____
(ստորագրություն) *(Անուն, ազգանուն)*

«__»_____ _____ թ.

Հավելված 2

«Բանկի գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը և ձևը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը» կարգի

Ծրագիր
բանկի գործունեության տեսակի փոփոխման վերաբերյալ

Սույն ծրագիրը բաղկացած է 2 մասից: Առաջին մասում ներկայացվում է բանկի գործունեության տեսակի փոփոխման ընթացիկ տարվա և հաջորդող երկու տարիների համար վարկային կազմակերպության գործունեության տնտեսական ծրագիրը, իսկ երկրորդ մասում որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու համար ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումները, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված գործընթացի իրականացման նկարագրությունը:

Մաս 1:
Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ
Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն
Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ
Բաժին 5. Ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ
Բաժին 6. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ
Բաժին 7. Հնարավոր ռիսկերի գնահատում
Բաժին 8. Վարկային կազմակերպության մասնաճյուղերը
Բաժին 9. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության պահանջով՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից):

Մաս 2:
Բաժին 1. Անհրաժեշտ միջոցառումների իրականացում
Բաժին 2. Անհրաժեշտ միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը
Բաժին 3. Այլ դրույթներ:

Ենթահավելվածներ:

ՄԱՍ 1

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ծրագրի 1-ին մասը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, բանկի գործունեության տեսակը փոփոխվելու (որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու) ընթացիկ տարվա և հաջորդող երկու լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, վարկային կազմակերպության տնտեսական գործունեությունը, կազմակերպական կառուցվածքը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է:

2. Ծրագրի 1-ին մասի ընդհանուր դրույթներում նշվում են՝

1) բանկի գործունեության տեսակը փոփոխելու պատճառները և նպատակները,
2) ստեղծվող վարկային կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը,
3) վարկային կազմակերպության առաքելությունը,
4) վարկային կազմակերպության նպատակները,
5) բանկի մասնակիցների կազմում և մասնակցության չափի ծրագրվող փոփոխությունները՝ առկայության դեպքում:

Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ

3. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) Վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց նկարագիրը,
2) Վարկային կազմակերպության կողմից ֆինանսական շուկայում նոր տիպի ծառայությունների ներդրումը (առկայության դեպքում),
3) Վարկային կազմակերպության հնարավոր դուստր կազմակերպությունները, դրանց կողմից իրականացվող գործառնությունները,
4) նշում այն մասին, թե բանկի առկա մասնաճյուղերից որոնք են նախատեսվում դառնալ վարկային կազմակերպության մասնաճյուղեր,
5) վարկային կազմակերպության զարգացման և ընդլայնման հեռանկարները, ներառյալ լրացուցիչ մասնաճյուղերի բացումը և տեղակայվածությունը, այլ կազմակերպությունների հետ միացումը և/կամ դրանց ձեռքբերումը,
6) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված իրավաբանական անձանց գործունեությունը, դրանց կազմակերպական կառուցվածքը, վարկային կազմակերպության և նրա հետ փոխկապակցված իրավաբանական անձանց փոխհարաբերությունները,
7) վարկային կազմակերպության և նրա հետ փոխկապակցված անձանց գործարքները (փոխկապակցված անձանց ֆինանսավորումը վարկային կազմակերպության կողմից), եթե այդպիսիք նախատեսվում են,
8) վարկային կազմակերպության վարկավորման ծրագրերը (հիփոթեքային վարկավորման ծրագիր և այլն),

   ընդ որում՝ առկայության դեպքում նշվում է վարկային կազմակերպության կողմից ռիսկային վարկավորում (անբարեխիղճ վարկառուներ, բլանկային վարկերի տրամադրում, այլ) իրականացնելու մտադրության մասին, նկարագրվում է գործընթացը,
9) վարկային կազմակերպության գործառույթների իրականացմանը միջնորդ կազմակերպությունների (խանութներ, ավտո-դիլերներ և այլ) ներգրավված լինելու դեպքում՝ այդ տիպի գործարքների իրականացման գործընթացը, դրանց շրջանակները, նախատեսվող ծավալները՝ գումարային արտահայտությամբ, վարկավորման պայմանները, այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն

4. Կանխատեսվող շուկաների վերլուծությունը պետք է հիմնված լինի թվային շարքերի և այլ փաստացի ցուցանիշների վրա: Տեղեկատվության աղբյուրները, տնտեսական, մրցակցային և այլ բնույթի ենթադրությունների և կանխատեսումների հիմքերը և նախապայմանները նույնպես նշվում են ծրագրում:

5. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) միջոցների տեղաբաշխման նախատեսվող ուղիները, գործառնությունների տեսակները (ներդրումներ արժեթղթերում, տարբեր տեսակի վարկավորում և այլն), բնութագիրը, միջոցների տեղաբաշխման պայմանները,
2) ֆինանսական այն շուկաները (նպատակային շուկաները), որոնցում վարկային կազմակերպությունը պատրաստվում է ծավալել իր ակտիվային գործունեությունը (ըստ յուրաքանչյուր ֆինանսական ծառայության տեսակի):

Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ

6. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) միջոցների ներգրավման հիմնական գործիքները (փոխառություններ, պարտատոմսեր և այլն), դրանց բնութագիրը (հնարավորության դեպքում՝ ըստ միջին մեծության և ժամկետայնության), միջոցների ներգրավման պայմանները (տոկոսադրույքներ և այլն),
2) փոխառությունների ներգրավման հիմնական աղբյուրները և մեթոդները:

Բաժին 5. Ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ

7. Սույն բաժնում ներկայացվում են՝

1) Վարկային կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, վարկային կազմակերպության ղեկավարների և աշխատակիցների քանակը,

2) վերը նկարագրված կազմակերպական կառուցվածքի հիմնավորումը վարկային կազմակերպության կողմից ծրագրվող գործունեության իրականացման տեսանկյունից,
3) վարկային կազմակերպության կառավարման մարմինները (մասնակիցների ընդհանուր ժողովը, խորհուրդը, գործադիր մարմինը), դրանց միջև փոխհարաբերությունները, կառավարման մարմինների իրավասությունները և պարտականությունները,
4) կառավարման մարմինների կազմը,
5) վարկային կազմակերպության խորհրդի կողմից ստեղծվող կոմիտեների (ներդրումային, վարկային և այլն) գործունեությունը, դրանց իրավասություններն ու պարտականությունները (առկայության դեպքում),
6) վարկային կազմակերպության հաճախորդների բողոքների քննման և արձագանքելու միջոցառումները,
7) վարկային կազմակերպության կողմից տեղեկատվության հրապարակման և տրամադրման քաղաքականությունը, տեղեկատվության հրապարակման ուղիները, թիրախը, թարմացման հաճախականությունը,
8) անկախ աուդիտորական կազմակերպության ընտրման սկզբունքները:

Բաժին 6. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ

8. Սույն բաժնում ներկայացվում են՝
1) վարկային կազմակերպության կապիտալի նպատակային մեծությունը և կառուցվածքը, դրանց հասնելու ուղիները, ինչպես նաև նորմատիվային կապիտալի պահանջների բավարարման հետ կապված ծրագրերը,
2) վարկային կազմակերպության կապիտալացման ռազմավարությունը (ներառյալ՝ ընդհանուր կապիտալի նախատեսվող մեծության ապահովումը արտաքին և ներքին աղբյուրների հաշվին, կապիտալի համարժեքության ապահովմանն (ըստ կիրառելիության) ուղղվող հիմնական միջոցառումները),
3) եկամտաբերության նախանշված մակարդակը, ակտիվների եկամտաբերության, զուտ տոկոսային մարժայի կամ շահութաբերության այլ չափանիշներին հասնելու ռազմավարությունները,
4) ֆինանսական կանխատեսումներից ելնելով՝ ներքին և արտաքին ռիսկերի ազդեցության գնահատումը կապիտալի համարժեքության վրա (ըստ կիրառելիության),
5) շահաբաժինների բաշխման վերաբերյալ քաղաքականությունը:

Բաժին 7. Հնարավոր ռիսկերի գնահատում

9. Վարկային ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) վարկային կազմակերպության վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (ճյուղային և ժամկետային կառուցվածքը, այլ), վարկային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելու մակարդակի գնահատումը,
2) վարկային պորտֆելի որակի ստուգման գործընթացը, հաճախականությունը և շրջանակները,
3) վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման հիմնական սկզբունքները,
4) վարկառուների վարկունակության գնահատման մեթոդաբանությունը:
10. Իրացվելիության ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) վարկային կազմակերպության իրացվելիության (ակտիվների և պասիվների կառավարման) ռազմավարությունը,
2) վարկային կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
3) նախատեսվող ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքն ըստ ժամկետայնության,
4) ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ճեղքվածքի (GAP) կառավարման մեթոդները, ընդունելի սահմանաչափերը:
11. Շուկայական ռիսկի վերաբերյալ ներկայացվում են՝
1) ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները (պետական և ոչ պետական արժեթղթերում, պարտատոմսերում և այլն), շուկայական ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակի գնահատումը,
2) արտարժութային գործառնությունները, արտարժութային ռիսկի կառավարման (ռիսկի բացահայտում, գնահատում և հսկում) ծրագրերը, ռիսկի ընդունելի մակարդակը,

3) վարկային կազմակերպության շուկայական ռիսկի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների պորտֆելը և գների հնարավոր փոփոխությունների ազդեցությունը եկամտաբերության, կապիտալի և պորտֆելի զուտ արժեքի վրա,
4) վարկային կազմակերպության կողմից հեջավորման գործիքների կիրառումը (օրինակ՝ ֆյուչերս, օպցիոն, տոկոսադրույքի սվոպ և այլն):

12. Սույն բաժնում պետք է նկարագրել նաև բանկի գործունեության տեսակի փոփոխության դեպքում առաջացող հնարավոր իրավական ռիսկերը, դրանց կառավարումը, ինչպես նաև վարկային կազմակերպության համար էական նշանակություն ունեցող այլ ռիսկերը:

Բաժին 8. Վարկային կազմակերպության մասնաճյուղերը

13. Սույն բաժնում ներկայացվում է այն մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք պետք է վերագրանցվեն որպես վարկային կազմակերպության մասնաճյուղեր բանկի գործունեության տեսակի փոփոխման դեպքում:

14. Սույն բաժնում նկարագրվում են.

1) մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսվող ֆինանսական գործառնությունների ցանկը և դրանց համառոտ նկարագիրը,
2) մասնաճյուղի պոտենցիալ հաճախորդների բնութագիրը և ենթադրվող թիվը, խոշոր հաճախորդների անունները (առկայության դեպքում),
3) մասնաճյուղի վարկավորման ծրագրերը,
4) այն տարածքը/շուկաները, որոնցում մասնաճյուղը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը,
5) մասնաճյուղի գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը (բացառությամբ արդեն իսկ գործող մասնաճյուղերի),
6) մասնաճյուղի հիմնական մրցակիցների նկատմամբ մասնաճյուղի հարաբերական առավելությունը և թերությունները (սպասարկման որակ, մատուցվող ծառայությունների ցանկ և այլն), մասնաճյուղի մրցունակության հիմնավորումը (բացառությամբ արդեն իսկ գործող մասնաճյուղերի),
7) մասնաճյուղի ներքին կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները, մասնաճյուղի աշխատակիցների քանակը,
8) վարկային կազմակերպության գլխամասի և մասնաճյուղի միջև տեղեկատվական հոսքերը՝ հաշվետվական համակարգը ներառյալ:

Բաժին 9. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ. ներկայացվում է Կենտրոնական բանկի պահանջով)

15. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է նկարագրի վարկային կազմակերպության գործողությունները շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխության դեպքում: Այլընտրանքային տնտեսական ծրագիրը պետք է ընդգրկի ռիսկերի կառավարման առավել խիստ գործընթացներ: Ծրագիրը պետք է ներառի ապագայում, անհրաժեշտության դեպքում, վարկային կազմակերպության կապիտալի մեծացման վերաբերյալ մոտեցումներ, ինչպես նաև վարկային կազմակերպության արտակարգ իրավիճակների համար պահուստների ձևավորման և օգտագործման կարգը: Ծրագրում պետք է նկարագրված լինեն անսպասելի կորուստների առաջացման դեպքում վարկային կազմակերպության ֆինանսական պաշտպանվածության ապահովման ուղիները:

ՄԱՍ 2: ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Բաժին 1. Անհրաժեշտ միջոցառումների իրականացում

16. Ծրագրի սույն բաժնում պետք է նկարագրվեն այն բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են բանկի գործունեության տեսակը փոփոխելու, սույն ծրագրով սահմանված նպատակներին հասնելու և որպես վարկային կազմակերպություն վերագրանցվելու դիմումը ներկայացնելու պահին «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով վարկային կազմակերպություններին ներկայացվող բոլոր պահանջներն ու պայմանները բավարարելու համար: Այդ միջոցառումներն ընդգրկում են՝

1) ներքին կազմակերպական կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը,

2) գործառնական համակարգի ձևավորումը/կատարելագործումը (համապատասխան ծրագրերի ձեռքբերումը և տեղադրումը),
3) նոր ղեկավարների գրանցումը (առկայության դեպքում),
4) ներքին իրավական ակտերի մշակումը,
5) վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովմանն ուղղված գործընթացի իրականացման նկարագրությունը,
6) բանկային ավանդի, թղթակցային հաշիվների և բանկային, քարտային հաշվի պայմանագրերով, բանկերին ներհատուկ այլ գործիքների գծով ստանձնած բոլոր պարտավորությունները կատարելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան դրանք այլ բանկին փոխանցելու ժամկետները, կարգը և/կամ նշված պարտավորությունները մարելու ձևերը (դրամական միջոցներով, թե գույքի փոխանցմամբ),
7) այլ անհրաժեշտ միջոցառումներ:

17. Միջոցառումների իրականացման ծրագրում յուրաքանչյուր միջոցառման (գործընթացի) մասով պետք է նշվեն՝

1) միջոցառման սկիզբը, տևողությունը և վերջնաժամկետը,
2) միջոցառման իրականացման շրջանակները (որ մասնաճյուղերին, ստորաբաժանումներին է վերաբերում միջոցառումը),
3) միջոցառման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների նկարագրությունը,
4) գործողությունների համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների քանակը, իսկ պատվիրակման դեպքում՝ նաև կապալառու կազմակերպությունների անվանումը և հանձնարարվող աշխատանքների բնույթը,
5) յուրաքանչյուր գործողության իրականացման ծախսերի գնահատականը,
6) միջոցառման ընդհանուր բյուջեն և դրա ֆինանսավորման աղբյուրները,
7) յուրաքանչյուր միջոցառման իրականացման հնարավոր ռիսկերի բացահայտումը և դրանց կառավարմանն ուղղված գործողությունները,
8) միջոցառման (կամ առանձին գործողությունների) համար սահմանված որակական և (կամ) քանակական պահանջները,
9) միջոցառման իրականացման պատասխանատու անձը և/կամ ստորաբաժանումը:

Վերոնշյալ ծրագրում միջոցառումները և դրանց համապատասխան գործողությունները պետք է ներկայացվեն ըստ կատարման ժամկետի հաջորդականության: Խրախուսվում է միջոցառումների ծրագրի ներկայացումը կից գծապատկերների, բլոկ-սխեմաների միջոցով (օրինակ՝ կազմված MS Project ծրագրով):

Բաժին 2. Անհրաժեշտ միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը

18. Սույն բաժնում ներկայացվում է միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը, որը ենթադրում է միջոցառումների կատարման ընթացքի և որակի հետևում, կարգավորում և հսկողություն, խնդիրների բացահայտում, անհրաժեշտության դեպքում ծրագրում փոփոխություններ կատարելու նպատակահարմարության որոշում և փոփոխությունների կատարում: Սույն բաժնում առնվազն նկարագրվում են.

1) միջոցառումների և գործողությունների նկատմամբ հսկողության իրականացման կարգը և պատասխանատու անձինք և/կամ ստորաբաժանումները: Հսկողությունը ենթադրում է միջոցառումների և ծրագրերի կատարման շրջանակների, ժամկետների, որակի, ծախսումների, առաջացած ռիսկերի և դրանց նվազեցման գծով կատարված աշխատանքների նկատմամբ հսկողություն,
2) միջոցառումների պատասխանատու անձանց, բանկի գործադիր մարմնին, խորհրդին, ինչպես նաև այլ անձանց և/կամ ստորաբաժանումներին միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների (status reports, progress meausrement) տրամադրման կարգը, պարբերականությունը և պատասխանատու անձինք,
3) միջոցառումների պատասխանատու անձանց, բանկի գործադիր մարմնի, խորհրդի, ինչպես նաև այլ անձանց և/կամ ստորաբաժանումների հետ հանդիպումների և քննարկումների իրականացման հաճախականությունը, դրանց արձանագրումը,
4) բանկի կառավարման բարձրագույն մարմնի կողմից միջոցառումների կատարման ծրագրում փոփոխություններ կատարելու կարգը,
5) յուրաքանչյուր միջոցառումը և/կամ գործողությունը կատարելուց հետո կատարման որակի, սահմանված նպատակներին հասնելու գնահատման կարգը և կատարված միջոցառումը (գործողությունը) հաստատելու կարգը:

Բաժին 3. Այլ դրույթներ

19. Սույն հավելվածով պահանջվող այն տեղեկությունները, որոնց վերաբերյալ ձևեր սահմանված չեն, կարող են ներկայացվել ազատ ոճով:

20. Ֆինանսական ծրագրավորման ժամանակ հիմնական կանխատեսումները իրականացնելիս սթրես-թեստերի կիրառումը խրախուսելի է:

21. Ծրագիրը կարող է պարունակել նաև այնպիսի տեղեկություն, որը չի պահանջվում սույն կանոնակարգով, սակայն կարևորվում է նախաձեռնող անձանց կողմից:

22. Ծրագրին կցվում են՝

1) կապիտալի հաշվարկն առաջիկա երեք ֆինանսական տարիների համար (ձև 1),
2) հաշվեկշռի հաշվարկային նախագծերը գործունեության առաջին երեք ֆինանսական տարիների համար (ձև 2),
3) եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջին երեք տարիների համար (ձև 3),
4) նոր մասնակիցների (առկայության դեպքում) վերաբերյալ Կանոնակարգ 13-ի 11-րդ գլխով սահմանված փաստաթղթերը:

Ձև 1

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ
(կանխատեսումը)

(հզ. դրամ)

ԿԱՊԻՏԱԼ	Առաջիկա տարիներ		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Հիմնական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ հիմնական կապիտալ			
Լրացուցիչ կապիտալ			
Վերագնահատման պահուստներ			
Հաշվեկշռի կոնսոլիդացիայի ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ			
Այլ պահուստներ			
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ			
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ (հիմնական կապիտալ + լրացուցիչ կապիտալ)			
Որակական գնահատականներ			
1. Հարաբերակցությունը նորմատիվային ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
2. Հարաբերակցությունը ընդհանուր կապիտալի և ներգրավված միջոցների միջև			

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

	Առաջիկա տարիներ		
ԱԿՏԻՎՆԵՐ	1-ին	2-րդ	3-րդ
Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր			
Բանկային հաշիվներ			
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Ռեպո համաձայնագրեր և արժութային սվոպ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր (փոխատվություններ)			
Այլ գործառնություններ և դրանց գծով ստացվելիք գումարներ, այդ թվում՝			
երաշխիքներ			
ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ			
ստացվելիք շահաբաժիններ			
հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ			
հեջավորման ածանցյալ գործիքներ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում			
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում			
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			
Այլ ակտիվներ			
Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ			
Ընդամենը՝ ակտիվներ			
ՊԱՍԻՎՆԵՐ			
Պարտավորություններ			
Բանկերից ներգրավված փոխառություններ և ստացված վարկեր			
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններ և ստացված վարկեր			
Պարտավորություններ այլ փոխատուների նկատմամբ			
Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ			
Այլ վճարվելիք գումարներ			
Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով			
Կրեդիտորական պարտքեր			
Ակտիվներին վերաբերող շնորհներ			
Պահուստներ			
Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր			
Այլ պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Վերագնահատման պահուստներ			
Հետ գնված կապիտալ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ պասիվներ			

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

		Առաջիկա տարիներ		
		1-ն	2-րդ	3-րդ
1.	**Տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**x**
1.1.	Բանկային հաշիվներից			
1.2.	Առևտրային բանկերում տեղաբաշխված միջոցներից			
1.3.	Այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից			
1.4.	Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.5.	Իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.6.	Վարկային քարտերից			
1.7.	Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրամադրված միջոցներից			
1.8.	Վարկային կազմակերպության հետ կապված անձանց մոտ տեղաբաշխված միջոցներից՝ բանկային հաշիվներից, ավանդներից, վարկերից և այլ փոխառություններից			
1.9.	ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից			
1.10.	Արժութային սվոպից և ռեպո համաձայնագրերից			
1.11.	Ֆինանսական վարձակալությունից			
1.12.	Ֆակտորինգից			
1.13.	Այլ արժեթղթերից			
1.14.	Այլ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը տոկոսային եկամուտներ				
2.	**Տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
2.1.	Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի և փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.2.	Արժութային սվոպի և ռեպո համաձայնագրերի դիմաց			
2.3.	Հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց			
2.4.	ՀՀ կառավարության և այլ պետությունների կառավարությունների նկատմամբ պարտավորությունների դիմաց			
2.5.	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց			
2.6.	Օվերդրաֆտների դիմաց			
2.7.	Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի գծով			
2.8.	Ֆինանսական վարձակալության դիմաց			
2.9.	Ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.10.	Այլ պարտավորությունների դիմաց			
Ընդամենը տոկոսային ծախս				
Զուտ տոկոսային եկամուտներ				
3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**x**
3.1.	Ստացված միջնորդավճարներ			
3.2.	Երաշխիքներից, հոժարագրերով, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ			
3.3.	Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ			
3.4.	Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ			
3.5.	Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ			
3.6.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.7.	Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից զուտ եկամուտներ			
3.8.	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.9.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն			
3.10.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ			
3.11.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			

3.12.	Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.13.	Արտասովոր եկամուտներ			
3.14.	Ստացված տույժեր, տուգանքներ			
3.15.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ				
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
4.1.	Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ			
4.2.	Գործուղման ծախսեր			
4.3.	Հատկացումներ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության հիմնադրամին			
4.4.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ			
4.5.	Ամորտիզացիոն մասհանումներ			
4.6.	Շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար			
4.7.	Շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության ապահովման ծախսեր			
4.8.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր			
4.9.	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր			
4.10.	Գրասենյակային և տպագրական ծախսեր			
4.11.	Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
4.12.	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր			
4.13.	Տրանսպորտային ծախսեր			
4.14.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր			
4.15	Վճարված տույժեր, տուգանքներ			
4.16.	Ուսուցման, վերապատրաստման ծախսեր			
4.17.	Ապահովագրության գծով ծախսեր			
4.18.	Այլ ոչ տոկոսային ծախսեր			
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր				
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ				
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	**x**	**x**	**x**
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին			
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին			
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին			
5.4.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստին			
Ընդամենը հատկացումներ				
6.	**Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների վերադարձ**	**x**	**x**	**x**
6.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից			
6.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից			
6.3.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստից			
6.4.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստից			
Զուտ մասհանումներ				
Շահույթ՝ մինչև հարկվելը				
Շահութահարկ				
Զուտ շահույթ				
Հաշվարկված շահաբաժիններ				
այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով				
սովորական բաժնետոմսերի գծով				
Չբաշխված շահույթ				

Հավելված 3

«Բանկի գործունեության տեսակի փոփոխման միջնորդագրի և կից ներկայացվող մյուս փաստաթղթերը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնեցմանը ներկայացնելու կարգը և ձևը, ինչպես նաև գործունեության տեսակի փոփոխման գործընթացը հիմնավորող և բացահայտող այլ փաստաթղթերի ցանկը» կարգի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____
_____ բանկը որոշում է կայացրել
(բանկի անվանումը և կազմակերպաիրավական ձևը)
փոփոխել իր գործունեության տեսակը և վերագրանցվել որպես վարկային կազմակերպություն:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերագրանցել վարկային կազմակերպությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի գործունեության տեսակի փոփոխման կարգով» պահանջվող փաստաթղթերը (կից՝_____ էջ):

Հավաստիացնում ենք, որ _____ տարածքը և
(կազմակերպության անվանումը)
տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 13-ի 25-րդ գլխով սահմանված պահանջներին,

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Բանկի կառավարման մարմնի իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն
_____

«__»_____ _____ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կարգավորել վարկային կազմակերպությունների գործունեության տեսակի փոփոխման միջոցով որպես բանկ վերագրանցվելու հետ կապված՝ վարկային կազմակերպության հաճախորդներին տեղեկացման հարաբերությունները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.2-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 1-ի 49-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու դեպքում վարկային կազմակերպության բոլոր մասնաճյուղերը և ներկայացուցչությունները՝ որպես բանկի համապատասխան մասնաճյուղ և ներկայացուցչություն գրանցելու կամ դրանց մի մասի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ,»,

2) Կանոնակարգ 1-ը լրացնել 54.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.1. Որպես բանկ վերագրանցվելու պահից հետո ողջամիտ ժամկետում բանկը մինչև վերագրանցումը գործող վարկային կազմակերպության հաճախորդներին ծանուցում է վարկային կազմակերպության գործունեության տեսակի փոփոխման գործընթացի ավարտի վերաբերյալ, հաճախորդների հետագա սպասարկման ընթացակարգերի մասին, ինչպես նաև գործող հեռախոսահամարներ, որոնց միջոցով հաճախորդները կկարողանան սպառիչ տեղեկատվություն ստանալ նշված ընթացակարգերի վերաբերյալ:»,

3) Կանոնակարգ 1-ի Հավելված 25-ի 8-րդ կետի 16-րդ ենթակետում «բողոքներին» բառը փոխարինել «բողոքների քննման և» բառերով,

4) Կանոնակարգ 1-ի Հավելված 25-ի 8-րդ կետը լրացնել 18-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18) բանկի կողմից տեղեկատվության հրապարակման և տրամադրման քաղաքականությունը, տեղեկատվության հրապարակման ուղիները, թիրախը, թարմացման հաճախականությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հոկտեմբերի 2016 թ., N 167-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566), 15.11.2016):

*«Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 131-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2000 թվականի փետրվարի 1-ի թիվ 18 և 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել վճարահաշվարկային փաստաթղթերին ներկայացվող նոր պահանջներ՝ կապված վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների տեսակների ընդլայնման հետ և սահմանել պահանջներ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերի նկատմամբ, ինչպես նաև հստակեցնել վճարահաշվարկային փաստաթղթերի կիրառման ոլորտները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և 2-րդ մասի «ե» կետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը, «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 72-րդ հոդվածներով, 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 131-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման հետ կապված քարտապանների շահերի պաշտպանության ուղղված անվտանգության կանոններ սահմանելու մասին կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կարգի 36-րդ և 40-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

2) Կարգի 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«33. Վճարային քարտի կիրառման ընթացքում ձևավորված վճարահաշվարկային փաստաթղթի (քարտային անդորրագրի) նվազագույն վավերապայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566), 15.11.2016):

3) Կարգի 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34. Սույն կարգի 31-րդ կետով սահմանված պահանջը կարող է չպահպանվել, եթե վճարահաշվարկային քարտային համակարգի կանոններով նախատեսված է հնարավորություն՝ տվյալ տեսակի վճարային քարտով կատարել առանց շփման (contactless) և քարտապանի նույնականացում չպահանջող գործարքներ:»,

4) Կարգի 39-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«39. Քարտապանին տրամադրվող քաղվածքի նվազագույն վավերապայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից:»,

5) Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «8-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ կետի 3-րդ ենթակետով» բառերով,

6) Կարգի 15-րդ կետի 3-րդ ենթակետը «սահմանված պահանջները,» բառերից հետո լրացնել «ընդ որում՝ վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններով չի կարող սահմանվել դրույթ, որի համաձայն՝ թողարկողը պատասխանատվություն չի կրում քարտապանի կողմից չվավերացված այն գործարքների համար, որոնց կատարման ժամանակ կիրառվել է ՊԻՆ կոդ, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքն իրականացվել է միկրոպրոցեսորային (չիպային) քարտի միջոցով,» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի ««էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 73-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը լրացնել 32.1 և 32.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

1) «32.1. էլեկտրոնային փողի կիրառման ընթացքում թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով ձևավորվում է էլեկտրոնային փողով գործառնությունների կատարումը հավաստող վճարահաշվարկային փաստաթուղթ՝ էլեկտրոնային փողով գործառնությունների կատարման անդորրագիր, որը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն վավերապայմանները:»,

2) «32.2. էլեկտրոնային փող թողարկողն առնվազն յուրաքանչյուր ամիս տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տրամադրելով Հաշվառման Հաշվի քաղվածք, որը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն վավերապայմանները: Քաղվածքի տրամադրման ժամկետը, պայմանները և կարգը սահմանվում են Հաճախորդի և էլեկտրոնային փող թողարկողի միջև կնքված պայմանագրով:»:

5. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի փետրվարի 1-ի ««Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար վճարումների հանձնարարականով փոխանցումների իրականացման կարգը» հաստատելու մասին» թիվ 18 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար վճարումների հանձնարարականով փոխանցումների իրականացման կարգում» (այսուհետ՝ Պարբերաբար վճարումների կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պարբերաբար վճարումների կարգի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Վճարողի կողմից ներկայացված ՊՎՀ-ն պարտադիր պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները (օրինակելի ձևը կցվում է)՝

1) ՊՎՀ-ի համարը,
2) հանձնարարականի ներկայացման ամսաթիվը,
3) այն ամսաթիվը, մինչև որն ընկած ժամանակահատվածում հանձնարարականն ուժի մեջ է գտնվելու,
4) վճարումների կատարման սկիզբը և պարբերականությունը, որտեղ հստակորեն պետք է նշված լինի, թե որ օրվանից է սկսվելու վճարի կատարումը վճարողի բանկի կողմից, և ինչպիսի պարբերականությամբ է այն կրկնվելու,
5) վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը,
6) վճարողի բանկի (մասնաճյուղի) անվանումը,
7) վճարողի հաշվի համարը վճարողի բանկում,
8) շահառուի անունը, ազգանունը կամ անվանումը,
9) շահառուի բանկի (մասնաճյուղի) անվանումը,

10) շահառուի հաշվի համարը շահառուի բանկում,
11) վճարման գումարը՝ թվերով և բառերով,
12) արժույթը՝ բառերով,
13) վճարման նպատակը,
14) վճարողի ստորագրությունը (եթե վճարողը ֆիզիկական անձ է) կամ վճարողի իրավասու անձի ստորագրությունը (եթե վճարողն իրավաբանական անձ է),
15) վճարողի հարկ վճարողի հաշվառման համարը, եթե վճարումներն ուղղված են Հայաստանի Հանրապետության բյուջե, կամ հանրային ծառայությունների համարանիշը՝ «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:»,

2) Պարբերաբար վճարումների կարգի 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Վճարողի կողմից ներկայացվող ՊՎՀ-ի փոփոխման (չեղյալ համարելու) հանձնարարականը պարտադիր պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները (օրինակելի ձևը կցվում է).

1) ՊՎՀ-ի փոփոխման (չեղյալ համարելու) հանձնարարականի համարը,
2) ՊՎՀ-ի փոփոխման (չեղյալ համարելու) հանձնարարականի ներկայացման ամսաթիվը,
3) վճարողի բանկի անվանումը,
4) վճարողի անվանումը,
5) այն ՊՎՀ-ի համարը և վճարողի բանկ ներկայացման ամսաթիվը, որը պետք է փոփոխվի կամ չեղյալ համարվի,
6) «չեղյալ համարել» տարբերակը կամ «փոփոխել» տարբերակը՝ ըստ փոփոխվող չափանիշների ցանկի,
7) վճարողի ստորագրությունը (եթե վճարողը ֆիզիկական անձ է) կամ վճարողի իրավասու անձի ստորագրությունը (եթե վճարողն իրավաբանական անձ է):»:

6. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2000 թվականի ապրիլի 25-ի ««Հայաստանի Հանրապետությունում միջոցների փոխանցումն ուղղակի դեբետագրման եղանակով իրականացնելու կարգը» հաստատելու մասին» թիվ 97 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում միջոցների փոխանցումն ուղղակի դեբետագրման եղանակով իրականացնելու կարգի» ամբողջ տեքստից հանել «և իրավաբանական անձի կնիքը» բառերը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հոկտեմբերի 2016 թ., N 168-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 168-Ն որոշմամբ

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆՎԱՁԱԳՈՒՅՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին ներկայացված՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, փոխանցելու կամ վճարելու վերաբերյալ կարգադրություն պարունակող և (կամ) վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը հաստատող, մատուցված ծառայությունների և (կամ) կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի (այսուհետ՝ վճարահաշվարկային փաստաթղթեր) վավերապայմանները և դրանց լրացման կանոնները:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմանները և դրանց լրացման կանոնները սահմանվում են սույն կարգով և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) Ֆինանսական կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված վճարահաշվարկային կազմակերպություն:
2) Ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանում՝ Ֆինանսական կազմակերպության գլխամաս և մասնաճյուղ:
3) Վճարում՝ ֆինանսական կազմակերպության միջնորդությամբ վճարողի կողմից շահառուին ուղղված վճարման (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փողով վճարման) իրականացում, որի դիմաց վճարողին տրամադրվում է գույք կամ գույքային իրավունք կամ մատուցվում է ծառայություն կամ կատարվում է աշխատանք կամ վճարում, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե:
4) Փոխանցում՝ դրամական միջոցների փոխանցում (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փողի փոխանցում, էլեկտրոնային փողի մարում բանկային հաշվին փոխանցելու միջոցով), որի դիմաց փոխանցողին չի տրամադրվում գույք կամ գույքային իրավունք, չի մատուցվում ծառայություն, չի կատարվում աշխատանք:
5) Գործարքի սպասարկումն ապահովող սարք (միջոց)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշմամբ հաստատված «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգով» սահմանված ավտոմատ ինքնասպասարկող սարք, ինչպես նաև ՊՈՍ տերմինալ, իմպրինտեր, վիրտուալ (ինտերնետ) կամ այլ էլեկտրոնային միջավայրում՝ առևտրի և (կամ) ծառայությունների մատուցման կետում վիրտուալ ՊՈՍ տերմինալ:
6) էլեկտրոնային փող, էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվ, էլեկտրոնային փողով վճարման իրականացում, էլեկտրոնային փողի փոխանցում, էլեկտրոնային փողի մարում, էլեկտրոնային փողի փոխարկում, էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման համակարգ, ծառայություն մատուցող անձ՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ով սահմանված նշանակության:
7) Վճարային քարտ, ՊՈՍ տերմինալ, ՊԻՆ կոդ, սպասարկող (merchant), առանց շփման (contactless) և քարտապանի նույնականացում չպահանջող գործարքներ՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման հետ կապված քարտապանների շահերի պաշտպանությանն ուղղված անվտանգության կանոններ սահմանելու մասին կարգով» սահմանված նշանակության:
8) Բանկային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրի հիման վրա հաճախորդի համար բացված բանկային հաշիվ:
9) Հաճախորդ՝ ցանկացած անձ, որին ֆինանսական կազմակերպությունը մատուցում է ծառայություններ:
10) Արագ փոխանցումների համակարգ՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և

համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ով սահմանված նշանակության:

11) Հարկային պարտավորություններ կրող հաշվառված հարկատու (այսուհետ՝ հաշվառված հարկատու)՝ «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաշվառված հարկ վճարող:
12) Հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ)՝ ըստ «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:
13) Հանրային ծառայությունների համարանիշ կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար (այսուհետ՝ ՀՇՀ)՝ ըստ «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

ԳԼՈՒԽ 3. ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Վճարահաշվարկային փաստաթղթերի նկատմամբ սույն կարգով սահմանված պահանջները տարածվում և կիրառվում են ֆինանսական կազմակերպության կողմից վճարումների, փոխանցումների, կանխիկի մուտքագրման և կանխիկի ելքագրման գործառնությունների իրականացման ժամանակ ձևավորվող վճարահաշվարկային փաստաթղթերի նկատմամբ:

5. Սույն կարգը սահմանում է հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները՝

1) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք պարունակում են կարգադրություն դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ և (կամ) հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը՝
   ա. Վճարման հանձնարարական,
   բ. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական,
   գ. Վճարման պահանջագիր,
   դ. Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր),
   ե. Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր),
   զ. Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր),
   է. Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր),
2) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք միայն հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը և (կամ) տեղեկատվություն են պարունակում մատուցված ծառայությունների և (կամ) կատարված գործարքների վերաբերյալ՝
   ա. Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր,
   բ. Հաշվի քաղվածք (ընդ որում՝ «Հաշվի քաղվածք» փաստաթղթի նկատմամբ սահմանված պահանջները կիրառվում են բանկային թղթակցային հաշիվների, նոր ստեղծվող ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացվող կուտակային հաշիվների, հաշվարկների իրականացման նպատակով բացվող տեխնիկական հաշիվների, իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների բանկային հաշիվների և իրավաբանական ու ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվների նկատմամբ):

6. Բացի սույն կարգով սահմանված նվազագույն վավերապայմաններից, Ֆինանսական կազմակերպությունը վճարահաշվարկային փաստաթղթերում անհրաժեշտության դեպքում կարող է կիրառել նաև այլ վավերապայմաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների և (կամ) իր ներքին ընթացակարգերով սահմանված կարգի համաձայն:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերը պետք է լինեն հայատառ հայերեն, իսկ հաճախորդի և ֆինանսական կազմակերպության միջև կնքված պայմանագրով, միջազգային համակարգերի կանոններով և (կամ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում՝ նաև այլ լեզվով:

8. Սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը կարող են կիրառվել (ներկայացվել) թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով, այդ թվում նաև՝ հեռահար սպասարկման համակարգերի միջոցով (բանկ-հաճախորդ համակարգի, ինտերնետ բանկինգի, մոբայլ բանկինգի, էլեկտրոնային փողով

հաշվարկների իրականացման համակարգի և այլնի միջոցով), ինչպես նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ: Ընդ որում՝ սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված փաստաթղթերը կիրառվում են առանց վճարային քարտի և էլեկտրոնային փողի (այդ թվում նաև՝ վերջիններիս վավերապայմանների և (կամ) տվյալների) օգտագործմամբ կատարվող գործառնություններում:

9. Ֆինանսական կազմակերպությունը սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը գործարքն իրականացնող անձին տրամադրում է հետևյալ միջոցներից առնվազն մեկի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ.

1) էլեկտրոնային եղանակով՝ հաճախորդի կողմից նախապես նշված էլեկտրոնային փոստի (e-mail) հասցեին կամ հեռախոսահամարին ուղարկելու միջոցով,
2) էլեկտրոնային եղանակով պահպանելով միայն տվյալ հաճախորդի համար հասանելի տեխնիկա-ծրագրային միջավայրում, որը թույլ է տալիս վճարահաշվարկային փաստաթուղթը տպել և դուրս բերել արտաքին կրիչի վրա կամ ուղարկել էլեկտրոնային փոստի (e-mail) հասցեին,
3) հաճախորդին թղթային եղանակով տրամադրելու միջոցով:

10. Վճարահաշվարկային փաստաթղթերի կիրառման ոլորտները սահմանված են սույն կարգով և սույն կարգի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով: Ֆինանսական կազմակերպությունը կարող է վճարման, փոխանցման, կանխիկի մուտքագրման և կանխիկի ելքագրման ժամանակ կիրառել սույն կարգով չսահմանված վճարահաշվարկային փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում:

ԳԼՈՒԽ 4. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

11. ՀՕՀ-ն պարտադիր պետք է առկա լինի և լրացվի սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերում, եթե այն կիրառվում է «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումների կամ փոխանցումների կատարման ժամանակ: Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ վճարելու ժամանակ.

1) եթե վճարում կատարող ֆիզիկական անձը կատարում է վճարում իր պարտավորությունների դիմաց և հանդիսանում է հիմնական պարտապան, ապա պարտադիր պետք է լրացվի վճարում կատարող անձի ՀՕՀ-ն,
2) եթե վճարում կատարող անձը տարբերվում է պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձից, որը հանդիսանում է հիմնական պարտապան, ապա պարտադիր պետք է լրացվի հիմնական պարտապանի ՀՕՀ-ն:

12. ՀՎՀՀ-ն պարտադիր պետք է լրացվի հաշվառված հարկատու հանդիսացող անձի պարտավորությունների կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության բյուջե ուղղված վճարումների ժամանակ, ընդ որում՝

1) եթե վճարում կատարող՝ հաշվառված հարկատու հանդիսացող անձը կատարում է վճարում իր պարտավորությունների դիմաց և հանդիսանում է հիմնական պարտապան, ապա պարտադիր պետք է լրացվի վճարում կատարող անձի ՀՎՀՀ-ն,
2) եթե վճարում կատարող անձը տարբերվում է պարտավորություններ ունեցող հաշվառված հարկատու հանդիսացող անձից՝ հիմնական պարտապանից, ապա պարտադիր պետք է լրացվի հիմնական պարտապանի ՀՎՀՀ-ն:

13. Սույն կարգով սահմանված բոլոր վճարահաշվարկային փաստաթղթերում իրավաբանական անձանց համար սահմանված պահանջները տարածվում են նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց վրա:

14. Սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերում վավերապայմանների լրացման համար գործում են հետևյալ կանոնները. Վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմաններում կիրառվող.

1) «համարը» վավերապայմանում լրացվում է տվյալ փաստաթղթի չկրկնվող (ունիկալ) համարը, ընդ որում՝ համարի ունիկալության պահանջը կարող է չպահպանվել, եթե հաճախորդը սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը ներկայացնում է թղթային եղանակով,
2) «ամսաթիվ» վավերապայմանը լրացվում է որպես «օր, ամիս, տարի»,

3) «արժույթը (բառերով կամ կոդով)» դաշտում լրացվում է գործարքի գումարի արժույթը բառերով, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը հայերեն է, կամ նշվում է տվյալ արժույթի համար սահմանված կոդը՝ ըստ ԻՍՈ (ISO) 4217 ստանդարտի, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը հայերեն չէ,
4) «գործարքի նպատակ» դաշտում նշվում է տնտեսական գործառնության բովանդակությունը: Այդ նպատակով, օրինակ, կարող է նշվել.
   ա. բյուջե ուղղված վճար, եթե վճարումն ուղղված է բյուջետային պարտավորությունների կատարմանը, կամ
   բ. սոցիալական բնույթ ունեցող վճար, եթե վճարվում է սոցիալական ապահովության պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում, կամ
   գ. ապրանքի կամ ծառայության դիմաց վճար, կամ
   դ. ֆինանսական կազմակերպության նկատմամբ մարվող պարտավորություն, կամ
   ե. վարկի մարում, կամ
   զ. կանխիկի մուտքագրում, կամ
   է. կանխիկի ելքագրում, կամ
   ը. փոխանցում և այլն:

«Գործարքի նպատակ» դաշտում կարող է լրացվել նաև սույն կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված՝ «վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» և «պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» դաշտերում լրացման ենթակա տեղեկատվությունը, եթե «վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» և «պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» դաշտերի առկայությունը և լրացումը պարտադիր չէ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված դեպքերում,

5) «ստորագրություն» վավերապայմանը սույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթում լրացվում է.
   ա. թղթային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում պարտադիր դրվում է հաճախորդի ստորագրությունը, ընդ որում՝ իրավաբանական անձանց դեպքում դրվում է իրավաբանական անձի իրավասու անձի (անձանց) ստորագրությունը (ստորագրությունները), իսկ ֆիզիկական անձանց դեպքում կարող է դրվել նաև լիազոր անձի ստորագրությունը,
   բ. էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում որպես ստորագրություն կիրառվում է ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված՝ գործարքն իրականացնող անձին նույնականացնող ծածկագիր և (կամ) այլ միջոց: Ընդ որում՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, առանց վճարային քարտի և էլեկտրոնային փողի օգտագործման, կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ կանխիկի մուտքագրում, վճարում և փոխանցում իրականացնելու դեպքում «ստորագրություն» վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե հաճախորդը տալիս է իր համաձայնությունը գործարքն իրականացնելու համար՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ համապատասխան հրահանգ տալու միջոցով,
   գ. վճարային քարտերով իրականացվող գործարքների ժամանակ «ստորագրություն» վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե կիրառվում է ՊԻՆ կոդ կամ անձի նույնականացման նպատակով՝ քարտային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագիր, որը դրվում է (կիրառվում է) գործարքն իրականացնելու պահին: Ընդ որում՝ վճարային քարտերով իրականացվող գործարքների ժամանակ «ստորագրություն» վավերապայմանի պահանջը կարող է չպահպանվել, եթե վճարահաշվարկային քարտային համակարգի կանոններով նախատեսված է հնարավորություն՝ տվյալ տեսակի վճարային քարտով կատարել առանց շփման (contactless) և քարտապանի նույնականացում չպահանջող գործարքներ,
   դ. էլեկտրոնային փողերի միջոցով իրականացվող գործարքների ժամանակ «ստորագրությունը» վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե կիրառվում է էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի տիրոջը նույնականացնող՝ էլեկտրոնային փողերով հաշվարկների իրականացման համակարգի կանոններով նախատեսված ծածկագիր, որը դրվում է (կիրառվում է) գործարքը իրականացնելու պահին,

6) «Վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» դաշտում լրացվում է վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի բնութագրիչները՝ վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի կազմման ամսաթիվը, փաստաթղթի տեսակի անվանումը և (կամ) այդ փաստաթղթի կոդը, փաստաթղթի սերիան և (կամ) համարը և այլ տվյալներ: Սույն ենթակետում նշված տվյալներից յուրաքանչյուրը

լրացվում է առկայության դեպքում: Ընդ որում՝ որպես վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի տեսակ կարող է նշվել.

ա. պայմանագիր, կամ

բ. հարկային հաշվետվության ձև, կամ

գ. մաքսային հայտարարագիր, կամ

դ. դատական ակտ, կամ

ե. վարչական ակտ, կամ

զ. այլ փաստաթղթեր,

7) «Պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» վավերապայմանը ներառում է վճարվող «պարտավորության տեսակը» և «ժամանակահատվածը» դաշտերում լրացվող տեղեկատվությունը.

ա. «Պարտավորության տեսակը» դաշտում կարող է լրացվել.

ա) ընթացիկ ժամանակահատվածի համար կամավոր վճարում, կամ

բ) կամավոր հարկային վճարումներ անցած ժամկետների համար, կամ

գ) հարկային մարմինների պահանջի դիմաց կատարված վճարում անցած ժամկետների համար, կամ

դ) հետաձգված պարտավորության մարում, կամ

ե) հաշվարկված տույժի (տուգանքի) վճարում, կամ

զ) այլ պարտավորություններ,

բ. «ժամանակահատվածը» դաշտում լրացվում է վճարվող պարտավորության հետ կապված այն ժամանակահատվածի սկիզբը և (կամ) վերջը, որի ընթացքում առաջացած պարտավորությունների համար կատարվում է վճարումը: Ժամանակահատվածի սկիզբը և (կամ) վերջը նշվում է օր/ամիս/տարի սկզբունքով (DDMMYYYY): Եթե վճարումը կատարվում է որոշակի օրվա դրությամբ, որտեղ ժամանակահատված չի նշվում, ապա լրացվում է միայն այդ ամսաթիվը՝ որպես ժամանակահատվածի վերջ,

8) «Անունը, ազգանունը կամ անվանումը» վավերապայմանում լրացվում է գործարքն իրականացնող անձի անունը և ազգանունը՝ ֆիզիկական անձ լինելու դեպքում կամ անվանումը՝ իրավաբանական անձ լինելու դեպքում,

9) «Միջնորդավճարը» դաշտում ֆինանսական կազմակերպության կողմից նշվում է գործարքի կատարման համար գանձվող միջնորդավճարը՝ գումարային արտահայտությամբ կամ վճարվող, փոխանցվող, մուտքագրվող կամ ելքագրվող գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ,

10) «Գումարը (թվերով և (կամ) բառերով)» դաշտում լրացվում է վճարվող, փոխանցվող, մուտքագրվող կամ ելքագրվող գումարը՝ թվերով և բառերով, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը ներկայացվել կամ տրամադրվել է թղթային եղանակով, հակառակ դեպքում, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը ներկայացվել կամ տրամադրվել է էլեկտրոնային եղանակով, նշվում է գումարը՝ թվերով և (կամ) բառերով:

ԳԼՈՒԽ 5. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

15. Ֆինանսական կազմակերպությունը «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը կիրառում է հաճախորդի կողմից ֆինանսական կազմակերպությանը ներկայացված՝ վճարման կամ փոխանցման կարգադրության ընդունման և վերջինիս պահանջների համաձայն կրեդիտային փոխանցումներ կատարելիս.

1) երբ վճարումը կամ փոխանցումը կատարվում է անկանխիկ եղանակով վճարողի բանկային հաշվից, որի արդյունքում կրեդիտագրվում է շահառուի բանկային հաշիվը, կամ

2) վճարողի կողմից կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ, որի արդյունքում կրեդիտագրվում է շահառուի բանկային հաշիվը:

16. «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը կազմվում է երկու օրինակից՝ մեկը պահվում է ֆինանսական կազմակերպությունում, իսկ մյուսը տրվում է հաճախորդին, եթե հաճախորդին չի տրամադրվում գործարքի կատարումը հավաստող այլ փաստաթուղթ (օրինակ՝ անդորրագիր): Ընդ որում՝ հաճախորդին տրամադրվող վճարման հանձնարարականով կատարված գործարքի կատարումը հավաստող փաստաթուղթը պետք է առնվազն պարունակի այն դաշտերը, որոնք լրացվել են վճարման հանձնարարականում՝ բացառությամբ «վճարողի ստորագրությունը» և «վճարողի կնիքը» դաշտերի:

17. «Վճարման հանձնարարական» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Վճարման հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

ՀՀ	«Վճարման հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը	Դաշտի լրացման պահանջը, երբ վճարման հանձնարարականը ներկայացնողը՝ վճարողը, վճարում է իր պարտավորությունների դիմաց կամ փոխանցում է գումար իր անունից	Դաշտի լրացման պահանջը, երբ վճարողը տարբերվում է հիմնական պարտապանից
1	2	3	4	5
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2	վճարման հանձնարարականի համարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3	վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
4	շահառուին վճարման ամսաթիվը	պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
5	կատարման ամսաթիվը	պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
6	վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում	պարտադիր ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում
7	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
8	վճարողի բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր վճարողի բանկային հաշվից վճարում կամ փոխանցում իրականացնելու դեպքում	պարտադիր վճարողի բանկային հաշվից վճարում կամ փոխանցում իրականացնելու դեպքում
9	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	պարտադիր բյուջե ուղղված վճարումների կատարման դեպքում, երբ վճարողը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր	ոչ պարտադիր
10	վճարողի ՀՕՀ	պարտադիր	պարտադիր «Հանրային ծառայությունների հաշվարկիչի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, երբ վճարողը ֆիզիկական անձ է	ոչ պարտադիր
11	շահառուի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
12	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
13	շահառուի բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
14	շահառուի ՀՕՀ	պարտադիր	պարտադիր «Հանրային ծառայությունների հաշվարկիչի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում	պարտադիր «Հանրային ծառայությունների հաշվարկիչի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում
15	գումարը (թվերով և (կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
16	արժույթը (բառերով կամ կոդով)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
17	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
18	հիմնական պարտապանի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	-	պարտադիր
19	հիմնական պարտապանի ՀՎՀՀ	պարտադիր	-	պարտադիր բյուջե ուղղված վճարումների կատարման դեպքում, երբ հիմնական պարտապանը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր

20	հիմնական պարտապանի ՀՁՀ	պարտադիր	-	պարտադիր «Հանրային ծառայություններ-ի համարանիշի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքե-րում, երբ հիմնական պարտա-պանը ֆիզիկական անձ է
21	վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
22	պարտավորության տեսակը և ժամանակահատվածը	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
23	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
24	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
	վճարողի կնիքը	պարտադիր վճարման հանձնարարա-կանը թղթային եղանա-կով ներկայացնելու դեպքում	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
25	վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազ-մակերպության գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխա-տակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
26	վճարման հանձնարարականի ստացման ամսաթիվը և ժամը	պարտադիր վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր ֆինանսական կազմակերպության աշխատակցի կողմից նշվում է վճարման հանձնարարականի ստացման ամսաթիվը և ժամը՝ վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնե-լու դեպքում	պարտադիր ֆինանսական կազմակերպու-թյան աշխատակցի կողմից նշվում է վճարման հանձնա-րարականի ստացման ամսա-թիվը և ժամը՝ վճարման հանձ-նարարականը թղթային եղա-նակով ներկայացնելու դեպքում

2) «Վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը» դաշտում նշվում է վճարողի կողմից ֆինանսական կազմակերպությանը (ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբա-ժանմանը) վճարման հանձնարարականը ներկայացնելու ամսաթիվը, իսկ էլեկտրոնային եղանա-կով ներկայացնելու դեպքում նշվում է վճարողի կողմից այն ուղարկելու ամսաթիվը,
3) «Շահառուին վճարման ամսաթիվը» դաշտը վճարողի կողմից լրացվում է վերջինիս ցանկության դեպքում: Այս դաշտում լրացվում է շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանման) կողմից շահառուին ուղղ-ված գումարը վճարելու ամսաթիվը,
4) «Կատարման ամսաթիվը» դաշտում վճարողն անհրաժեշտության դեպքում նշում է իրեն սպասար-կող՝ վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության (ֆինանսական կազմակերպության տարածքային ստորաբաժանման) կողմից վճարման հանձնարարականի կատարման ամսաթիվը,
5) «Վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը» դաշտը պարտադիր է լրացման համար Հայաս-տանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում (այդ թվում նաև՝ վճարողի բանկային հաշվից վճարում կամ փոխանցում իրականացնելու դեպքում): Այն դեպքում, երբ վճա-րումը կամ փոխանցումը կատարվում է անկանխիկ եղանակով բանկային հաշվի դեբետագրման միջոցով, ապա այս դաշտում լրացվում է այն անձի անունը, ազգանունը կամ անվանումը, ում բանկային հաշվից իրականացվում է վճարումը կամ փոխանցումը, իսկ եթե վճարումը կամ փո-խանցումը կատարվում է կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ, ապա այս դաշտում լրացվում է այն անձի անունը, ազգանունը կամ անվանումը, ով ներկայացնում է վճարման հանձ-նարարականը,
6) «Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը» դաշտում լրացվում է ֆինանսական կազմակերպության և ֆինանսական կազմակերպության այն տարածքային ստորա-բաժանման անվանումը, որին վճարողը ներկայացնում է վճարման հանձնարարականը: Ընդ որում, եթե վճարման հանձնարարականը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով (օրինակ՝

բանկ-հաճախորդ, ինտերնետ բանկինգ, մոբայլ բանկինգ և այլ համակարգերի միջոցով), ապա, կախված ֆինանսական կազմակերպության ներքին կանոններից, լրացվում է ֆինանսական կազմակերպության անվանումը և ֆինանսական կազմակերպության գլխամասի անվանումը կամ այն մասնաճյուղի անվանումը, որտեղ բացված բանկային հաշվից իրականացվում է միջոցների փոխանցումը,

7) «Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը» դաշտում լրացվում է ֆինանսական կազմակերպության և ֆինանսական կազմակերպության այն տարածքային ստորաբաժանման անվանումը, որում գտնվում է շահառուի՝ վճարման հանձնարարականի համաձայն կրեդիտագրման ենթակա բանկային հաշիվը: Ընդ որում՝ այս դաշտում կարող է լրացվել ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային հաշիվներ բացելու և վարելու իրավունք ունեցող ֆինանսական կազմակերպության անվանումը, այնպես էլ օտարերկրյա տարածքում բանկային հաշիվներ բացելու և վարելու իրավունք ունեցող ֆինանսական կազմակերպության անվանումը,
8) «Վճարողի բանկային հաշվի համարը» դաշտում նշվում է վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությունում վճարողի բանկային հաշվի համարը, որից փոխանցվում կամ վճարվում է գումարը: Այս դաշտը կարող է չլրացվել, եթե փոխանցումը կամ վճարումը կատարվում է կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ,
9) «Շահառուի բանկային հաշվի համարը» դաշտում լրացվում է շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությունում շահառուի բանկային հաշվի համարը, որին պետք է մուտքագրվի գումարը,
10) «Գումարը (թվերով և (կամ) բառերով)» դաշտում լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը,
11) «Վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» և «պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» դաշտերի առկայությունը և լրացումը պարտադիր է միայն Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված դեպքերում, հակառակ դեպքում «վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» և «պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» դաշտերում լրացման ենթակա տեղեկատվությունը կարող է լրացվել «գործարքի նպատակ» դաշտում,
12) «Վճարման հանձնարարականի ստացման ամսաթիվը և ժամը» դաշտում պարտադիր նշվում են ֆինանսական կազմակերպության կողմից այդ փաստաթղթի ստացման ամսաթիվը և ժամը: Ընդ որում, ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված գործառնական ժամերից հետո ստացված վճարման հանձնարարականը համարվում է ստացված հաջորդ գործառնական օրը,
13) Եթե վճարման հանձնարարականը ներկայացվել է գործարքի կատարումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված վավերապայմաններից, վճարման հանձնարարականով կատարված գործարքը հավաստող փաստաթղթում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 6. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

18. Ֆինանսական կազմակերպությունը «Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական» փաստաթուղթը կիրառում է վճարման հանձնարարականով նախատեսված գումարի փոխանցումը կամ վճարումը դադարեցնելու դեպքում՝ վճարման հանձնարարականը ներկայացնողի կամ դատարանի կողմից ընդունված որոշման հիման վրա:

19. «Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը» կազմվում է երկու օրինակից՝ մեկը պահվում է ֆինանսական կազմակերպությունում, իսկ մյուսը տրվում է հաճախորդին, եթե հաճախորդին չի տրամադրվում վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ներկայացումը հավաստող այլ փաստաթուղթ: Ընդ որում՝ հաճախորդին տրամադրվող վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ներկայացումը հավաստող փաստաթուղթը պետք է առնվազն պարունակի այն դաշտերը, որոնք լրացվել են վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականում, բացառությամբ «վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի ստորագրությունը» և «վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի կնիքը» դաշտերի:

20. «Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը	Դաշտի լրացման պահանջը
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի համարը	պարտադիր	պարտադիր
3	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր
5	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր վճարումը կամ փոխանցումը բանկային հաշվի միջոցով իրականացված լինելու դեպքում
6	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
7	չեղյալ համարելու ենթակա վճարման հանձնարարականի համարը	պարտադիր	պարտադիր
8	չեղյալ համարելու ենթակա վճարման հանձնարարականի ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
9	չեղյալ համարելու ենթակա վճարման հանձնարարականի նկարագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր
10	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու պատճառը	պարտադիր	ոչ պարտադիր
11	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր
12	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր
	վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացնողի կնիքը	պարտադիր հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	ոչ պարտադիր
13	հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
14	հանձնարարականի ստացման ամսաթիվը և ժամը	պարտադիր հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր ֆինանսական կազմակերպության աշխատակցի կողմից նշվում է վճարման հանձնարարականի ստացման ամսաթիվը և ժամը՝ հանձնարարականը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում

2) Եթե վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը ներկայացվել է գործարքի կատարումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված վավերապայմաններից, վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ներկայացումը հավաստող փաստաթղթում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 7. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

21. Ֆինանսական կազմակերպությունը «Վճարման պահանջագիր» փաստաթուղթը կիրառում է շահառուի կողմից իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպության միջոցով անկանխիկ եղանակով վճարողից գումար պահանջելու ժամանակ՝ վճարողի կողմից ակցեպտավորմամբ կամ առանց ակցեպտի:

22. «Վճարման պահանջագիր» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Վճարման պահանջագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Վճարման պահանջագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը	Դաշտի լրացման պահանջը
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր
3	վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	վճարողի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր
5	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
6	վճարողի բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր
7	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր
8	վճարողի ՀՕՀ	պարտադիր	ոչ պարտադիր
9	շահառուի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր
10	շահառուի ՀՕՀ	պարտադիր	պարտադիր «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, երբ շահառուն ֆիզիկական անձ է
11	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր
12	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
13	շահառուի բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր
14	գումարը (թվերով և (կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր
15	ակցեպտավորված գումարը (թվերով և (կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր վճարողի կողմից մասնակի ակցեպտավորման դեպքում
16	արժույթը (բառերով կամ կոդով)	պարտադիր	պարտադիր
17	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
18	վճարման կատարման հիմքերը	պարտադիր	պարտադիր
19	վճարման պայմանները	պարտադիր	պարտադիր
20	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր
21	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարողի կողմից վճարման պահանջագրի ակցեպտավորման դեպքում
	վճարողի կնիքը	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	ոչ պարտադիր
22	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր
	շահառուի կնիքը	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	ոչ պարտադիր
23	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում
24	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում

2) «Վճարման կատարման հիմքերը» դաշտում լրացվում է շահառուի կողմից վճարողին վճարման պահանջագիր ներկայացնելու հիմքերը: Կարող է լրացվել, օրինակ, վճարողի և շահառուի միջև կնքված պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը, ապրանքների առաքման և (կամ) ծառայությունների մատուցման փաստը հավաստող փաստաթղթի տվյալները կամ այն փաստաթղթի կամ իրավական ակտի տվյալները, որի հիման վրա կարող է կատարվել անակցեպտ գանձում,

3) «Վճարման պայմանները» դաշտում լրացվում է «ակցեպտավորված վճարում», եթե վճարման կատարման համար անհրաժեշտ է վճարողի կողմից ակցեպտավորում կամ «անակցեպտ գանձում», եթե վճարողի բանկային հաշվից միջոցները պետք է գանձվեն անակցեպտ կարգով,
4) «Գումարը (թվերով և (կամ) բառերով)» դաշտում լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը,
5) «Ակցեպտավորված գումարը (թվերով և (կամ) բառերով)» դաշտը լրացվում է վճարողի կողմից, եթե վճարողը վճարման պահանջագրում նշված գումարը ակցեպտավորել է մասնակիորեն:

ԳԼՈՒԽ 8. ՄՈՒՏՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՄՈՒՏՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ, ՄՈՒՏՔԻ ԱՆԴՈՐԱԳԻՐ, ՄՈՒՏՔԻ ՕՐԴԵՐ)

23. Ֆինանսական կազմակերպությունը «Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր)» փաստաթուղթը կիրառում է՝
1) հաճախորդի կողմից կանխիկի միջոցով բանկային հաշվի համալրման դեպքում,
2) ինկասացիոն կազմակերպությունների կողմից ֆինանսական կազմակերպության դրամարկղ և (կամ) բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման դեպքում,
3) բանկի աշխատակիցների կողմից կազմակերպության դրամարկղ և (կամ) բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման դեպքում,
4) տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայության (օրինակ՝ քաղվածքի տրամադրում) համար կանխիկով վճարման դեպքում, ինչպես նաև տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրված վարկի մարմանն ուղղված վճարումների կատարման դեպքում:

24. «Մուտքի հայտարարությունը» բաղկացած է երեք փաստաթղթից՝ Մուտքի հայտարարագրից, Մուտքի անդորրագրից և Մուտքի օրդերից: Մուտքի անդորրագիրը տրամադրվում է կանխիկի մուտքագրում իրականացնող անձին, որը հավաստում է գործարքի կատարումը, իսկ Մուտքի հայտարարագիրը և Մուտքի օրդերը պահվում են ֆինանսական կազմակերպության համապատասխան ստորաբաժանումներում, ընդ որում՝ Մուտքի օրդերը կարող է բացակայել, եթե հաճախորդների սպասարկումն իրականացնող ստորաբաժանումն իրականացնում է նաև հաշվապահության (հաշվապահական ձևակերպումների) գործառույթներ և Մուտքի հայտարարագրում լրացված են «դեբետագրվող հաշիվը» և «կրեդիտագրվող հաշիվը» դաշտերը:

25. «Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր)» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.
1) «Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը Մուտքի հայտարարագրում	Դաշտի լրացման պահանջը «Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր)» փաստաթղթում
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	փաստաթղթի համարը	պարտադիր	պարտադիր
3	փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
5	վճարողի անունը, ազգանունը	պարտադիր	պարտադիր ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում
6	շահառուի անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր
7	դեբետագրվող հաշիվը	-	պարտադիր լրացվում է միայն Մուտքի օրդերում
8	կրեդիտագրվող հաշիվը	-	պարտադիր լրացվում է միայն Մուտքի օրդերում
9	կրեդիտագրվող բանկային հաշվի համարը կամ վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները	պարտադիր	պարտադիր
10	գումարը (բառերով և (կամ)թվերով)	պարտադիր	պարտադիր

11	արժույթը (բառերով կամ կոդով)	պարտադիր	պարտադիր
12	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
13	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր
14	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր դրվում է վճարողի ստորագրությունը Մուտքի հայտարարագրում
15	ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր Մուտքի հայտարարագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր նշվում է ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև դրվում է ստորագրությունը (բացառությամբ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կողմից տրամադրված Մուտքի անդորրագրի)

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակը ցույց է տալիս տվյալ վավերապայմանին առնչվող դաշտի առկա լինելու պահանջը Մուտքի հայտարարագրում, իսկ Մուտքի անդորրագրում և Մուտքի օրդերում պարտադիր են միայն այն դաշտերի առկայությունը, որոնք լրացված են,
3) «Վճարողի անունը, ազգանունը» դաշտը պարտադիր է լրացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում,
4) «Դեբետագրվող հաշիվը» դաշտի լրացումը պարտադիր է միայն Մուտքի օրդերում: Լրացվում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանի համապատասխան հաշիվը: Սակայն եթե Մուտքի օրդերը բացակայում է, ապա այս դաշտը պետք է լրացված լինի Մուտքի հայտարարագրում,
5) «Կրեդիտագրվող հաշիվը» դաշտի լրացումը պարտադիր է միայն Մուտքի օրդերում: Լրացվում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանի համապատասխան հաշիվը: Սակայն եթե Մուտքի օրդերը բացակայում է, ապա այս դաշտը պետք է լրացված լինի Մուտքի հայտարարագրում,
6) «Կրեդիտագրվող բանկային հաշվի համարը կամ վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները» դաշտում լրացվում է՝
   ա. շահառուի բանկային հաշվի համարը, եթե կանխիկի մուտքագրումը, վճարումն իրականացվում է՝ կրեդիտագրելով շահառուի բանկային հաշիվը, կամ
   բ. վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, եթե շահառուի բանկային հաշվին կանխիկի մուտքագրում, վճարում չի իրականացվում,
7) «Վճարողի ստորագրությունը» պարտադիր է լրացման համար միայն Մուտքի հայտարարագրում,
8) Եթե կանխիկ դրամական միջոցների մուտքագրումը, վճարումը իրականացվել է գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված վավերապայմաններից, Մուտքի անդորրագրում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 9. ԵԼՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ԵԼՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ, ԵԼՔԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ, ԵԼՔԻ ՕՐԴԵՐ)

26. Ֆինանսական կազմակերպությունը «Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր)» փաստաթուղթը կիրառում է

1) հաճախորդների բանկային հաշիվներից կանխիկի ելքագրման դեպքում,
2) ինկասացիոն կազմակերպությանը ֆինանսական կազմակերպության դրամարկղից և (կամ) բանկային հաշվից դրամական միջոցների տրամադրման դեպքում,
3) բանկի կողմից իր աշխատակիցներին կանխիկ դրամական միջոցների (օրինակ՝ առհաշիվ գումարների) տրամադրման դեպքում,
4) հաճախորդներին այլ նպատակներով կանխիկ դրամական միջոցների տրամադրման դեպքում:

27. «Ելքի հայտարարությունը» բաղկացած է երեք փաստաթղթից՝ Ելքի հայտարարագրից, Ելքի անդորրագրից, Ելքի օրդերից: Ելքի անդորրագիրը տրամադրվում է այն անձին, ում տրամադրվում են կանխիկ դրամական միջոցները, իսկ Ելքի հայտարարագիրը և Ելքի օրդերը պահվում են ֆինանսական կազմակերպության համապատասխան ստորաբաժանումներում, ընդ որում՝ Ելքի օրդերը կարող է բացակայել, եթե հաճախորդների սպասարկումն իրականացնող ստորաբաժանումն իրականացնում է նաև հաշվապահության (հաշվապահական ձևակերպումների) գործառույթներ և Ելքի հայտարարագրում լրացված են «դեբետագրվող հաշիվը» և «կրեդիտագրվող հաշիվը» դաշտերը:

28. «Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր)» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

ՀՀ	«Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը Ելքի հայտարարագրում	Դաշտի լրացման պահանջը «Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր)»
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	փաստաթղթի համարը	պարտադիր	պարտադիր
3	փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	ստացողի անունը, ազգանունը	պարտադիր	պարտադիր
5	ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
6	ստացողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները	պարտադիր	պարտադիր
7	ստացողի ՀՕՀ	պարտադիր	պարտադիր «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում
8	դեբետագրվող հաշիվը	-	պարտադիր լրացվում է միայն Մուտքի օրդերում
9	կրեդիտագրվող հաշիվը	-	պարտադիր լրացվում է միայն Ելքի օրդերում
10	դեբետագրվող բանկային հաշվի համարը	պարտադիր	պարտադիր բանկային հաշվից ելքագրում իրականացնելու դեպքում
11	գումարը (թվերով և (կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր
12	արժույթը (կոդով կամ բառերով)	պարտադիր	պարտադիր
13	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
14	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր
15	ստացողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր դրվում է ստացողի ստորագրությունը Ելքի հայտարարագրում
16	ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի ստորագրությունը, անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր Ելքի հայտարարագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր նշվում է ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև դրվում է ստորագրությունը (բացառությամբ՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կողմից տրամադրված Ելքի անդորրագրի)

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակը ցույց է տալիս տվյալ վավերապայմանին առնչվող դաշտի առկա լինելու պահանջը Ելքի հայտարարագրում, իսկ Ելքի անդորրագրում և օրդերում պարտադիր են միայն այն դաշտերի առկայությունը, որոնք լրացված են,
3) «Դեբետագրվող հաշիվը» դաշտի լրացումը պարտադիր է միայն Ելքի օրդերում: Լրացվում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանի համապատասխան հաշիվը: Սակայն, եթե Ելքի օրդերը բացակայում է, ապա այս դաշտը պետք է լրացված լինի Ելքի հայտարարագրում,
4) «Կրեդիտագրվող հաշիվը» դաշտի լրացումը պարտադիր է միայն Ելքի օրդերում: Լրացվում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանի համապատասխան հաշիվը: Սակայն, եթե Ելքի օրդերը բացակայում է, ապա այս դաշտը պետք է լրացված լինի Ելքի հայտարարագրում,
5) «Դեբետագրվող բանկային հաշվի համարը» դաշտը պարտադիր լրացվում է այն դեպքում, երբ իրականացվում է բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրում,
6) Եթե կանխիկ դրամական միջոցների ելքագրումն իրականացվել է գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված վավերապայմաններից, Ելքի անդորրագրում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 10. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ (ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՆԴՈՐԱԳԻՐ)

29. Ֆինանսական կազմակերպությունը «Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթուղթը կիրառում է՝

1) արագ փոխանցումների համակարգերով փոխանցումներ իրականացնելիս,
2) առանց բանկային հաշվի բացման այլ փոխանցումներ իրականացնելիս, երբ փոխանցողը փոխանցումն իրականացնում է կանխիկ դրամական միջոցների ներկայացմամբ, իսկ ստացողը փոխանցումը ստանում է կանխիկի միջոցով:

30. «Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթուղթը կազմված է երկու փաստաթղթից՝ Դրամական միջոցների փոխանցման դիմումից և Դրամական միջոցների փոխանցման անդորրագրից: Դրամական միջոցների փոխանցման անդորրագիրը տրամադրվում է փոխանցումը նախաձեռնած հաճախորդին, իսկ փոխանցումը նախաձեռնած հաճախորդի կողմից ֆինանսական կազմակերպությանը ներկայացված Դրամական միջոցների փոխանցման դիմումը պահվում է ֆինանսական կազմակերպությունում:

31. «Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթղթի վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը Դրամական միջոցների փոխանցման դիմումում	Դաշտի լրացման պահանջը «Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր)» փաստաթղթում
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	փաստաթղթի համարը	պարտադիր	պարտադիր
3	փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	փոխանցողի անունը, ազգանունը	պարտադիր	պարտադիր
5	փոխանցողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
6	ստացողի անունը, ազգանունը	պարտադիր	պարտադիր
7	ստացողի բանկային հաշվի համարը	պարտադիր	ոչ պարտադիր
8	ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	ոչ պարտադիր
9	գումարը (թվերով և(կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր
10	արժույթը (կոդով կամ բառերով)	պարտադիր	պարտադիր
11	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
12	արագ փոխանցումների համակարգի անվանումը	պարտադիր	պարտադիր արագ փոխանցումների համակարգի միջոցով փոխանցում իրականացնելու դեպքում
13	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր
14	փոխանցողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր դրվում է փոխանցողի ստորագրությունը Դրամական միջոցների փոխանցման դիմումում
15	հսկիչ համարը	-	պարտադիր նշվում է հսկիչ համարը Դրամական միջոցների փոխանցման անդորրագրում՝ առկայության դեպքում
16	ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր Դրամական միջոցների փոխանցման դիմումը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր նշվում է ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև դրվում է ստորագրությունը (բացառությամբ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կողմից տրամադրված Դրամական միջոցների փոխանցման անդորրագրի)

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակը ցույց է տալիս տվյալ վավերապայմանին առնչվող դաշտի առկա լինելու պահանջը Դրամական միջոցների փոխանցման դիմումում, իսկ Դրամական միջոցների փոխանցման անդորրագրում պարտադիր են միայն այն դաշտերի առկայությունը, որոնք լրացված են,

3) «Հսկիչ համարը» դաշտում լրացվում է փոխանցումը նախաձեռնելու ժամանակ փոխանցողին տրամադրված բացառիկ համարը, որը ներկայացնելու դեպքում միայն ստացողը կարող է ստանալ դրամական միջոցները: Այս դաշտը լրացվում է այն դեպքում, երբ փոխանցողին իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվում է հսկիչ համար,
4) Եթե փոխանցումը իրականացվել է գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նվազագույն վավերապայմաններից, Դրամական միջոցների փոխանցման անդորրագրում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ (ՍՏԱՑՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ)

32. Ֆինանսական կազմակերպությունը «Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթուղթը կիրառում է ստացողի կողմից առանց բանկային հաշվի բացման փոխանցումներ ստանալիս (այդ թվում նաև՝ արագ փոխանցումների համակարգի միջոցով), երբ ստացողը փոխանցումը ստանում է կանխիկի միջոցով:

33. «Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթուղթը կազմված է երկու փաստաթղթից՝ Դրամական միջոցների ստացման դիմումից և Դրամական միջոցների ստացման անդորրագրից: Դրամական միջոցների ստացման անդորրագիրը տրամադրվում է դրամական միջոցները ստացողին՝ շահառուին, իսկ դրամական միջոցները ստացողի կողմից ֆինանսական կազմակերպությանը ներկայացված Դրամական միջոցների ստացման դիմումը պահվում է ֆինանսական կազմակերպությունում:

34. «Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթղթի վավերապայմանները	Դաշտի առկայության պահանջը Դրամական միջոցների ստացման դիմումում	Դաշտի լրացման պահանջը «Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր)» փաստաթղթում
1	2	3	4
1	փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր
2	փաստաթղթի համարը	պարտադիր	պարտադիր
3	փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր
4	փոխանցողի անունը, ազգանունը	պարտադիր	պարտադիր
5	փոխանցողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
6	ստացողի անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները	պարտադիր	պարտադիր
7	ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր
8	գումարը (թվերով և (կամ) բառերով)	պարտադիր	պարտադիր
9	արժույթը (կոդով կամ բառերով)	պարտադիր	պարտադիր
10	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր
11	միջնորդավճարը	պարտադիր	պարտադիր
12	արագ փոխանցումների համակարգի անվանումը	պարտադիր	պարտադիր փոխանցումը արագ փոխանցումների համակարգի միջոցով իրականացված լինելու դեպքում
13	հսկիչ համարը	պարտադիր	պարտադիր նշվում է հսկիչ համարը առկայության դեպքում
14	ստացողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր
15	ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը	պարտադիր Դրամական միջոցների ստացման դիմումը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	պարտադիր նշվում է ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև դրվում է ստորագրությունը (բացառությամբ՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կողմից տրամադրված Դրամական միջոցների ստացման անդորրագրի)

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված աղյուսակի 3-րդ սյունակը ցույց է տալիս տվյալ վավերապայմանին առնչվող դաշտի առկա լինելու պահանջը Դրամական միջոցների ստացման դիմումում, իսկ Դրամական միջոցների ստացման անդորրագրում պարտադիր են միայն այն դաշտերի առկայությունը, որոնք լրացված են,
3) «Հսկիչ համարը» դաշտում լրացվում է փոխանցումը նախաձեռնելու ժամանակ փոխանցողին տրամադրված բացառիկ համարը, որը ներկայացնելու դեպքում միայն ստացողը կարող է ստանալ դրամական միջոցները: Այս դաշտը լրացվում է այն դեպքում, երբ փոխանցողին՝ իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրվել է հսկիչ համար,
4) Եթե դրամական միջոցների ստացումն իրականացվել է գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նվազագույն վավերապայմաններից, Դրամական միջոցների ստացման անդորրագրում պետք է պարտադիր առկա լինեն նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (տեղադրման հասցեն և (կամ) նույնականացուցիչ համարը):

ԳԼՈՒԽ 12. ՎճԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ

35. Ֆինանսական կազմակերպությունը «Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր» փաստաթուղթը կիրառում է վճարային քարտերի և էլեկտրոնային փողերի (այդ թվում նաև՝ վերջիններիս վավերապայմանների և (կամ) տվյալների) կիրառման միջոցով վճարման, փոխանցման, կանխիկի մուտքագրման և կանխիկի ելքագրման գործարքներ նախաձեռնելու դեպքում: Ընդ որում՝ վիրտուալ և (կամ) այլ էլեկտրոնային միջավայրում վճարում կատարելիս կարող է անդորրագիր չձևավորվել, եթե սպասարկողի (merchant) կամ ծառայություն մատուցող անձի կողմից ձևավորվում է վճարման կատարումը հավաստող և (կամ) ծախսը հիմնավորող այլ փաստաթուղթ:

36. «Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները	Փոխանցում	Վճարում	Կանխիկի ելքագրում և կանխիկի մուտքագրում
1	2	3	4	6
1	անդորրագրի համարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2	անդորրագրի կազմման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3	վճարային քարտի վավերապայմանները կամ էլեկտրոնային փող օգտագործողի անունը, ազգանունը (անվանումը) և հաշվառման հաշվի համարը անվտանգության կանոններով թույլատրելի չափով	պարտադիր	պարտադիր բացառությամբ սույն կարգի 36-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքի	պարտադիր
4	գործարքի գումարը (թվերով)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
5	գործարքի կատարման արժույթը (բառերով կամ կոդով)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
6	գործարքի տեսակը	պարտադիր	պարտադիր	պարտադիր
7	գործարքի սպասարկման վայրը բնութագրող տվյալներ՝ գործարքի սպասարկումն իրականացնող ֆինանսական կազմակերպությանը և (կամ) սպասարկողին (merchant) և (կամ) ծառայություն մատուցող անձին նույնականացնող տվյալներ (անվանումը, հասցեն, կոնտակտային տվյալները, ինչպես նաև էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի համարը՝ էլեկտրոնային փողի դեպքում)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
8	գործարքի սպասարկումն ապահովող սարքը (միջոցը) նույնականացնող տվյալները (նույնականացուցիչը և (կամ) գտնվելու հասցեն)	պարտադիր	պարտադիր	պարտադիր
9	անվավեր ճանաչվող գործարքի անդորրագրի համարը կամ այն անդորրագրի համարը, որը հավաստում էր այն գործարքը, որի նկատմամբ կատարվել է հետվճար	-	պարտադիր անվավեր ճանաչվող գործարքի կամ հետվճարի դեպքում	-

10	շահառուի վճարային քարտի վավերապայմանները կամ շահառուի անունը, ազգանունը (անվանումը) և էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի կամ բանկային հաշվի համարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով	պարտադիր	-	-
11	գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող միջնորդավճարը	պարտադիր նշվում է գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող միջնորդավճարը՝ առկայության դեպքում	պարտադիր նշվում է գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող միջնորդավճարը՝ առկայության դեպքում	պարտադիր նշվում է գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող միջնորդավճարը՝ առկայության դեպքում
12	հաճախորդի ստորագրությունը	պարտադիր բացառությամբ սույն կարգի 14-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դեպքի	պարտադիր բացառությամբ սույն կարգի 14-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դեպքի	պարտադիր բացառությամբ սույն կարգի 14-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դեպքի
13	հավաստագրումը հաստատող կոդ	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	ոչ պարտադիր
14	հիմնական պարտապանի ՀՎՀՀ կամ ՀՈՀ	-	պարտադիր բյուջե ուղղված վճարումների դեպքում լրացվում է այն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, ում պարտավորությունների մարման համար կատարվում է վճարումը, կամ «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում լրացվում է այն ֆիզիկական անձի ՀՈՀ-ն, ում պարտավորությունների մարման համար կատարվում է վճարումը	-
15	վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ	-	ոչ պարտադիր	-
16	պարտավորության տեսակը և ժամանակահատվածը	-	ոչ պարտադիր	-

2) Վճարային քարտով կամ էլեկտրոնային փողի միջոցով իրականացվող գործարքի մերժման դեպքում անդորրագրում պարտադիր նշվում է «մերժված է», ինչպես նաև նշվում է մերժման պատճառը,
3) «Քարտի վավերապայմանները կամ էլեկտրոնային փող օգտագործողի անունը, ազգանունը (անվանումը) և հաշվառման հաշվի համարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով» դաշտում էլեկտրոնային փողով գործարքների իրականացման դեպքում կարող է չլրացվել էլեկտրոնային փող օգտագործողի անունը, ազգանունը (անվանումը), եթե էլեկտրոնային փող օգտագործողը պատշաճ ձևով նույնականացված չէ,
4) «Գործարքի տեսակը» դաշտում լրացվում է կատարված գործարքի տեսակը՝ կանխիկի ելքագրում, կանխիկի մուտքագրում, վճարում, փոխանցում, գործարքի անվավեր ճանաչում, հետվճար: Ընդ որում՝ գործարքի տեսակը նշվում է «հետվճար», երբ առևտրի և (կամ) ծառայությունների մատուցման կետում ՊՈՍ տերմինալի միջոցով կատարված գործարքը, որի գծով հաշվարկներն արդեն իրականացվել են, չեղյալացվում է՝ նախաձեռնվում է հետվճար: Գործարքի տեսակը նշվում է՝ «անվավեր ճանաչում», երբ անվավեր է ճանաչվում նախկինում կատարված այն գործարքը, որի գծով հաշվարկները դեռևս չեն իրականացվել,
5) «Անվավեր ճանաչվող գործարքի անդորրագրի համարը կամ այն անդորրագրի համարը, որը հավաստում էր այն գործարքը, որի նկատմամբ կատարվել է հետվճար» դաշտը ենթակա է պարտադիր լրացման միայն այն գործարքի դեպքում, երբ անվավեր է ճանաչվում նախկինում կատարված գործարքը կամ նախաձեռնվում է հետվճար: Այս դաշտում լրացվում է նախկինում իրականացված գործարքի կատարումը հավաստող անդորրագրի համարը,
6) «Գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող միջնորդավճարը» դաշտում, առկայության դեպքում, լրացվում է գործարքը սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող հավելյալ միջնորդավճարը, որը տարբերվում է վճարային քարտը թողարկած բանկի կողմից կիրառվող միջնորդավճարից,

7) «Հաճախորդի ստորագրությունը» դրվում է՝ կախված կիրառվող տեխնոլոգիայից, քարտային համակարգի կամ էլեկտրոնային փողերով հաշվարկների իրականացման համակարգի կանոններից կամ ՊԻՆ կոդ կիրառելու դեպքում՝ կատարվում է նշում ՊԻՆ կոդ կիրառելու վերաբերյալ,
8) «Հավաստագրումը հաստատող կոդը» դրվում է կիրառելիության դեպքում,
9) «Վճարման հիմք հանդիսացող փաստաթուղթ» և «պարտավորության տեսակը և ժամանակահատվածը» դաշտերը լրացվում են այն դեպքում, երբ վճարումն իրականացվել է պարտավորության դիմաց՝ համապատասխան հիմք հանդիսացող փաստաթղթի հիման վրա:

ԳԼՈՒԽ 13. ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔ

37. Ֆինանսական կազմակերպությունը «Հաշվի քաղվածք» փաստաթուղթը կիրառում է՝
1) բանկային թղթակցային հաշիվներին, նոր ստեղծվող ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացվող կուտակային հաշիվներին, ինչպես նաև հաշվարկների իրականացման նպատակով բացվող տեխնիկական հաշիվներին առկա դրամական միջոցների և որոշակի ժամանակահատվածում դրանց շարժի մասին տեղեկություններն արտացոլելու նպատակով,
2) իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների բանկային հաշիվներին (այդ թվում՝ քարտային հաշիվներին) և իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվներին առկա դրամական միջոցների և որոշակի ժամանակահատվածում դրանց շարժի մասին տեղեկություններն արտացոլելու նպատակով: Ընդ որում՝ սույն ենթակետով սահմանված քաղվածքի համար սահմանված նվազագույն վավերապայմանները վերաբերում են ամսական պարբերականությամբ տրամադրվող քաղվածքներին, եթե հաճախորդի և ֆինանսական կազմակերպության միջև կնքված պայմանագրով ավելի կարճ ժամկետ սահմանված չէ:

38. Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների բանկային հաշիվներին (այդ թվում՝ քարտային հաշիվներին) առկա դրամական միջոցների և որոշակի ժամանակահատվածում դրանց շարժի մասին տեղեկություններ պարունակող քաղվածքին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

39. «Հաշվի քաղվածք» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները.

1) «Հաշվի քաղվածք» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են.

Հ/Հ	«Հաշվի քաղվածք» փաստաթղթի վավերապայմանները	Թղթակցային, կուտակային և տեխնիկական հաշիվների քաղվածք	Իրավաբանական անձ հաճախորդի բանկային հաշվի քաղվածք	Իրավաբանական անձ հաճախորդի բանկային հաշվի քաղվածք, որին կցված է վճարային քարտ	էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի քաղվածք
1	2	3	4	5	6
1	քաղվածքը տրամադրող ֆինանսական կազմակերպության անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
2	քաղվածքի համարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
3	նախորդ քաղվածքի ձևավորման ամսաթիվը	պարտադիր	-	-	-
4	հաշվետիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
5	հաճախորդի հաշվեհամարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
6	վճարային քարտի համարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով	-	-	պարտադիր	-
7	կից վճարային քարտի համարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով	-	-	պարտադիր կից վճարային քարտի առկայության դեպքում	-
8	հաշվի արժույթը (բառերով կամ կոդով)	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
9	քաղվածքի ձևավորման (կազմման) ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
10	հաշվետու ժամանակաշրջան	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
11	հաշվի սկզբնական մնացորդը ժամանակահատվածի սկզբի օրվա դրությամբ (օրվա սկզբին)՝ ներառյալ արգելադրված, գրավադրված, սառեցված և վարկի (օվերդրաֆտի) չօգտագործված գումարը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր

12	*հաշվետու ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում*				
12.1	գործարքի կատարման ամսաթիվ	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
12.2	գործարքի հաշվարկի ապահովման ամսաթիվ	-	պարտադիր հեռահար սպասարկման համակարգերի միջոցով գործարք իրականացնելու դեպքում	պարտադիր	պարտադիր
12.3	գործարքի գումարը և գործարքի կատարման արժույթը	-	-	պարտադիր եթե գործարքն իրականացվել է բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով	պարտադիր էլեկտրոնային փողի փոխարկում իրականացնելու և (կամ) էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարք իրականացնելու դեպքում
12.4	գործարքի արդյունքում փաստացի դեբետագրված կամ կրեդիտագրված գումարը (թվերով) և արժույթը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
12.5	թղթակցող հաշվեհամարը	պարտադիր	-	-	-
12.6	փոխարժեքը	պարտադիր եթե փոխանցվող (վճարվող) գումարի արժույթը տարբերվում է բանկային հաշվի արժույթից	պարտադիր եթե փոխանցվող (վճարվող) գումարի արժույթը տարբերվում է բանկային հաշվի արժույթից	պարտադիր եթե գործարքն իրականացվել է բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով	պարտադիր էլեկտրոնային փողի փոխարկում իրականացնելու և (կամ) էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարք իրականացնելու դեպքում
12.7	գործարքի նկարագրություն	-	պարտադիր	պարտադիր	պարտադիր
13	հաշվով կատարված այլ գործառնությունների (սառեցումներ, ապասառեցումներ, արգելադրումներ, ապաարգելադրումներ, գրավադրումներ և նմանատիպ այլ գործարքներ, որոնց արդյունքում հաշվից փաստացի ելքագրում և մուտքագրում չի կատարվել) գումարը, արժույթը, կատարման ամսաթիվը, գործարքի նկարագրությունը	-	պարտադիր	պարտադիր	պարտադիր
14	հաշվին տրամադրված վարկային գիծ, օվերդրաֆտ	-	պարտադիր	պարտադիր	-
15	հաշվի վերջնական մնացորդը հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ (օրվա վերջին)	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
16	որից հասանելի մնացորդ. վերջնական մնացորդ՝ հանած արգելադրված, սառեցված, գրավադրված միջոցները	-	պարտադիր	պարտադիր	պարտադիր

2) «Գործարքի նկարագրություն» դաշտում լրացվում է յուրաքանչյուր գործարքի տեսակը, գործարքի սպասարկման վայրը բնութագրող տվյալներ՝ գործարքի սպասարկումն իրականացնող ֆինանսական կազմակերպությանը և (կամ) սպասարկողին (merchant) և (կամ) ծառայություն մատուցող անձին նույնականացնող տվյալներ: Եթե գործարքը կատարվել է կից վճարային քարտի միջոցով, ապա նշվում է նաև կից վճարային քարտի համարը՝ անվտանգության կանոններով թույլատրելի չափով:

Հավելված 1
«Վճարահաշվարկային գործառնությունների
կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի
նվազագույն վավերապայմանների
և դրանց լրացման կանոնների»

Վճարահաշվարկային փաստաթղթերի կիրառման ոլորտները

Ծառայության տեսակը		Կիրառվող վճարահաշվարկային փաստաթուղթը
1. Վճարում կամ փոխանցում (առանց վճարային քարտի (էլեկտրոնային փողի) կիրառման)		
1.1. Անկանխիկ եղանակով կատարվող վճարում կամ փոխանցում (վճարողի և շահառուի բանկային հաշիվների միջոցով)	վճարողը և շահառուն տարբեր ֆինանսա-կան կազմակերպությունների կողմից սպասարկվելու դեպքում	Վճարման հանձնարարական
	միևնույն ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվելու դեպքում	Վճարման հանձնարարական
1.2. Վճարողի կողմից կանխիկի տրամադրմամբ կատարվող վճարում կամ փոխանցում, երբ շահառուն վճարումը ստանում է իր բանկային հաշվի միջոցով	վճարողը և շահառուն տարբեր ֆինանսական կազմակերպությունների կողմից սպասարկվելու դեպքում	Վճարման հանձնարարական
	միևնույն ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվելու դեպքում	Վճարման հանձնարարական
1.3. Վճարման հանձնարարականի չեղյալացում		Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական
1.4. Շահառուի կողմից նախաձեռնված անկանխիկ վճարում		Վճարման պահանջագիր
1.5. Արագ փոխանցումների համակարգերի միջոցով կատարվող փոխանցումներ և փոխանցումներ, երբ փոխանցողը նախաձեռնում է կանխիկով, իսկ ստացողը գումարը ստանում է կանխիկով		Դրամական միջոցների փոխանցման դիմում «փոխանցման անդորրագիր»
1.6. Փոխանցման ստացում կանխիկով (այդ թվում նաև՝ արագ փոխանցումների համակարգերի միջոցով)		Դրամական միջոցների ստացման դիմում «ստացման անդորրագիր»
2. Կանխիկի մուտքագրում (առանց վճարային քարտի (էլեկտրոնային փողի) կիրառման)		
2.1. Հաճախորդի բանկային հաշվի համալրում		Մուտքի հայտարարություն «մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր»
2.2. Ինկասացիոն ծառայության կողմից կանխիկի մուտքագրում ֆինանսական կազմակերպության դրամարկղ և (կամ) բանկային հաշվին		Մուտքի հայտարարություն «մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր»
2.3. Բանկի աշխատակիցների կողմից կանխիկի մուտքագրում կազմակերպության դրամարկղ և (կամ) բանկային հաշվին		Մուտքի հայտարարություն «մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր»
2.4. Տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայության մատուցման համար (օրինակ՝ քաղվածքի տրամադրում) կանխիկով վճարում, տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրված վարկի մարմանն ուղղված վճարումների կատարում		Մուտքի հայտարարություն «մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր»
3. Կանխիկի ելքագրում (առանց վճարային քարտի (էլեկտրոնային փողի) կիրառման)		
3.1. Բանկային հաշվից կանխիկի ելքագրում		Ելքի հայտարարություն «ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր»
3.2. Ինկասացիոն ծառայությանը կանխիկի տրամադրում ֆինանսական կազմակերպության դրամարկղից և (կամ) բանկային հաշվից		Ելքի հայտարարություն «ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր»
3.3. Բանկի աշխատակիցներին կանխիկի տրամադրում (օրինակ՝ առհաշիվ գումարների)		Ելքի հայտարարություն «ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր»
3.4. Հաճախորդներին այլ նպատակներով կանխիկի տրամադրում		Ելքի հայտարարություն «ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր»
4. Վճարում, փոխանցում, կանխիկի մուտքագրում և ելքագրում՝ վճարային քարտի կամ էլեկտրոնային փողի (այդ թվում նաև՝ վերջիններիս վավերապայմանների և (կամ) տվյալների) կիրառմամբ		Վճարային քարտի և էլեկտրոնային փողի անդորրագիր
5. Հաշվի մնացորդի և մեկ ամսվա կտրվածքով դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում		Հաշվի քաղվածք

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կանոնակարգել վճարահաշվարկային կազմակերպությունների գլխավոր հաշվապահների թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման գործընթացը, ինչպես նաև հստակեցնել ղեկավարների թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման գործընթացը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-22-րդ հոդվածները, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

2) Կանոնակարգի 32-րդ կետի 3)-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) առկա է շուրջօրյա անվտանգության ազդարարման և պահպանիչ-հակահրդեհային ազդարարման գործող համակարգ:»,

3) Կանոնակարգի 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34. Այն դեպքում, երբ հեռահաղորդակցման օպերատորի տարածքում գտնվող վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղում բացակայում է դրամապահոց (չհրկիզվող պահարանների սենյակ), ապա հեռահաղորդակցման օպերատորների տարածքում բացվող մասնաճյուղի համար սույն կանոնակարգի 29-րդ կետի պահանջը կհամարվի բավարարված, եթե այն հարակից տարածքներից լինի առանձնացված, ունենա առանձին ծառայողական մուտք, որը կարող է լինել ընդհանուր հեռահաղորդակցման օպերատորի աշխատակիցների համար: Դրամարկղի (մասնաճյուղի) դիմային մասը պետք է կառուցված լինի շինանյութից և ունենա առնվազն 1-1.2 մ բարձրությամբ պատ, իսկ ապակե մասը կարող է բացակայել:»,

4) Կանոնակարգի 55-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«55. Այն դեպքում, երբ վճարահաշվարկային կազմակերպությունն ինքնուրույն է մշակել իր կողմից շահագործվող ծրագրային համակարգերը, ապա պետք է առկա լինեն.

1) հստակ մշակված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,

2) համակարգի տեղեկատվական անվտանգությանը ներկայացվող պահանջները,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566), 15.11.2016):

3) ծրագրային համակարգի մշակմանը մասնակցած հիմնական և/կամ ժամկետային պայմանագրով աշխատող աշխատակիցների ցուցակը, որտեղ պետք է նշվեն նաև նրանց զբաղեցրած պաշտոնները,
4) ծրագրի մշակման լեզուն և ինտերֆեյսը,
5) ծրագրի վերջնական շահագործվող տարբերակի ծրագրային կոդի գտնվելու վայրը,
6) թեստավորող խմբի անդամների ցուցակը, մասնագիտական որակավորումը, զբաղեցրած պաշտոնը, թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մյուս մասնակիցների ստորագրությունները,
7) այդ ծրագիրը օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների կողմից թեստավորմանը մասնակցելու փաստը հավաստող փաստաթղթերը,
8) ծրագրի վերջնական շահագործվող տարբերակի ծրագրային կոդերի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,
9) ծրագրային ապահովման օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, գրքույկներ, ձեռնարկներ, փաստաթղթեր:»,

5) Կանոնակարգը լրացնել 55.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«55.1. Այն դեպքում, երբ վճարահաշվարկային կազմակերպությունն իր կողմից շահագործվող ծրագրային համակարգերի մշակումը պատվիրակել է այլ անձին, ապա պետք է առկա լինեն՝

1) ծրագրային համակարգի վերաբերյալ վճարահաշվարկային կազմակերպության և մշակող ընկերության միջև կնքված պայմանագիր,
2) ծրագիրը մշակող անձին ներկայացված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,
3) համակարգի տեղեկատվական անվտանգությանը ներկայացվող պահանջները,
4) նոր մշակված ծրագրային ապահովման թեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են թեստավորման արդյունքները, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, կազմակերպության կառավարման իրավասու մարմնի և թեստավորման մասնակիցների ստորագրությունները,
5) կազմակերպության և մշակող ընկերության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,
6) մշակող ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,
7) մշակող ընկերության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից թողարկված վկայագիր կամ որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրված լինելը հավաստող փաստաթուղթ,
8) կազմակերպության, մշակող ընկերության և էսքրոու (Escrow) ծառայություններ մատուցող երրորդ ընկերության միջև «Գործառնական օր» ծրագրային համակարգի ծրագրային կոդերի պահուստային պահպանման և համապատասխան արտակարգ իրավիճակում Կազմակերպությանը հանձնման վերաբերյալ պայմանագիր:»,

6) Կանոնակարգի 57-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«57. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից շահագործվող սերվերները, այդ թվում նաև՝ քլիրինգի և պրոցեսինգի հետ ուղղակիորեն կապված սերվերները, պետք է պահվեն և շահագործվեն հատուկ սերվերային սենյակ(ներ)ում, որը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) լինի առանձնացված հարակից տարածքներից ոչ թափանցիկ նյութերից (օրինակ՝ չլինի ապակուց) պատրաստված պատերով,
2) սերվերային սենյակի դուռը պետք է հանդիսանա միակ ճանապարհը այնտեղ մուտք գործելու կամ դուրս գալու համար,
3) ունենա հակահրդեհային պաշտպանության համակարգ,
4) ունենա շարժման գրանցման (հայտնաբերման) համակարգ և (կամ) տվիչներ,
5) ունենա համակարգիչների բնականոն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը, օդի խոնավությունը կարգավորող և պահպանող համակարգ, ինչպես նաև օդափոխության համակարգ,
6) շուրջօրյա ռեժիմում իրականացվող տեսահսկում և տեսագրում: Ընդ որում՝ տեսահսկման համակարգը պետք է տեղադրված լինի սերվերային սենյակում և նկարահանի առնվազն վճարահաշվարկային կազմակերպության սերվերի համակարգիչ(ներ)ը, հարակից տարածքն այնպես, որ տեսանելի լինեն այդ համակարգիչ(ներ)ին մոտեցող անձինք, և հնարավորություն լինի հսկելու սերվերային սենյակում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն: Տվյալ տեսագրումները պետք է կատարվեն և արխիվացվեն կազմակերպության կողմից և պահպանվեն առնվազն 90 օր,

7) ունենա դռան ինքնաբերաբար փակման համակարգ,
8) սերվերային սենյակի մուտքի-ելքի գրանցման ընթացակարգ (առնվազն պետք է գրանցվի մուտք/ելք գործողի անուն-ազգանունը, մուտքի-ելքի ժամը և ամսաթիվը),
9) սերվերային սենյակը պետք է ունենա անխափան էլեկտրասնուցման համակարգեր, որը պետք է ապահովի ինչպես սերվերների անխափան աշխատանքը, այնպես էլ սույն կետում նշված տեսահսկման, հակահրդեհային պաշտպանության, շարժման գրանցման և հայտնաբերման, ջերմաստիճանը պահպանող, օդափոխության համակարգերի անխափան աշխատանքը, առնվազն հիմնական սերվերներից այլ վայրում գտնվող պահուստային սերվերներին անցնելու ժամանակահատվածում,
10) եթե սերվերային սենյակն ունի պատուհան, ապա այն պետք է լինի դրսից ճաղապատ և միշտ լինի փակ և կարող է բացվել միայն հիմնավոր պատճառաբանության առկայության դեպքում՝ Կազմակերպության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված գրավոր որոշման հիման վրա:»,

7) Կանոնակարգը լրացնել 57.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«57.1. Վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է՝
1) ունենա պահուստային սերվեր կամ համակարգիչ,
2) ունենա էլեկտրասնուցման պահուստային համակարգ (գեներատոր շարժիչ, արևային մարտկոց կամ այլ հավասարազոր համակարգ),
3) ունենա անխափան էլեկտրասնուցման սարքեր (յու-փի-էս), որոնց ինքնուրույն աշխատանքի ժամանակը պետք է թույլատրի իրականացնելու անցումն էլեկտրասնուցման հիմնականից պահուստային տարբերակի՝ առանց տեղեկատվության կորստի,
4) բոլոր համակարգիչներում պետք է առկա լինի հակավիրուսային որևէ համակարգ, որի տվյալների հենքը պետք է թարմացվի հակավիրուսային համակարգի հրապարակված ամենավերջին տարբերակով,
5) եթե վճարահաշվարկային կազմակերպության աշխատակիցներն ունեն միջազգային համակարգչային ցանցից (ինտերնետ) օգտվելու հնարավորություն, ապա պետք է առկա լինեն միջցանցային էկրաններ (ֆայերվոլ)՝ համապատասխան կանոններով սահմանված, որը կկատարի որոշակի տիպի տեղեկատվության հոսքի ֆիլտրում:»,

8) Կանոնակարգի 59-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«59. Վճարահաշվարկային կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը պետք է ունենան կիրառվող տեխնիկա-ծրագրային և անվտանգության ապահովման կանոնակարգման փաստաթղթեր:»,

9) Կանոնակարգի 60-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

10) Կանոնակարգի 61-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«61. Վճարահաշվարկային կազմակերպությունների տեխնիկա-ծրագրային ապահովման և անվտանգության վերաբերյալ փաստաթղթերով պետք է սահմանված լինեն դրույթներ՝ վճարային գործառնությունների, իրադարձությունների, անձանց, փաստերի և գործընթացների հետ կապված տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) անվտանգության հսկողության վերաբերյալ՝ անկախ դրանց ներկայացման ձևից, հետևյալ սկզբունքներով՝
1) տեղեկատվության օգտագործողները պետք է միարժեքորեն նույնականացվեն տեղեկատվությանը մուտքի իրավասություն ստանալու համար,
2) տեղեկատվության պաշտպանական հսկողությունը պետք է ապահովի տեղեկատվության տրամադրումը միայն նույնականացված օգտագործողներին:»,

11) Կանոնակարգի 62-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

12) Կանոնակարգի 63-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«63. Տեղեկատվական անվտանգության միջոցառումները պետք է ուղղվեն տեղեկատվական գործընթացների և դրանցում ներգրավված տեղեկատվական միջոցների բարձր պաշտպանվածության ապահովմանը: Ցանկացած ձևով ներկայացված տեղեկատվության (էլեկտրոնային, թղթային, բանավոր և այլն) և տեղեկատվական տեխնոլոգիաների ֆիզիկական պաշտպանությանը ներկայացվող հիմնական պահանջներն են՝
1) կազմակերպության կապը և կենսունակությունը ապահովող տարածքներ մուտքը թույլատրելի է միայն տվյալ համակարգի աշխատանքի համար պատասխանատու աշխատակիցներին: Այլ անձանց մուտքը կարող է իրականացվել միայն կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված փաստաթղթերի հիման վրա,

2) աշխատանքի կանոնները պետք է մշակվեն և պահպանվեն տեղեկատվության արտաքին կրիչների հետ միասին (մագնիսային, լազերային և այլ տիպի)՝ սահմանափակելով նման կրիչների տեղափոխումը և կազմակերպության տարածքից դուրսբերումը:»,

13) Կանոնակարգի 64-66 կետերն ուժը կորցրած ճանաչել,

14) Կանոնակարգի 67-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«67. Քլիրինգի և պրոցեսինգի հետ ուղղակիորեն կապված տեղեկատվության պաշտպանությանը ներկայացվող պահանջները հետևյալն են՝

1) տվյալների շտեմարան մուտք գործելու յուրաքանչյուր դեպք պետք է գրանցվի մատյանում, որը պետք է հասանելի լինի միայն տեղեկատվական անվտանգության պատասխանատուին և սերվերի (համակարգի) ադմինիստրատորին: Նշված մատյանները կարող են հասանելի լինել միայն ընթերցման համար,

2) պետք է արգելված լինի ծածկագրված տեղեկատվությունը առանց աշխատանքային անհրաժեշտության վերծանելը և պահպանելը վերծանված տեսքով, որևէ ձևով փոխանցելը այլ օգտագործողների կամ կատարել գործողություններ, որոնք կարող են բերել այդ տեղեկատվության պաշտպանվածության աստիճանի նվազեցմանը,

3) վճարահաշվարկային կազմակերպության կողմից պետք է մշակված լինեն քլիրինգի և պրոցեսինգի վերաբերյալ տեղեկատվության հետ աշխատանքի ընդհանուր կանոնները, օգտագործողների գրանցման և իրավասությունների տրամադրման կարգը:»,

15) Կանոնակարգի 69-րդ կետի 9-րդ ենթակետը «գտնվելու վայրի,» բառերից հետո լրացնել «գործունեության վայրի,» բառերով,

16) Կանոնակարգի 78-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղի գտնվելու վայրի և (կամ) գործունեության վայրի փոփոխությունները,»,

17) Կանոնակարգի 79-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

18) Կանոնակարգը 9-րդ գլխից հետո լրացնել 91 գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9[1].ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

79.1. Վճարահաշվարկային կազմակերպությունը լիցենզիա ստանալուց հետո սույն կետում նշված փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) Վճարահաշվարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող նոր ներքին իրավական ակտերի ընդունման կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխության դեպքում՝ նոր ընդունված ներքին իրավական ակտերը կամ գործող ներքին իրավական ակտերի փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող ներքին իրավական ակտերը (վճարահաշվարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը և նմանատիպ այլ փաստաթղթերը),

2) Վճարահաշվարկային կազմակերպության կամ նրա մասնաճյուղի՝ սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության և անվտանգության կամ տեխնիկա-ծրագրային պահանջների յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ այդ փոփոխությունների վերաբերյալ գրություն, որը պարունակում է հայտարարություն այն մասին, որ փոփոխված գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածությունը, տեխնիկա-ծրագրային պահանջները և (կամ) անվտանգությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված չափանիշներին,

3) Վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրությունում իրականացված փոփոխություն(ներ)ի և/կամ լրացում(ներ)ի կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու դեպքում՝ տեղեկանքում նշելով Արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցված՝ իր կանոնադրության վերջին փոփոխության ամսաթիվը:

79.2. Վճարահաշվարկային կազմակերպությունը լիցենզիա ստանալուց հետո սույն կանոնակարգի Հավելված 2-ով և Հավելված 3-ով, ինչպես նաև Հավելված 5-ի Չև 2-ով սահմանված տեղեկանքի 2.3-րդ, 3.6-րդ, 3.8-րդ, 3.9-րդ, 4.1-րդ կետերով կամ 5-9-րդ կետերով սահմանված տեղեկություններում փոփոխությունները տեղի ունենալու դեպքում՝ փոփոխության օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում է Կենտրոնական բանկ: Ընդ որում, ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով ձեռքբերված տեղեկատվության գաղտնիությունը:»,

19) Կանոնակարգի 86-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«86. Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի կամ գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը կարող է զբաղեցվել վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի կամ բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի որակավորում ունեցող ժամանակավոր պաշտոնակատարի կողմից, իսկ գլխավոր հաշվապահի պաշտոնը կարող է զբաղեցվել վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի կամ բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի որակավորում ունեցող ժամանակավոր պաշտոնակատարի կողմից:»,

20) Կանոնակարգի 101-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) սույն կանոնակարգի 43-րդ կետում սահմանված պահանջները բավարարող հիմքեր:»,

21) Կանոնակարգի 116-րդ կետում.
   1) աղյուսակի 1-ին տողի 2-րդ սյունակը «մակարդակները» բառից հետո լրացնել «կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակը» բառերով,
   2) աղյուսակի 2-րդ տողի 2-րդ սյունակում «մակարդակները» բառից հետո հանել «, կամ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող՝ հաշվապահի որակավորման վկայական» բառերը,

22) Կանոնակարգի 15-րդ և 16-րդ գլուխների վերնագրերում և ողջ տեքստում «ղեկավարների» բառից հետո հանել «(գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ)» բառերը,

23) Կանոնակարգի 132-րդ կետը «հիման վրա» բառերից հետո լրացնել՝ «՝ ընդ որում, «+» նշանը նշանակում է, որ տվյալ թեման վերաբերում է, իսկ «-» նշանը՝ չի վերաբերում» բառերով,

24) Կանոնակարգի 146-րդ կետի «5 (հինգ) տարի ժամկետով» բառերը փոխարինել «3 (երեք) տարի ժամկետով» բառերով,

25) Կանոնակարգի 164-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

26) Կանոնակարգի Հավելված 6-ի «Գրանցման վայրը» բառերը փոխարինել «Գտնվելու վայրը» բառերով,

27) Կանոնակարգի Հավելված 11-ի 4.3 կետում բոլոր «ոչ պարտադիր» բառերը փոխարինել «+» նշանով,

28) Կանոնակարգի Հավելված 14-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

Գիտելիքների և ունակությունների բնագավառները	Հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և հաշվետվությունների կազմման միասնական կանոնակարգի կիրառման տեսական և գործնական հիմունքներ	Հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և հաշվետվությունների կազմման միասնական կանոնակարգի կիրառման տեսական և գործնական հիմունքներ, գործարքների ընթացիկ փոփոխությունների հաշվառման առանձնահատկությունները	Վճարային գործիքների ընթացիկ և ֆինանսական գործարքների հաշվառման առանձնահատկությունները	Հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և հաշվետվությունների կազմման միասնական կանոնակարգի կիրառման տեսական և գործնական հիմունքներ, գործարքների ընթացիկ փոփոխությունների հաշվառման առանձնահատկությունները	Հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և հաշվետվությունների կազմման միասնական կանոնակարգի կիրառման տեսական և գործնական հիմունքներ, գործարքների ընթացիկ փոփոխությունների հաշվառման առանձնահատկությունները	Հաշվապահական (ֆինանսական) հաշվառման և հաշվետվությունների կազմման միասնական կանոնակարգի կիրառման տեսական և գործնական հիմունքներ, գործարքների ընթացիկ փոփոխությունների հաշվառման առանձնահատկությունները
1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք						
1) ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրները	+	+	+	+	+	+
2) ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը	+	+	+	+	+	+
2. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք						
1) Ընդհանուր դրույթներ	+	+	+	+	+	+
2) Վճարահաշվարկային համակարգ, վճարահաշվարկային կազմակերպություններ, վճարահաշվարկային համակարգի օպերատորը	+	+	+	+	+	+
3) Հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի բնորոշումը	+	+	+	+	+	+
4) Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը, տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկացման պայմանները	+	-	+	-	+	-
5) Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին ուղեցույց	+	-	+	-	+	-
6) Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության տրամադրումը, տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկացման պայմանները	+	-	+	-	+	-
7) Վճարահաշվարկային փաստաթուղթ, վճարային գործիք, միջոցների փոխանցում, վճարային քարտեր, էլեկտրոնային փող հասկացությունները	+	+	+	+	+	+
8) Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի պահպանումը	+	+	+	+	+	+
9) Վճարահաշվարկային ծառայություններ, վճարահաշվարկային ծառայություններ մատուցող անձինք	+	+	+	+	+	+
10) Քլիրինգ, պրոցեսինգ, վերջնահաշվարկ և զուտացում հասկացությունները	-	-	+	+	+	+
11) Վճարահաշվարկային փաստաթղթերի և զուտացման անվերադարձելիությունը, պահպանումը, զուտացման անվերադարձելիությունը, վերջնահաշվարկի իրականացումը	+	+	+	+	+	+
12) Վճարահաշվարկային համակարգի մասնակցի գործունեության ընդհատման դեպքում ֆինանսական ակտիվների օգտագործումը ՀՀ կենտրոնական բանկի, քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնող մասնակցի կողմից	+	+	+	+	+	+
13) Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունները	+	+	+	+	+	+

14) Վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները	+	+	+	+	+	+
15) Վճարահաշվարկային համակարգի գործունեության նկատմամբ վերահսկողությունը	+	+	+	+	+	+
16) Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վերահսկողությունը,	+	+	+	+	+	+
17) Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հաշվետվությունների, աուդիտային եզրակացության, տեղեկությունների ՀՀ կենտրոնական բանկ ներկայացումն ու հրապարակումը	+	+	+	+	+	+
18) Վճարահաշվարկային կազմակերպության համար սահմանվող տնտեսական նորմատիվներ և այլ պահանջներ	+	+	+	+	+	+
3. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք						
1) Բանկային ավանդ	+	+	-	-	+	+
2) Բանկային հաշիվներ	+	+	+	+	+	+
3) Կանխիկ և անկանխիկ հաշվարկները	+	+	+	+	+	+
4. «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք						
1) Բանկային գաղտնիքի հասկացությունը	+	+	+	+	+	+
2) Բանկային գաղտնիքի հրապարակումը	+	+	+	+	+	+
3) Բանկային գաղտնիքի պահպանումը, տրամադրումը և շրջանառությունը բանկերի միջև	+	+	+	+	+	+
5. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք						
1) Ընդհանուր դրույթներ	+	+	+	+	+	+
2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը	+	+	+	+	+	+
3) Լիազոր մարմինը	+	+	+	+	+	+
4) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի նպատակներով իրականացվող համագործակցությունը	+	+	+	+	+	+
5) Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին հսկողության պահանջը	+	+	+	+	+	+
6) Հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերը և ներքին դիտարկումների ստորաբաժանումը	+	-	+	-	+	-
7) Կասկածելի գործարար հարաբերությունների կամ գործարքների կասեցումը, դրանց իրականացման մերժումը և ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցների սառեցումը	+	+	+	+	+	+
8) Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և օրենսդրության խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները	+	-	+	-	+	-
9) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները բանկերում և վճարահաշվարկային կազմակերպություններ	+	+	+	+	+	+
6. Այլ						
1) Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը	+	+	+	+	+	+
2) Վճարահաշվարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների լրացման կարգը	+	+	+	+	+	+
3) Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունները	+	+	-	-	+	+
4) Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, լիցենզիայի գործողության կասեցման և ուժը կորցրած ճանաչելու ընթացակարգը	+	-	+	-	+	-
5) Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների պարտավորությունները երաշխավորող միջոցները և դրանց դեպոնացման և օգտագործման կարգը	+	+	-	-	+	+
6) Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, անվտանգության և ծրագրային պահանջները	+	-	-	-	+	-

7) Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի կրկնօրինակների տրամադրումը, լիցենզիաների գրանցամատյանի վարման ընթացակարգը	+	-	+	-	+	-
8) Վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցումը և գրանցումից հանելու ընթացակարգ	+	+	+	+	+	+
9) Վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարներին որակավորման վկայականների տրամադրման կարգը	+	+	+	+	+	+
10) Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության մեջ լրացումների կամ փոփոխությունների գրանցման կարգը	+	-	+	-	+	-
11) Վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի բացման և հաշվառման կարգը	+	-	+	-	+	-
12) Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և պահանջվող այլ տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը և ժամկետները	+	+	-	-	+	+
13) Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության, մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվության հրապարակումը	+	+	-	-	+	+
14) Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրումը	+	-	-	-	+	-
15) Վճարահաշվարկային կազմակերպություններին ներկայացվող անվտանգության պահանջները 173-Ն	+	-	+	-	+	-
16) Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների վերաբերյալ	+	+	+	+	+	+
17) ՀՀ տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ կարգ	+	+	+	+	+	+
18) Վճարունակ թղթադրամներ և մետաղադրամներ համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի	+	+	-	-	+	+
19) Գործառնական օր հասկացությունը՝ համաձայն «Վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի	+	+	+	+	+	+
20) «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18	+	-	+	-	+	-
21) «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19	+	-	+	-	+	-
22) Վճարահաշվարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը և դրա չափը	+	+	+	+	+	+
23) Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների գործունեությանը ներկայացվող տեխնիկա-ծրագրային պահանջները	-	-	+	-	+	-
24) Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և պահանջվող այլ տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը և ժամկետները	-	-	+	+	+	+
25) Վճարահաշվարկային համակարգերում հնարավոր ռիսկերի տեսակները, դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները	+	-	+	-	+	-
26) Հաշվարկների տեսակները, համախառն և զուտ հաշվարկները, դրանց տարբերություններն ու առավելությունները	+	+	+	+	+	+
27) Վերջնահաշվարկի երաշխավորման միջոցները	+	+	+	+	+	+
28) Հավաստագրում (ավտորիզացիա) և նույնականացում (պերսոնալիզացիա) հասկացությունների բնորոշումը	-	-	+	-	+	-

29) Արժութային կարգավորումը և վերահսկողությունը ՀՀ-ում	+	+	+	+	+	+
30) Ակտիվների և պասիվների կառավարում (իրացվելիության, եկամտաբերության, արտարժույթի դիրքի և ակտիվապասիվային գործառնությունների կառավարում)	+	+	+	+	+	+
7. Հաշվապահական հաշվառում և հարկային դաշտ						
1) Հաշվապահական հաշվառման կարգավորումը	+	+	+	+	+	+
2) Հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը	+	+	+	+	+	+
3) Ֆինանսական հաշվետվություններ և դրանց տարրերը	+	+	+	+	+	+
4) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները	-	+	-	+	-	+
5) Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները	-	+	-	+	-	-
6) Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը	+	+	+	+	+	+
7) Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունների հաշվապահական ձևակերպումները	-	+	-	+	-	+
8) Հիմնական միջոցների և մաշվածության հաշվառումը, վերագնահատումը	-	+	-	+	-	+
9) Ակտիվների և պարտավորությունների գույքագրում	-	+	-	+	-	+
10) Ակտիվների և պարտավորությունների գնահատում	-	+	-	+	-	+
11) Հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները	+	+	+	+	+	+
12) Հարկային արտոնությունների ձևերը, ավելացված արժեքի հարկի արտոնությունները ՀՀ-ում	+	+	+	+	+	+
13) Շահութահարկի հաշվարկման կարգը, դրույքաչափերը և վճարումը	+	+	+	+	+	+
14) Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը	+	+	+	+	+	+
15) Պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտման համար	+	+	+	+	+	+
16) Եկամուտ և ծախս համարվող տարրերն ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի	+	+	+	+	+	+
17) Գույքահարկով հարկվող օբյեկտներ	+	+	+	+	+	+
8. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների						
1) Ընդհանուր դրույթներ	+	-	+	-	+	-
2) Ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը	+	-	+	-	+	-
3) Կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, ընկերության զուտ ակտիվները	+	-	+	-	+	-
4) Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը	+	-	+	-	+	-
5) Ընկերության շահութաբաժինները	+	-	+	-	+	-
6) Ընկերության բաժնետոմսերի ռեեստրը	+	-	+	-	+	-
7) Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը ընկերության կողմից	+	-	+	-	+	-
8) Խոշոր գործարքները	+	-	+	-	+	-
9) Ընկերության գործարքներում շահագրգռվածությունը	+	-	+	-	+	-
10) Ընկերության ժողովը, խորհուրդը և գործադիր մարմինը	+	-	+	-	+	-
11) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը	+	-	+	-	+	-
12) Հաշվառումը և հաշվետվությունները, ընկերության մասին տեղեկությունները	+	-	+	-	+	-
9. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք՝ ըստ հետևյալ գլուխների						
1) Ընդհանուր դրույթներ	+	-	+	-	+	-
2) Ընկերության ստեղծումը	+	-	+	-	+	-
3) Ընկերության մասնակիցները	+	-	+	-	+	-
4) Ընկերության կանոնադրական կապիտալը	+	-	+	-	+	-
5) Ընկերության կառավարումը	+	-	+	-	+	-
6) Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	+	-	+	-	+	-

10. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ըստ հետևյալ գլուխների						
1) Հիմնական դրույթներ	+	-	-	-	+	-
2) Պահանջները և դրանց քննության կարգը	+	-	-	-	+	-
3) Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար	+	-	-	-	+	-

»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 22-ի «Դրամական (փողային) փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման գրավոր և բանավոր քննության թեմաների ցանկը հաստատելու մասին» թիվ 542-Ն որոշումը:

3. Նախքան սույն որոշումն ուժի մեջ մտնելը վճարահաշվարկային կազմակերպությունների գլխավոր հաշվապահներին տրված որակավորման վկայականները գործում են մինչև դրանցում նշված ժամկետի լրանալը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հոկտեմբերի 2016 թ., N 169-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով վարկային ռեգիստրին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերի բարելավման համար ծրագրային ապահովման միջոցների ձեռնարկումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 230-Ն որոշման 2-րդ կետում «2016 նոյեմբերի 1-ին» բառերը փոխարինել «2017 թվականի սեպտեմբերի 1-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և որի գործողությունը տարածվում է 2016 թ. նոյեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հոկտեմբերի 2016 թ., N 172-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566), 15.11.2016):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 175-րդ հոդվածի 3-րդ մասը, 176-րդ հոդվածի 2-րդ մասը, 177-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 199-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին» թիվ 242-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «176-րդ հոդվածի 2-րդ մասը» բառերը փոխարինել «175-րդ հոդվածի 3-րդ մասը, 176-րդ հոդվածի 2-րդ մասը, 177-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը» բառերով:

2. Որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***Դրամական միջոցների հաշվառման հաշիվ***՝ դրամական միջոցների հաշվառման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայում բացված հաշիվ.
2) ***Հաշվետեր***՝ անձ, որի համար (անունով) Կենտրոնական դեպոզիտարիայում սույն կանոնակարգով նախատեսված կարգով բացվել է դրամական միջոցների հաշվառման հաշիվ.
3) ***Կենտրոնական դեպոզիտարիայի հատուկ բանկային հաշիվ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում Կենտրոնական դեպոզիտարիայի անունով բացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածով նախատեսված հատուկ բանկային հաշիվ, որտեղ պահվում են միայն Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվետերերի դրամական միջոցները.
4) ***Կանոնակարգ 4/02***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02:»,

2) Կանոնակարգի 3-րդ կետը «օգտագործված» բառից հետո լրացնել «այլ» բառով, իսկ «ունեն» բառից հետո՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում,» բառերով,

3) Կանոնակարգի 4-րդ կետը 5-րդ ենթակետից հետո լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) այն կապված է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կարգավորվող շուկայում կամ դրանից դուրս կնքված գործարքների վերջնահաշվարկի, արժեթղթերի հետ կապված եկամուտների վճարման արդյունավետ ապահովման նպատակով դրամական միջոցների հաշվառման հաշիվների վարման հետ:»,

4) Կանոնակարգը 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված գործունեության տեսակի իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են սույն կանոնակարգի 4-րդ գլխով:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566)[1], 23.11.2016):

5) Կանոնակարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգը (ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի փոփոխությունները, լրացումները): Ընդ որում,

ա. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերը նկարագրվում են Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին իրավական ակտերում, որոնք կարող են լինել կարգերի, ընթացակարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլ ակտերի տեսքով,

բ. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգում բացահայտվում են լրացուցիչ գործունեության տեսակների իրականացումից բխող բոլոր էական ռիսկերը (այդ թվում՝ ֆինանսական, գործառնական, իրավական, բարի համբավի) Կենտրոնական դեպոզիտարիայի համար այդ ռիսկերի ընդունելի մակարդակը, ռիսկերի հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները,

գ. Կենտրոնական դեպոզիտարիան ապահովում է ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիությունն իր աննշնակազմին և անձնակազմի կողմից դրանց տեղեկացվածությունը իրենց կողմից իրականացվող գործառույթների մասով,

դ. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի դրույթների՝ արդեն իրականացվող լրացուցիչ գործունեության տեսակներով պայմանավորված փոփոխությունների (լրացումների կամ դրույթների դադարեցման) վերաբերյալ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:»,

6) Կանոնակարգը 3-րդ գլխից հետո լրացնել նոր 4-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Դրամական միջոցների հաշվառման հաշիվները (այսուհետ սույն գլխում նաև՝ հաշվառման հաշիվներ) պետք է բացվեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 178-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների դրամական հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին» կարգի համաձայն:

8. Հաշվառման հաշիվներում առկա տեղեկությունը հավասարազոր է բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությանը: Այն կարող է հրապարակվել (տեղեկությունը (կամ դրա ցանկացած կրիչը) բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը, երրորդ անձին հայտնի դարձնելը կամ տարածելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը (թույլատրելը, չխոչընդոտելը կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը)) միայն «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

9. Հաշվետերերին պատկանող դրամական միջոցների հետ կապված հաշվետերերի շահերի պաշտպանության նպատակով Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է.

1) պահպանել տեղեկատվություն, վարել այնպիսի հաշվառում, որը թույլ կտա ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր հաշվետիրոջ միջոցները այլ հաշվետերերի, ինչպես նաև իր սեփական միջոցներից,
2) պահպանել տեղեկատվությունը և վարել հաշվառումն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունը իր հաշվառմանը հանձնված և սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ պահվող հաշվետերերի դրամական միջոցներին,
3) պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ առկա՝ հաշվետերերի միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության և գրանցումների միջև՝ ապահովելով սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պարտականությունների պատշաճ կատարումը,
4) ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ հաշվետերերի դրամական միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ այդ միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար:

10. Հաշվառման հաշիվները կարող են արտահայտված լինել ՀՀ դրամով և (կամ) արտարժույթով, որտեղ հաշվառված դրամական միջոցները պահվում են սույն կանոնակարգի 18-րդ մասով նախա-

տեսված անձանց մոտ բացված համապատասխան արժույթով արտահայտված հաշիվներում: Ցանկացած պահի դրությամբ Կենտրոնական դեպոզիտարիայում բացված հաշվառման հաշիվներում հաշվառվող դրամական միջոցների հանրագումարը պետք է համապատասխանի Կենտրոնական դեպոզիտարիայի՝ սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ բացված հաշիվների մնացորդների հանրագումարին՝ ըստ յուրաքանչյուր արժույթի:

11. Սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ բացվող հաշիվներին (հաշիվներից) կարող են դրամական միջոցներ մուտքագրվել (ելքագրվել) միայն անկանխիկ եղանակով: Ընդ որում, մուտքագրվող (ելքագրվող) դրամական միջոցների արժույթը պետք է համապատասխանի մուտքագրվող (ելքագրվող) հաշվի արժույթին, այլապես հաշիվը վարող անձը մերժում է նման փոխանցման կատարումը:

12. Հաշվետիրոջ հաշվառման հաշվում հաշվառված դրամական միջոցների մնացորդը կարող է փոփոխվել հետևյալ դեպքերում՝

1) սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ բացված հաշիվներին հաշվետիրոջ անունով դրամական միջոցների փոխանցման արդյունքում,
2) մեկ հաշվետիրոջ հաշվառման հաշվում հաշվառված դրամական միջոցների պակասեցման և նույն չափով մեկ այլ հաշվետիրոջ հաշվառման հաշվում հաշվառված դրամական միջոցների ավելացման արդյունքում,
3) հաշվետիրոջ համապատասխան հանձնարարականի հիման վրա տվյալ հաշվետիրոջ հաշվառման հաշվում հաշվառված և սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ բացված հաշիվներում առկա դրամական միջոցներից փոխանցման արդյունքում,
4) հաշվետիրոջ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած դրամական պարտավորության կատարման արդյունքում, եթե դա նախատեսված է հաշվետիրոջ և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով,
5) հաշվետիրոջ և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և (կամ) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ դեպքերում:

Գործարքների շրջանակները, որոնց արդյունքում կարող են փոփոխվել հաշվառման հաշիվներում հաշվառված դրամական միջոցների մնացորդները, սահմանվում են հաշվետիրոջ և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով և (կամ) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

13. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք չունի հաշվառման հաշիվներում հաշվառված և սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված անձանց մոտ պահվող դրամական միջոցներն օգտագործել ի շահ իրեն:

14. Հաշվառման հաշիվներով գործառնությունների կատարման հանձնարարականների ձևերը և ներկայացման կարգը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով՝ պահպանելով օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով բանկերի համար սահմանված համապատասխան պահանջները (կիրառելիության դեպքում):

15. Հաշվառման հաշիվներ կարող են բացվել միայն հաշվարկային համակարգի անդամների և կենսաթոշակային ֆոնդերի համար:

16. Հաշվետերերի համար Կենտրոնական դեպոզիտարիայում կարող են բացվել հաշվառման հաշիվների հետևյալ տեսակները.

1) սեփական հաշիվ, որտեղ հաշվառվում են հաշվետիրոջը սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները,
2) հաճախորդների ամփոփ հաշիվ, որտեղ հաշվառվում են հաշվետիրոջ հաճախորդներին պատկանող դրամական միջոցները:

17. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է իր սեփական և իր հաշվետերերի դրամական միջոցները պահել առանձին բանկային (դրամական) հաշիվներում: Ընդ որում, հաշվետիրոջ դրամական միջոցների համար բացված բանկային (դրամական) հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային (դրամական) հաշիվը նախատեսված է Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվետերերի դրամական միջոցները պահելու համար:

18. Կենտրոնական դեպոզիտարիան հաշվետերերի դրամական միջոցները պահում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում կամ միջազգային կենտրոնական դեպոզիտարիաներում (Քլիրսթրիմ, Եվրոքլիր), իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համաձայնության դեպքում՝ նաև այլ ֆինանսական կազմակերպություններում: Կենսաթոշակային ֆոնդի դրամական միջոցները կարող են պահվել նաև տվյալ ֆոնդի կառավարչի կողմից ընտրված ՀՀ տարածքում գործող առևտրային բանկում: Ընդ որում՝

1) հաշվետերերի՝ Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված դրամական միջոցները (բացառությամբ սույն կետով նախատեսված կենսաթոշակային ֆոնդերի դրամական միջոցների) պետք է պահվեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված հաշվում,
2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի դեպքում հաշվետերերի դրամական միջոցները պետք է պահվեն Կենտրոնական դեպոզիտարիայի հատուկ բանկային հաշիվներում,
3) արտասահմանում բացված բանկային (դրամական) հաշիվը պետք է ըստ տվյալ երկրի օրենսդրության լինի Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարմանը հանձնված դրամական միջոցների հաշիվ:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված հատուկ բանկային հաշվում ներդրված միջոցները՝

1) կարող են օգտագործվել միայն սույն կանոնակարգով նախատեսված ուղղություններով, դեպքերում և պայմաններով,
2) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել կալանքի տակ), բռնագանձվել Կենտրոնական դեպոզիտարիայի պարտավորությունների դիմաց կամ Կենտրոնական դեպոզիտարիայի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց:

20. Դրամական միջոցների հաշվառման հաշվի վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիայի և հաճախորդի միջև կնքվող պայմանագիրը պետք է պարունակի՝

1) սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված համապատասխան ֆինանսական կազմակերպության անվանումը,
2) դրույթ առ այն, որ Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված ֆինանսական կազմակերպության մեղքով (այդ թվում՝ անվճարունակության դեպքում) առաջացած վնասների համար,
3) դրույթ առ այն, որ սույն կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված համապատասխան ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված ժամկետում վճարումների չկատարման, անվճարունակության դեպքերում Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են նման իրավիճակներում հաշվետերերի շահերի պաշտպանության համար,
4) արտասահմանյան կազմակերպությունում բացված բանկային (դրամական) հաշվի հետ կապված էական ռիսկերի համառոտ նկարագրությունը,
5) դրույթ առ այն, որ հաշվառման հաշիվը հաշվետիրոջ կողմից կարող է օգտագործվել միայն սույն կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետից բխող նպատակներով:

21. Կենտրոնական դեպոզիտարիայի՝ սույն գլխով սահմանված գործառույթների իրականացման համար ներքին հսկողության պահանջները սահմանված են սույն կանոնակարգի Հավելված 1-ով:

22. Կենտրոնական դեպոզիտարիայի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:

23. Կենտրոնական դեպոզիտարիայի ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը որոշվում է

$$Ն1 = \frac{Կ_{ընդ}}{ՌԿԱ}$$ բանաձևով,

որտեղ՝

$Կ_{ընդ}$ - ընդհանուր կապիտալն է ամսվա միջին օրական հաշվարկով, որը հաշվարկվում է սույն կանոնակարգի Հավելված 2-ի համաձայն,

ՌԿԱ = ՎՌ+25/3(ՇՌ+ԳՌ), որտեղ՝*

ՎՌ -ն վարկային ռիսկն է, որը հաշվարկվում է Կանոնակարգ 4/02-ով ներդրումային ընկերությունների համար սահմանված կարգով,

ՇՌ -ն շուկայական ռիսկն է, որը հաշվարկվում է Կանոնակարգ 4/02-ով ներդրումային ընկերությունների համար սահմանված կարգով,

ԳՌ -ն գործառնական ռիսկն է, որը հաշվարկվում է սույն կանոնակարգի Հավելված 3-ի համաձայն:

24. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով ապահովի Ն1 նորմատիվը:

25. Կենտրոնական դեպոզիտարիայի բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն2 նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս:

26. Կենտրոնական դեպոզիտարիայի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը որոշվում է

$$Ն2 = \frac{Ա_{Բի}}{Պ_{ցպ}}$$ բանաձևով,

որտեղ՝

$Ա_{բի}$ *- միջին օրական հաշվարկով բարձր իրացվելի ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է*

$$Ա_{Բի} = \frac{Ա_{Բի1} + Ա_{Բի2} + \cdots + Ա_{ԲիՆ}}{Ն}$$ *բանաձևով,*

որտեղ՝ $Ա_{Բի1}, Ա_{Բի2}, \ldots, Ա_{ԲիՆ}$ *- Կենտրոնական դեպոզիտարիայի բարձր իրացվելի ակտիվներն են, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,*

$Պ_{ցպ}$ *- միջին օրական հաշվարկով ցպահանջ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է*

$$Պ_{ցպ} = \frac{Պ_{ցպ1} + Պ_{ցպ2} + \cdots + Պ_{ցպՆ}}{Ն}$$ բանաձևով,

որտեղ՝ $Պ_{ցպ1} + Պ_{ցպ2} + \cdots + Պ_{ցպՆ}$ *- Կենտրոնական դեպոզիտարիայի ցպահանջ պարտավորություններն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է: Ցպահանջ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված ցպահանջ և մարման սահմանված ժամկետ չունեցող տոկոսները), այդ թվում ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում, համապատասխան արժույթով ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են 27-րդ կետի 8-րդ ենթակետի առաջին պարբերության համաձայն բանկերում ունեցած հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները): Սույն կանոնակարգի իմաստով ժամկետանց են այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները համարվում են ցպահանջ:*

27. Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ստորև թվարկված այն ակտիվները (առանց այդ ակտիվների (բացառությամբ սույն կետի 4-րդ, 5-րդ 6-րդ, 7-րդ և 9-րդ ենթակետերում նշված ակտիվների) գծով հաշվեգրված տոկոսների), որոնց համար չկա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման: Բարձր իրացվելի ակտիվներում ընդգրկվում են նաև սույն կետի 4-րդ, 5-րդ 6-րդ, 7-րդ և 9-րդ ենթակետերում նշված արժեթղթերը (ընթացիկ շուկայական արժեքով), որոնք ձեռք են բերվել ռեպո համաձայնագրերով և հաշվառվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» 82-րդ բաժնում: Բարձր իրացվելի ակտիվներում չեն ընդգրկվում գրավադրված, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը:

1) Կանխիկ դրամական միջոցներ (ներառյալ՝ ճանապարհին գտնվող և բանկոմատներում գտնվող դրամական միջոցները), կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր (բացառությամբ՝ ճանապարհին գտնվող վճարային փաստաթղթերի)՝ ՎԻԶԱ, ԹՈՄԱՍ ՔՈՒԿ/ՄԱՍՏԵՐ ՔԱՐԴ, ԱՄԵՐԻՔԱՆ ԷՔՍՊՐԵՍ, ՍԻՏԻՔՈՐՊ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև այլ վճարային փաստաթղթեր,
2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում հաշիվների միջոցներ, ներդրված ավանդներ (որոնց ժամկետը կամ միջոցները մինչև մարման ժամկետը պահանջի իրավունքով հետ ստանալու ժամկետը չի գերազանցում 3 աշխատանքային օրը),
3) բանկային ոսկի (ներառյալ՝ ճանապարհին գտնվող բանկային ոսկին),
4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներ, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է, և որոնք ենթակա են պարտադիր վճարման Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
5) ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշով ցածր վարկանիշից:

6) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային կազմակերպությունների կողմից տրամադրված A+(A1) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների պետական գանձապետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
7) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանիշային կազմակերպությունների տրամադրած A+(A1) և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսեր կամ Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների (որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը) կողմից թողարկված ոչ պետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,
8) ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում հաշիվներ (այդ թվում՝ անկանխիկ ոսկով). ընդ որում, վերջիններիս մեծությունը նվազեցվում է նույն բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան բանկում հաշվի մնացորդն է: Կենտրոնական դեպոզիտարիայի բարձր իրացվելի ակտիվները հաշվարկելիս ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում հաշիվներից առաջին հերթին նվազեցվում է նույն բանկի նկատմամբ ունեցած ցպահանջ պարտավորության մնացորդը, ապա՝ մնացած պարտավորությունները: Մնացած պարտավորությունները չեն նվազեցվում հաշվից, եթե արտասահմանյան բանկի՝ երկարաժամկետ ավանդների ներգրավման վարկանիշը ըստ Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանիշային կազմակերպության՝ ԲԲԲ-(Baa3) և բարձր է,
9) վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով:»,

7) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 1-ով, Հավելված 2-ով, Հավելված 3-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հոկտեմբերի 2016 թ., N 176-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 176-Ն որոշմամբ

«Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թ. սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված
Կանոնակարգ 5/09-ի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույն կանոնակարգի իմաստով ներքին հսկողության համակարգը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված գործունեության իրականացումից բխող ռիսկերի կառավարման համակարգի, ինչպես նաև դրա նկատմամբ հսկողության իրականացման միջոցառումների համալիր է:

2. Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի, ներքին հսկողական գործառույթներ իրականացնող անձանց, աշխատակիցների կողմից հայտնաբերված ներքին հսկողության համակարգի թերությունները և բացթողումները Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվում են խորհրդին:

3. Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին հսկողության համակարգը դրամական միջոցների հաշվառման վերաբերյալ առնվազն ներառում է.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից դրամական միջոցների հաշվառման հաշիվների բացման, սպասարկման և դրանցով գործարքների կատարման վերաբերյալ ընթացակարգերի սահմանումը,
2) գործարքների կատարման հետ կապված կարգադրությունների ընդունման, մշակման, կատարման և մերժման ընթացակարգերի սահմանումը,
3) հաշվառման հաշիվներով գործառնությունների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի կանխարգելման համար կիրառվող ընթացակարգերի սահմանումը,
4) Կենտրոնական դեպոզիտարիայի մոտ հաշվառվող հաշիվներով իրականացված գործարքների ծավալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի սահմանումը,
5) փաստաթղթերի պահպանման (արխիվացման) ընթացակարգերի սահմանումը,
6) չպարզաբանված, մերժված և ուշացված գործարքների մասին տեղեկությունների տրամադրման, չպարզաբանված գործարքների բացահայտմանն ուղղված միջոցառումների ընթացակարգերի սահմանումը,
7) հաշվետերերի տվյալների նույնականացման ընթացակարգերի սահմանումը,
8) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում կամ սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված կազմակերպությունների մոտ հաշիվների բացման և փակման սկզբունքների, այդ հաշիվների մնացորդների մոնիթորինգի և համադրման իրականացման պարբերականության սահմանումը:

4. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենա սույն Հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով իրականացվող գործառնությունների անընդհատության կառավարման համակարգ:

5. Կենտրոնական դեպոզիտարիան բացահայտում, գնահատում, կառավարում և նվազեցնում է հաշվառման հաշիվներով գործառնությունների անընդհատությունը (շարունակականությունը) վտանգող ռիսկերը:

6. Հաշվառման հաշիվներով գործառնությունների անընդհատության կառավարումն իրենից ներկայացնում է համալիր և ամբողջական գործընթաց, որը ներառում է այն բոլոր միջոցառումները և գործողությունները, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակի դեպքում այդ գործառնությունների անընդհատության ապահովմանը և (կամ) վերականգնմանը նախապես սահմանված ժամկետներում և ծավալով:

7. Սույն Հավելվածի իմաստով արտակարգ իրավիճակն այն իրավիճակն է, որի առաջացումը հնարավոր է, սակայն դժվար կանխատեսելի (ցածր հավանականություն ունեցող), և որը առաջացնում է կամ կարող է առաջացնել զգալի նյութական վնասներ կամ այլ բացասական հետևանքներ Կենտրոնական դեպոզիտարիայի, նրա հաշվետերերի կամ այլ շահառուների համար:

8. Հաշվառման հաշիվներով գործառնությունների անընդհատության կառավարման համակարգը նվազագույնը ներառում է.

1) գործառնությունների վերլուծությունը, այդ թվում՝ ռիսկերի գնահատումը,
2) գործառնությունների վերականգնման նպատակները և ռազմավարությունը,
3) գործառնությունների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների կառավարման և վերականգնման ծրագիրը,
4) գործառնությունների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի պարբերական թեստավորման և վերանայման ծրագիրը,
5) Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցների համար սեմինարների անցկացման և իրազեկվածության մակարդակի բարձրացման ծրագիրը:

9. Ռիսկերի գնահատման ժամանակ բացահայտվում են այն հնարավոր ռիսկերը (պատճառները), որոնք կարող են հանգեցնել գործառնությունների խափանմանը: Այդ ռիսկերի գծով հաշվի են առնվում տեղի ունենալու հավանականությունը և տեղի ունենալու դեպքում հնարավոր ազդեցությունը:

10. Վերականգնման նպատակները Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշվառման հաշիվներով գործառնությունների իրականացման նախապես սահմանված մակարդակները (ծավալներն) են, ըստ որի պետք է վերականգնվեն այդ գործառնությունները արտակարգ իրավիճակ տեղի ունենալուց հետո՝ նախապես սահմանված վերականգնման ժամկետում:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թ. սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված
Կանոնակարգ 5/09-ի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿ

1. Սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված Ն1 նորմատիվի հաշվարկման համար Կենտրոնական դեպոզիտարիայի ընդհանուր կապիտալը նրա հիմնական (առաջնային) և լրացուցիչ (երկրորդային) կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները կատարելուց հետո: Ընդ որում, ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (սույն Հավելվածի 3-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) առավելագույնը 50%-ի չափով:

2. Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնական կապիտալը հետևյալ տարրերի հանրագումարի և հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի տարբերությունն է՝

1) կանոնադրական կապիտալ
2) չբաշխված շահույթ
3) գլխավոր պահուստ:

3. Հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերն են.

1) ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս), ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքը (բացառությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի իր կողմից ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների վճարումների օգտվելու իրավունք տվող վճարումների չափով),
2) Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականությունը հանդիսացող և Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների համար չօգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցներ և այլ նյութական ակտիվներ, այդ թվում՝ գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված ակտիվների, շահագործումից դուրս այլ հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) հաշվեկշռային արժեքը՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո,
3) Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականությունը հանդիսացող և Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Սույն ենթակետի իմաստով՝ նյութական ակտիվի արժեքը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի և կապիտալ ներդրումների հանրագումարին՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, արժեզրկումից և վերագնահատումից կորուստների չափով,
4) Կենտրոնական դեպոզիտարիայի վարձակալած հիմնական միջոցի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդը,
5) այլ ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքը, եթե
   ա. ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 10 տոկոսը կամ ավելին, կամ
   բ. ներդրումը փոքր է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 10 տոկոսից, սակայն գերազանցում է Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 15 տոկոսը, կամ
   գ. բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումները գերազանցում են Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնական կապիտալի հաշվեկշռային կապիտալի 60 տոկոսը:

4. Կենտրոնական դեպոզիտարիայի լրացուցիչ կապիտալը բաղկացած է.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականություն հանդիսացող և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից աճից,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականություն հանդիսացող և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների մատուցման համար օգտագործվող այլ համապարփակ եկամտի ստորև նշված տարրերից.
   ա. շենքերի և շինությունների վերագնահատումից աճից,
   բ. այլ հիմնական միջոցների վերագնահատումից աճից,
   գ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած շահույթից/վնասից,
   դ. մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթից/վնասից,
   ե. ոչ նյութական ակտիվների վերագնահատումից աճից,
   զ. արտերկրյա գործառնության վերահաշվարկից փոխարժեքային տարբերություններից,
   է. դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատումից աճից,
   ը. այլ համապարփակ եկամտից:

5. Լրացուցիչ կապիտալի հաշվարկում չեն ընդգրկվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայությունների մատուցման համար չօգտագործվող նյութական ակտիվների, հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող նյութական ակտիվների՝ այլ համապարփակ եկամտի տարր հանդիսացող վերագնահատումից աճը (եկամուտը, շահույթը/վնասը):

6. Սույն կանոնակարգի իմաստով ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվներ են համարվում այն ակտիվները, որոնք Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից օգտագործվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի գործառույթների իրականացման համար: Ընդ որում, դեպոզիտար գործառույթների իրականացման համար օգտագործվող սեփական շենքեր և շինություններ (անշարժ գույք) են համարվում այն նյութական ակտիվները, որտեղ Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներ:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թ. սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված
Կանոնակարգ 5/09-ի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Գ Լ ՈՒ Խ 1

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿ

1. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով գործառնական ռիսկը հաշվարկվում է հիմնական բնութագրիչների կամ ստանդարտացված մոտեցման համաձայն:

2. Կենտրոնական դեպոզիտարիան տարին մեկ անգամ ընտրում է այն մոտեցումը (հիմնական բնութագրիչների կամ ստանդարտացված), որով պետք է հաշվարկվի գործառնական ռիսկը՝ այդ մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը: Եթե Կենտրոնական դեպոզիտարիան մեկ անգամ ընտրել է գործառնական ռիսկի հաշվարկման ստանդարտացված մոտեցումը, ապա նրան այլևս չի թույլատրվում ընտրել գործառնական ռիսկի հաշվարկման հիմնական բնութագրիչների մոտեցումը հետագա տարիների համար, առանց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հավանության:

Գ Լ ՈՒ Խ 2

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄ

3. Հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն՝ գործառնական ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԳՌ = (ՁԵ_S*Գ+ՁԵ_{S-1}*Գ+ՁԵ_{S-2}*Գ)/Ն,$$

որտեղ՝

ԳՌ - հիմնական բնութագրիչների մոտեցման համաձայն հաշվարկված գործառնական ռիսկը է,

$ՁԵ_S$ - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող տարվա հունվարից դեկտեմբերն ընկած տարվա (այսուհետև՝ հաշվետու տարի) զուտ եկամուտն է,

$ՁԵ_{S-1}$ - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող 2-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

$ՁԵ_{S-2}$ - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի հաշվարկմանը նախորդող 3-րդ հաշվետու տարվա զուտ եկամուտն է,

«Գ» = 15%,

«Ն» - վերջին երեք տարիներից 0-ից բարձր զուտ եկամուտ ունեցած տարիների թիվն է:

4. Եթե որևէ տարվա զուտ եկամուտը փոքր է 0-ից, ապա տվյալ տարվա զուտ եկամուտը չի ընդգրկվում գործառնական ռիսկի հաշվարկում:

5. Եթե հաշվետու ամսվան նախորդող երեք տարիներից յուրաքանչյուրում ներդրումային ընկերության զուտ եկամուտները փոքր կամ հավասար են եղել 0-ի, ապա տվյալ տարվա ընթացքում գործառնական ռիսկը չի հաշվարկվում:

6. Տվյալ տարվա զուտ եկամուտը հաշվարկվում է որպես Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործառույթների դիմաց ստացված եկամուտների և կատարված ծախսերի տարբերություն: Տվյալ տարվա զուտ եկամտի հաշվարկին չեն մասնակցում արժեթղթերի իրացումից ստացված շահույթը/վնասը, ինչպես նաև որպես փոխհատուցում ստացված ապահովագրական եկամուտները:

Գ Լ ՈՒ Խ 3

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

7. Ստանդարտացված մոտեցման համաձայն՝ գործառնական ռիսկի հաշվարկման նպատակով սույն հավելվածի 6-րդ կետով սահմանվող զուտ եկամուտը պետք է բաժանել հետևյալ խմբերի.

1) ***Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնական գործունեություն:*** Այս խմբում ընդգրկվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 176-րդ հոդվածով սահմանված գործառույթների գծով ձևավորված եկամուտները (ծախսերը):

2) ***Կենտրոնական դեպոզիտարիայի ոչ հիմնական գործունեություն:*** Այս խմբում ընդգրկվում են այն գործառնությունների գծով ձևավորված եկամուտները/ծախսերը, որոնք չեն ընդգրկվում սույն կետի 1-ին ենթակետում:

8. Ստանդարտացված մոտեցման համաձայն հաշվարկվող զուտ եկամտի խմբերը և դրանց համապատասխան «Գ» գործակիցները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

N	Զուտ եկամտի խմբեր	Գ	
1	Կենտրոնական դեպոզիտարիայի հիմնական գործունեություն	Գ1	14%
2	Կենտրոնական դեպոզիտարիայի ոչ հիմնական գործունեություն	Գ2	18%

9. Ստանդարտացված մոտեցման համաձայն՝ գործառնական ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԳՌ = \frac{\sum_{S=1}^{Ն}\sum_{i=1}^{3}(ՁԵ_i^S * Գ_i)}{Ն}$$

որտեղ՝

«ԳՌ» - ստանդարտացված մոտեցման համաձայն հաշվարկված գործառնական ռիսկն է,

«Ի» - սույն Հավելվածի 7-րդ կետով սահմանված զուտ եկամտի խմբերն են,

«$ՁԵ_i^S$» - «Ի»-րդ խմբի համար հաշվարկված դրական զուտ եկամուտն է նորմատիվի հաշվարկմանը նախորդող «Տ»-րդ հաշվետու տարում,

«ԳԻ» - սույն Հավելվածի 8-րդ կետով սահմանված «Ի»-րդ խմբի «Գ» գործակիցն է,

«Տ» - նորմատիվի հաշվարկմանը նախորդող հաշվետու տարիներն են,

«Ն» - վերջին երեք տարիների՝ 0-ից բարձր զուտ եկամուտ ունեցած հաշվետու տարիների թիվն է:

10. Եթե որևէ խմբի ինչ-որ հաշվետու տարվա համար հաշվարկված զուտ եկամուտը փոքր է 0-ից, ապա վերջինիս մեծությունը չի ընդգրկվում գործառնական ռիսկի հաշվարկում:

11. Սույն Հավելվածի 7-րդ կետով սահմանված խմբերի զուտ եկամուտը հաշվարկվում է որպես տվյալ խմբի գծով ձևավորված զուտ տոկոսային եկամուտների և զուտ ոչ տոկոսային եկամուտների հանրագումար: Տվյալ տարվա զուտ եկամտի հաշվարկին չեն մասնակցում արժեթղթերի իրացումից ստացված շահույթը (վնասը), ինչպես նաև որպես փոխհատուցում ստացված ապահովագրական եկամուտները:»:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 6.39-րդ կետը «կետերում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն Հավելվածի 9.4 կետի» բառերով,
2) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ը 9.3-րդ կետից հետո լրացնել նոր 9.4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 5/09) սահմանված կարգով Կենտրոնական դեպոզիտարիայում բացված հաշվառման հաշիվներում հաշվառվող դրամական միջոցների մասով Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռն ընդունվում է հավասար Կանոնակարգ 5/09-ի 18-րդ կետով նախատեսված այն անձի ռիսկի կշռին, որի մոտ փաստացի պահվում են դրամական միջոցները:»:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566)[1], 23.11.2016):

տիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/02) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ի աղյուսակ 1-ի 22-րդ կետը «նկատմամբ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հավելվածի 6.2-րդ կետի» բառերով,
2) Կանոնակարգ 4/02-ի հավելված 1-ը 6.1 կետից հետո լրացնել նոր 6.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 5/09) սահմանված կարգով Կենտրոնական դեպոզիտարիայում բացված հաշվառման հաշիվներում հաշվառվող դրամական միջոցների մասով Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը ընդունվում է հավասար Կանոնակարգ 5/09-ի 18-րդ կետով նախատեսված այն անձի ռիսկի կշռին, որի մոտ փաստացի պահվում են դրամական միջոցները:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հոկտեմբերի 2016 թ., N 177-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Խոտակերաց Սուրբ Նշան», «Սուրբ Գևորգի մասունքով խաչ», «Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2016 թ. դեկտեմբերի 1-ից շրջանառության մեջ դնել «Խոտակերաց Սուրբ Նշան», «Սուրբ Գևորգի մասունքով խաչ», «Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչ» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հոկտեմբերի 2016 թ., N 178-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566)[1], 23.11.2016):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի 25-ի թիվ 178-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՏԱԿԵՐԱՑ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է «Խոտակերաց Սուրբ Նշան» մասունքարանը, որից ներքև «ԽՈՏԱԿԵՐԱՑ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ», «KHOTAKERATS SOURB NSHAN» մակագրություններն են և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2016 ՌՆԿԵ»: Վերևի եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ», «HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են և «է» տառը:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

«ԽՈՏԱԿԵՐԱՑ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Սուրբ Գևորգ Զորավարի մասունքով խաչ-մասունքարանը, որից ներքև «ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ», «CROSS WITH THE RELICS OF SAINT GEORGE» մակագրություններն են և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2016 ՌՆԿԵ»: Վերևի եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ», «HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են և «է» տառը:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

«ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram», և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքով խաչաձև մասունքարանը, որից ներքև «ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ», «CROSS WITH THE RELICS OF SAINT JOHN THE BAPTIST» մակագրություններն են և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2016 ՌՆԿԵ»: Վերևի եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ», «HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են և «է» տառը:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	25,0 գ
Չափը	27,0 x 47,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

«ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՄԱՍՈՒՆՔՈՎ ԽԱՉ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՔՍԻԶՆԵՐԸ





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել փոխանակման կետերի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը, հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7^1-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 49-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 10) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 10-ի 5-րդ կետի 8.2-րդ և 6-րդ կետի 7.2-րդ ենթակետերում «76-րդ կետի» բառերը փոխարինել «76-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված» բառերով,

2) Կանոնակարգ 10-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Անհատ ձեռնարկատեր փոխանակման կետը գործունեության վայրի փոփոխության դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 6-րդ կետի 1-ից 5-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև 56-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերում թվարկված այն վայրի տարածքի սեփականության, անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, որտեղ պետք է գործունեություն իրականացնի անհատ ձեռնարկատեր փոխանակման կետը:»,

3) Կանոնակարգ 10-ի 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«33. Գործող փոխանակման կետի աշխատակցի որակավորման վկայականի ժամկետը լրանալու դեպքում փոխանակման կետը Կենտրոնական բանկ է ներկայացնում աշխատակցի որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով աշխատակցի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա փոխանակման կետի աշխատակցին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

4) Կանոնակարգ 10-ի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«37. Փոխանակման կետի անվանափոխության, փոխանակման կետի ներդիրում ընդգրկված աշխատակցի (աշխատակիցների) անձնագրի տվյալների փոփոխության (եթե տվյալ ներդիրի վրա նշված են աշխատակցի (աշխատակիցների) անձնագրի տվյալները), ինչպես նաև փոխանակման կետի ներդիրում նոր աշխատակցի (աշխատակիցների) ընդգրկման դեպքերում փոխանակման կետը պարտավոր է լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման համար Կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիայի ներդիրի տրամադրման կամ վերաձևակերպման դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) Կենտրոնական բանկի տրամադրած լիցենզիայի՝ վերաձևակերպման ենթակա ներդիրի բնօրինակը,
4) անձնագրի (կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) պատճենը, ինչպես նաև՝ հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթղթի պատճենը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հոկտեմբերի 25-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566)[1], 23.11.2016):

5) փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) կյանքին ու առողջությանը հասցված վնասներից ապահովագրության պայմանագրի պատճենը՝ յուրաքանչյուր աշխատակցի համար առնվազն տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով, այն փոխանակման կետերի համար, որտեղ անվտանգության ազդարարման համակարգի (այդ թվում՝ ոտնակի) կամ զինված անվտանգության փոխարեն առկա է սույն կանոնակարգի 72-րդ կետին կամ 76-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ապահովագրություն,
6) աշխատակցի մասնագիտական որակավորման վկայականի պատճենը,
7) փոխանակման կետի անվանափոխությունը հավաստող համապատասխան փաստաթղթերը: Ընդ որում՝ փոխանակման կետի անվանափոխության հետ կապված ներդիրի վերաձևակերպման դիմումը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնել փոխանակման կետի անվանափոխության հետ կապված լիցենզիայի վերաձևակերպման դիմումի (Հավելված 8) հետ միաժամանակ:

Ընդ որում, ի թիվս սույն կետի 1-ից 3-րդ ենթակետերում ներկայացված պարտադիր փաստաթղթերի, սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են միայն փոխանակման կետի ներդիրում ընդգրկված աշխատակցի անձնագրի տվյալների փոփոխության կամ փոխանակման կետի ներդիրում նոր աշխատակցի ընդգրկման դեպքերում, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը՝ միայն փոխանակման կետի ներդիրում նոր աշխատակցի ընդգրկման դեպքում, իսկ 7-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը՝ միայն փոխանակման կետի անվանափոխության դեպքում:»,

5) Կանոնակարգ 10-ի 53-րդ կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ ենթակետերը, ինչպես նաև 55-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:
6) Կանոնակարգ 10-ի 56-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կանոնակարգի ընդունումից հետո լիցենզավորվող փոխանակման կետերը և դրանց մասնաճյուղերը, գործող փոխանակման կետերի՝ սույն կանոնակարգի ընդունումից հետո լիցենզավորվող մասնաճյուղերը, ինչպես նաև գործունեության վայրի փոփոխության դեպքում գործող փոխանակման կետերը և դրանց գործող մասնաճյուղերը կարող են արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնել միայն սույն կետում թվարկված վայրերից որևէ մեկում»,

7) Կանոնակարգ 10-ը 61-րդ կետից հետո լրացնել նոր 61.1-րդ, 61.2-րդ, 61.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«61.1. Փոխանակման կետը պարտավոր է լիցենզիայի գործողության ողջ ժամանակահատվածում պահպանել իր լիցենզավորման ժամանակ գործող լիցենզավորման նվազագույն պահանջները:

61.2. Փոխանակման կետը լիցենզավորման նվազագույն պահանջների պահպանման անհնարինության դեպքում պարտավոր է 3-օրյա ժամկետում սույն կանոնակարգի 104-րդ կետով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը: Ընդ որում՝ սույն հիմքով փոխանակման կետի գործունեության ժամանակավորապես դադարեցումը չի բացառում սույն կարգի 53-րդ կետի 1-ին ենթակետի կիրառման հնարավորությունը:

61.3. Փոխանակման կետը պարտավոր է 3-օրյա ժամկետում սույն կանոնակարգի 104-րդ կետով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:»,

8) Կանոնակարգ 10-ի 78-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«78. Փոխանակման կետի դրամարկղը (առկայության դեպքում՝ նաև հաճախորդների սպասարկման տարածքը) պետք է սարքավորված լինի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգով: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի փոխանակման կետի ամբողջ տարածքում և միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի «911» ծառայությանը՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:»,

9) Կանոնակարգի 98-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Դրամարկղի դռան մոտ կատարվող գործողությունների տեսագրում ու ձայնագրում,

3) Փոխանակման կետի դրամարկղի ներսում տեղի ունեցող գործողությունների, այդ թվում՝ աշխատակիցների գործողությունների տեսագրում ու ձայնագրում,»,

10) Կանոնակարգ 10-ի 108-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«108. Աշխատանքային օրվա ցանկացած պահի Փոխանակման կետի էլեկտրոնային գրանցումների մատյանի տվյալների համաձայն հաշվարկված ՀՀ դրամի և (կամ) Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթների, ինչպես նաև՝ ռուսական ռուբլու ու վրացական լարիի հանրագումարը չի կարող մեկ միլիոն ՀՀ դրամից պակաս լինել:»,

11) Կանոնակարգ 10-ը 108-րդ կետից հետո լրացնել 108.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«108.1. Ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին փոխանակման կետում առկա դրամական միջոցները չպետք է պակաս լինեն մեկ միլիոն ՀՀ դրամից և (կամ) Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից, ինչպես նաև՝ ռուսական ռուբլուց ու վրացական լարիից (բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ փոխանակման կետը ժամանակավոր դադարեցնում է իր գործունեությունը, որի ժամանակ ամբողջ գումարը կարող է ելքագրվել): Փոխանակման կետում առկա դրամական միջոցները դրամարկղում առկա ամբողջ գումարի, դրամապահոցի մնացորդի ու ինկասացված գումարների հանրագումարն է:»,

12) Կանոնակարգ 10-ի 117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«117. Փոխանակման կետի կողմից արտարժույթի վաճառքի մեկանգամյա գործարքի գումարը (այդ թվում՝ մեկ անձի հետ տարբեր արտարժույթներով իրականացվող մեկանգամյա արտարժույթի վաճառքի գործարքների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ) չորս հարյուր հազար դրամը գերազանցելու դեպքում այդ գործարքների վերաբերյալ փոխանակման կետը կազմում է օրական հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի: Ընդ որում, յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար Հավելված 19-ը պետք է կազմվի մինչև տվյալ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Փոխանակման կետը պարտավոր է սույն կետով սահմանված յուրաքանչյուր գործարքի դեպքում հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և սույն կետով սահմանված օրական հաշվետվությունները պահպանել առնվազն 1 տարի, ինչպես նաև Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման պահանջով Կենտրոնական բանկ ներկայացնել վերոնշյալ հաշվետվությունը:»,

13) Կանոնակարգ 10-ը 119-րդ կետից հետո լրացնել 119.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«119.1. Փոխանակման կետերին արգելվում է մեկ հաճախորդի հետ գործարք իրականացնելու ընթացքում գործարք սկսել մեկ այլ հաճախորդի հետ: Ընդ որում, սույն կանոնակարգի իմաստով մեկ գործարքի սկիզբ է համարվում հաճախորդի կողմից փոխարկվող գումարը փոխանակման կետի փոխանցման արկղ դնելու պահը, իսկ գործարքի ավարտ՝ Փոխանակման կետի կողմից փոխարկված գումարը անդորրագրի հետ միասին հաճախորդին տրամադրելու պահը:»,

14) Կանոնակարգ 10-ը 123-րդ կետից հետո լրացնել 123.1-րդ, 123.2-րդ, 123.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«123.1. Եթե Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման կողմից Փոխանակման կետի տարածքում ստուգումներ իրականացնելու ժամանակ պարզվում է, որ Փոխանակման կետում առկա դրամական միջոցների մնացորդը պակաս է էլեկտրոնային գրանցումների մատյանի տվյալներից (գումարը հնարավոր չէ հայտնաբերել, գումարը կորել է, ոչ պատշաճ վայրում է դրված եղել և այլն), ապա փոխանակման կետի աշխատակիցը ստուգման ժամանակ (վերահսկողների ներկայությամբ) պարտավոր է կազմակերպել պակասորդ կազմող գումարի հայտնաբերման աշխատանքներ: Նշված աշխատանքների արդյունքում փոխանակման կետի տարածքից հայտնաբերված դրամական միջոցները Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների կողմից ներառվում են փոխանակման կետում առկա դրամական միջոցների մնացորդի հաշվարկում: Պակասորդ գումարի չհայտնաբերումը հանգեցնում է սույն կանոնակարգի 123-րդ կետով սահմանված պահանջի խախտմանը:

123.2. Փոխանակման կետի աշխատակիցը փոխանակման կետի դրամարկղից դրամական միջոցների ելքագրման դեպքում պետք է պահպանի հետևյալ ընթացակարգն ու հերթականությունը.

1) Փոխանակման կետի աշխատակիցը հաշվարկում ու սեղանի վրա առանձնացնում է ելքագրվող գումարները:
2) Օրագրում իրականացվում է դրամական միջոցի ելքագրման մասին համապատասխան գրանցում՝ պահպանելով սույն կանոնակարգի 121-րդ կետի պահանջները:
3) Օրագրում դրամական միջոցների ելքագրման մասին համապատասխան գրանցում կատարելուց հետո առնվազն հինգ րոպեի ընթացքում փոխանակման կետի աշխատակիցը պետք է ապահովի ելքագրման ենթակա դրամական միջոցների դուրսբերում դրամարկղի տարածքից: Ընդ որում, նշված ժամանակահատվածում (բացառությամբ դրամական միջոցների ինկասացման դեպքի) փոխանակման կետը չի կարող սպասարկել որևէ հաճախորդի, այսինքն՝ արտարժույթի առուվաճառքի գործառնություններ չեն իրականացվում: Իսկ ինկասացման նպատակով գումարների ելքագրման դեպքում, ծրագրում ինկասացիայի մասին համապատասխան գրանցում կատարելուց հետո, փոխանակման կետի աշխատակիցը պետք է ինկասացվող գումարը տեղավորի ինկասացիայի պարկի մեջ, փակի և մեկ ժամվա ընթացքում պարկը հանձնի ինկասատորին:

Վերը նշված հինգ րոպեի կամ մեկ ժամվա ընթացքում փոխանակման կետում առկա դրամական միջոցների ու Օրագրում ներկայացված դրամական միջոցների մնացորդների միջև առաջացած տարբերությունները (Օրագրում նշված ելքագրվող գումարների մեծության չափով) չեն դիտարկվում որպես սույն Կանոնակարգի 123-րդ կետի պահանջների խախտումներ:

123.3. Փոխանակման կետի աշխատակիցը փոխանակման կետի դրամարկղ դրամական միջոցներ մուտքագրման դեպքում պետք է պահպանի հետևյալ ընթացակարգն ու հերթականությունը.

1) Մուտքագրվող գումարների հաշվարկն իրականացվում է նախքան փոխանակման կետի տարածք (դրամարկղի տարածք) փոխանակման կետի աշխատակցի մուտք գործելն ու փոխանակման կետի աշխատակցի կողմից դրամական միջոցների ներս բերումը դրամարկղ:
2) Դրամարկղի տարածք մուտք գործելուց հետո առավելագույնը մեկ րոպեի ընթացքում մուտքագրման ենթակա գումարը դնում է փոխանակման կետի դրամարկղի սեղանի վրա:
3) Դրամական միջոցները սեղանի վրա դնելուց հետո առավելագույնը հինգ րոպեի ընթացքում Օրագրում իրականացվում է դրամական միջոցների մուտքագրման մասին համապատասխան գրանցում՝ պահպանելով սույն կանոնակարգի 121-րդ կետի պահանջները:

Ընդ որում, վերը նշված ժամանակահատվածում փոխանակման կետը չի կարող սպասարկել որևէ հաճախորդի (արտարժույթի առուվաճառքի գործառնություններ չեն իրականացվում):

Վերը նշված ժամանակահատվածներում փոխանակման կետում առկա դրամական միջոցների ու Օրագրում ներկայացված դրամական միջոցների մնացորդների միջև առաջացած տարբերությունները չեն դիտարկվում որպես սույն կանոնակարգի 123-րդ կետի պահանջների խախտում:

Ընդ որում, 123.1-րդ, 123.2-րդ և 123.3-րդ կետերով նկարագրված գործողությունները պետք է հստակ տեսաձայնագրված լինեն:»:

15) Կանոնակարգ 10-ի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:
16) Կանոնակարգ 10-ի Հավելված 9-ը և Հավելված 14-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 2-ի և Հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հոկտեմբերի 2016 թ., N 181-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի 25-ի թիվ 181-Ն որոշմամբ

«Հավելված 1
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____ -ին

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ տրամադրել արտարժույթի առուվաճառքի լիցենզիա:

Լիցենզավորվող անձի մասին

Ներքոնշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Լիցենզավորվող անձի տվյալներ							
1.1. Լիցենզավորվող անձի անվանումը							
1.2. Կազմակերպական-իրավական ձևը							
1.3. Գտնվելու վայրը							
1.4. Գործունեության վայրը							
1.5. ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)							
1.6. Պետական գրանցման վայրը, համարը և ամսաթիվը							
1.7. Հեռախոսահամարը (գործադիր մարմնի ղեկավարի և/կամ նման պարտականություններ կատարող այլ պաշտոնատար անձի)							
1.8. Փոստային հասցեն, որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ արտարժույթի առուվաճառքի լիցենզիան							
2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում լիցենզավորվող անձի՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ							
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
3. Տեղեկություններ լիցենզավորվող անձի մասնակիցների վերաբերյալ							
3.1. Մասնակցություն ունեցող իրավաբանական անձինք							
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
3.2. Մասնակցություն ունեցող ֆիզիկական անձինք							
Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը		Բնակության վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
4. Օրենքի ուժով, կանոնադրությամբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Դուք զրկվե՞լ եք արտարժույթի առուվաճառք իրականացնելու իրավունքից:					Այո		Ոչ	
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասնությունները:								

Փոխանակման կետը գործելու է՝

☐ խանութում, որտեղ գործունեություն է ծավալում «_____» ընկերությունը: Խանութի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ առևտրի կենտրոնում, որտեղ առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը «_____» ընկերությունն է: Առևտրի կենտրոնի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ հյուրանոցում, որտեղ հյուրանոցային ծառայություններ մատուցում է «_____» ընկերությունը: Հյուրանոցի ընդհանուր տարածքը (ներքին) կազմում է ___ ք.մ.,

☐ երկաթուղային կայարանի տարածքում,

☐ մետրոպոլիտենի կայարանի տարածքում,

☐ օդանավակայանի տարածքում:

Աշխատանքային ռեժիմի վերաբերյալ

Հայտարարում եմ, որ գործելու եմ հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

☐

Շաբաթվա օրերը	Աշխատանքային օրվա սկիզբ	Աշխատանքային օրվա ավարտ	Ընդմիջում
Երկուշաբթի			
Երեքշաբթի			
Չորեքշաբթի			
Հինգշաբթի			
Ուրբաթ			
Շաբաթ			
Կիրակի			

☐ Աշխատելու եմ շուրջօրյա, առանց ընդմիջման/ընդմիջումով (_____)
ընդգծել *նշել ժամանակահատվածը*

☐ Փոխանակման կետը չի աշխատելու պաշտոնապես հայտարարված տոնական և սգո օրերին (դաշտը լրացվում է միայն նշված օրերին չաշխատելու դեպքում)

Աշխատակցի մասին

Ներքոնշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	
1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն	

1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն.

☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական

☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական

☐ կանոնակարգի 21-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում

2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			
4.			

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար), ընդ որում՝ պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտակա-նությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գոր-ծունեությունը աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կենտրոնական բանկի Կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց:

ընդգծել

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող՝ _____

(անուն, ազգանուն)

Պաշտոնը՝ _____

Ամսաթիվ՝ _____

օր/ամիս/տարի

Ստորագրություն՝ _____

Հավելված 2
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե _____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____ -ին

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունները _____ վայրում իրականացնելու համար՝ կապված մասնաճյուղ հիմնելու հետ:

Փոխանակման կետը գործելու է՝

☐ խանութում, որտեղ գործունեություն է ծավալում «_____» ընկերությունը: Խանութի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ առևտրի կենտրոնում, որտեղ առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը «_____» ընկերությունն է: Առևտրի կենտրոնի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է __ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ հյուրանոցում, որտեղ հյուրանոցային ծառայություններ մատուցում է «_____» ընկերությունը: Հյուրանոցի ընդհանուր տարածքը (ներքին) կազմում է ___ ք.մ.,

☐ երկաթուղային կայարանի տարածքում,

☐ մետրոպոլիտենի կայարանի տարածքում,

☐ օդանավակայանի տարածքում:

Աշխատանքային ռեժիմի վերաբերյալ

Հայտարարում եմ, որ գործելու եմ հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

☐

Շաբաթվա օրերը	Աշխատանքային օրվա սկիզբ	Աշխատանքային օրվա ավարտ	Ընդմիջում
Երկուշաբթի			
Երեքշաբթի			
Չորեքշաբթի			
Հինգշաբթի			
Ուրբաթ			
Շաբաթ			
Կիրակի			

☐ Փոխանակման կետն աշխատելու է շուրջօրյա՝ առանց ընդմիջման/ընդմիջումով (_____)

ընդգծել *(նշել ժամանակահատվածը)*

☐ Փոխանակման կետը չի աշխատելու պաշտոնապես հայտարարված տոնական և սգո օրերին (դաշտը լրացվում է միայն նշված օրերին չաշխատելու դեպքում):

Աշխատակցի մասին

Ներքոհիշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	
1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն	
1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն. ☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական ☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական ☐ կանոնակարգի 21-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում	

2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			
4.			

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար, ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտակա-նությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գործունեությունը աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հայտարարում եմ, որ

☐ նախկինում ներկայացված փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել,

☐ կատարվել են այն փոփոխությունները, որոնք կից ներկայացվել են:

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կենտրոնական բանկի Կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց

(ընդգծել)

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող՝ _____
(փոխանակման կետ)
Պաշտոնը՝ _____

Ամսաթիվ՝ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն՝ _____

Հավելված 3
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե _____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____ -ին

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ՝
ԿԱՊՎԱԾ ՀԱՍՑԵԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ վերաձևակերպել _____ լիցենզիան՝ կապված
(նշել փոխանակման կետի անվանումը և լիցենզիան)
գործունեության հասցեի փոփոխության հետ: Գործունեության նոր հասցեն է՝_____
(նշել փոխանակման կետի գործունեության նոր հասցեն)

Հայտարարում եմ, որ.

- ☐ նախկինում ներկայացված փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել,
- ☐ կատարվել են այն փոփոխությունները, որոնք կից ներկայացվել են:

Փոխանակման կետը գործելու է՝

☐ խանութում, որտեղ գործունեություն է ծավալում «_____» ընկերությունը: Խանութի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ առևտրի կենտրոնում, որտեղ առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը «_____» ընկերությունն է: Առևտրի կենտրոնի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ հյուրանոցում, որտեղ հյուրանոցային ծառայություններ մատուցում է «_____» ընկերությունը: Հյուրանոցի ընդհանուր տարածքը (ներքին) կազմում է ___ ք.մ.,

☐ երկաթուղային կայարանի տարածքում,

☐ մետրոպոլիտենի կայարանի տարածքում,

☐ օդանավակայանի տարածքում:

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի նոր տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կենտրոնական բանկի Կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց:
(ընդգծել)

Դիմող _____
(փոխանակման կետ)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____»:

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի 25-ի թիվ 181-Ն որոշմամբ

«Հավելված 9
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե _____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____ -ին

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ՝

☐ Տրամադրել լիցենզիայի ներդիր

_____
(աշխատակցի (աշխատակիցների), ԱՁ-ի անունը, ազգանունը)

☐ Վերաձևակերպել լիցենզիայի ներդիրը՝ կապված _____ - ին
(աշխատակցի անունը, ազգանունը)

ներդիրում ընդգրկելու

_____ - ին ներդիրից հանելու հետ:
(աշխատակցի անունը, ազգանունը)

_____ - ի անձնագրի տվյալների փոփոխության հետ:
(աշխատակցի անունը, ազգանունը)

_____ փոխանակման կետի անվանափոխության հետ:

Աշխատակցի մասին

«Աշխատակցի մասին» տեղեկանքը չի լրացվում, եթե ներդիրի փոփոխությունը կապված է աշխատակցի անձնագրի տվյալների կամ փոխանակման կետի անվանափոխության հետ:

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	
1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն	

1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն.

☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական

☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական

☐ կանոնակարգի 21-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում

2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			
4.			

Ներքոնշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար, ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտակա-նությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գոր-ծունեությունը աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող _____
(փոխանակման կետ)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____»:

Հավելված 3
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2016 թվականի
հոկտեմբերի 25-ի թիվ 181-Ն որոշմամբ

«Հավելված 14
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե _____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____-ին

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տեղեկացնում ենք Ձեզ, որ փոխանակման կետը.

☐ 1. Դադարեցնում է իր աշխատանքային գործունեությունը (աշխատանքային գործունեությունը վերսկսելու դեպքում այս դաշտը չի լրացվում)՝

սկսած ____/____/____/____ -ից
օր ամիս տարի ժամ

մինչև ____/____/____/____ -ը
օր ամիս տարի ժամ

☐ անորոշ ժամկետով, և վերսկսելու դեպքում պարտավորվում ենք **<u>նախապես</u>** տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:

2. Վերսկսում է իր աշխատանքային գործունեությունը (լրացվում է միայն աշխատանքային գործունեությունը անորոշ ժամկետով դադարեցնելուց հետո վերսկսելու դեպքում)՝ ____/____/____/____ -ից
օր ամիս տարի ժամ

3. Ավարտելու է իր աշխատանքային գործունեությունը (լրացվում է միայն տվյալ օրն աշխատանքային ռեժիմով սահմանված աշխատաժամանակից ավելի աշխատելու դեպքում) ՝ ____/____/____ -ին
օր ամիս տարի

ժամը _____-ին:

_____ _____/____/_____
(փոխանակման կետ) *օր ամիս տարի*

_____
(ստորագրություն)

»:

*«Բոստոնի լաբիրինթոս» և «Վաալսի լաբիրինթոս» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2016 թ. դեկտեմբերի 26-ից շրջանառության մեջ դնել «Բոստոնի լաբիրինթոս» և «Վաալսի լաբիրինթոս» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 նոյեմբերի 2016 թ., N 184-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի 2016 թվականի
նոյեմբերի 8-ի թիվ 184-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ԲՈՍՏՈՆԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «DRAM 5000 ԴՐԱՄ», և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2016»: Փոքր շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»: Հուշադրամի կենտրոնում պատկերված են Բոստոնի «Հայկական ժառանգության այգի» լաբիրինթոսը, Հայոց ցեղասպանությունից փրկված ներգաղթյալների պատվին կանգնեցված հուշարձանը և քաղաքի համայնապատկերը: Շրջագծով «BOSTON USA», «ԱՄՆ ԲՈՍՏՈՆ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Բոստոնի «Հայկական ժառանգության այգի» լաբիրինթոսի գծապատկերը՝ հավերժության նշանը կենտրոնում: Շրջագծով «LABYRINTHS OF THE WORLD», «ԱՇԽԱՐՀԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ» մակագրություններն են:

Հուշադրամը պարունակում է գնդակ, որը տեղաշարժվում է լաբիրինթոսի ճանապարհներով:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	62,2 գ
Ձևը	անհատական
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 2000 հատ

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ԲՈՍՏՈՆԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566)[1], 23.11.2016):





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱԱԼՍԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «DRAM 5000 ԴՐԱՄ», և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2016»: Փոքր շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»: Հուշադրամի կենտրոնում պատկերված է Վաալսի «Երեք երկրների սահմանակետ» լաբիրինթոսը, իսկ ներքևի հատվածում՝ Բելգիայի, Նիդեռլանդների և Գերմանիայի սահմանների հատումը խորհրդանշող հուշարձան: Շրջագծով «VAALS NETHERLANDS», «ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ ՎԱԱԼՍ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Վաալսի «Երեք երկրների սահմանակետ» լաբիրինթոսի գծապատկերը՝ դիտակետը կենտրոնում: Շրջագծով «LABYRINTHS OF THE WORLD», «ԱՇԽԱՐՀԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ» մակագրություններն են:

Հուշադրամը պարունակում է գնդակ, որը տեղաշարժվում է լաբիրինթոսի ճանապարհներով:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	62,2 գ
Չևը	անհատական
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 1500 հատ

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ՎԱԱԼՍԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍ»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ





*«Հովհաննես Այվազովսկի-200», «Ալեքսանդր Մանթաշյան-175», «Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ», «Շուշիի ազատագրման 25-ամյակ» ոսկե, «Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ», «Համո Բեկնազարյան-125», «Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ», «ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2017 թվականի հունվարի 16-ից շրջանառության մեջ դնել «Հովհաննես Այվազովսկի-200», «Ալեքսանդր Մանթաշյան-175», «Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ», «Շուշիի ազատագրման 25-ամյակ» ոսկե, «Համո Բեկնազարյան-125», «Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ», «ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 նոյեմբերի 2016 թ., N 185-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի
նոյեմբերի 8-ի թիվ 185-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Հովհաննես Այվազովսկի-200» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հովհաննես Այվազովսկու դիմապատկերը: Շրջագծով «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ HOVHANNES AYVAZOVSKI» մակագրությունն է և նկարչի ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1817-1900»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է «Իններորդ ալիք» կտավից դրվագ, ներքևում անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ»: Շրջագծով «2017» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները


Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	1000 հատ

էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2016 թ. (ՀՀԳՏ N23 (566)[1], 23.11.2016):

«Հովհաննես Այվազովսկի-200» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Ալեքսանդր Մանթաշյան-175» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Ալեքսանդր Մանթաշյանի ծննդյան 175-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է հայ բարերարի հավաքական կերպարը խորհրդանշող հուշակոթողը («Հայ բարերարների ճեմուղի» հուշահամալիր) և «ԵՐԱԽՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ» երկլեզու մակագրությունը: Ներքևի մասում թողարկման տարեթիվն է՝ «2017», և անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ», շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին Ալեքսանդր Մանթաշյանի հուշարձանն է (Երևան) և նրա ստորագրությունը: Ձախ մասում բարերարի ծննդյան և մահվան տարեթվերն են՝ «1842-1911», կիսաշրջագծով «ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇՅԱՆ» և «ALEXANDER MANTASHIAN» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	1000 հատ

էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

Ալեքսանդր Մանթաշյան-175» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, ներքևի մասում անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «2017» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են «Սուրբ Վարդան Մամիկոնյան» շքանշանը և ՀՀ զինված ուժերի զինանշանը: Շրջագծով «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Շուշիի ազատագրման 25-ամյակ» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Շուշիի ազատագրման 25-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Շուշի քաղաքի զինանշանը: Վերևի մասում անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «2017» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են ԼՂՀ «Մարտական խաչ» շքանշանը և ԼՂՀ զինված ուժերի զինանշանը: Շրջագծով «ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակներ՝ Վարդան Վարդանյան (դիմերես) և Լուսինե Լալայան (դարձերես):
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Շուշիի ազատագրման 25-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, ներքևի մասում անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «2017» մակագրություններն են:
Հուշադրամի դարձերեսին պատկերված են «Սուրբ Վարդան Մամիկոնյան» շքանշանը և ՀՀ զինված ուժերի զինանշանը: Շրջագծով «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Համո Բեկնազարյան-125» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Համո Բեկնազարյանի ծննդյան 125-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է «Պեպո» կինոնկարի պաստառից դրվագ և կինոժապավեն: Ներքևում անվանական արժեքի մակագրությունն է՝ «100 ԴՐԱՄ», վերևում թողարկման տարեթիվը՝ «2017»: Ձախ հատվածում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» ուղղահայաց մակագրություններն են:


Հուշադրամի դարձերեսին Համո Բեկնազարյանի դիմանկարն է, տեսախցիկ և «125-ամյակ anniversary» մակագրությունը: Ձախ հատվածում «Համո Բեկնազարյան», «Hamo Beknazaryan» ուղղահայաց մակագրություններն են:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 9250
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 ճ 40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակ՝ Սուսաննա Պետրոսյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Համո Բեկնազարյան-125» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ» հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Վենետիկի Մխիթարյան միաբանության զինանշանը, Վենետիկ քաղաքի խորհրդանիշը՝ առյուծի տեսքով, Սբ Ղազար կղզու պատկերը և «ՍԲ ՂԱԶԱՐ ԿՂԶԻ» և «SAN LAZZARO DEGLI ARMENI» մակագրությունները: Ներքևի մասում «ՎԵՆԵՏԻԿ», «VENEZIA», «1000 ԴՐԱՄ» և «2017» մակագրություններն են: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Վենետիկի Մխիթարյան միաբանության վանքի աշտարակը և Մխիթար Սեբաստացու արձանը: Ֆոնին վանքի մուտքի ապակենախշն է: Շրջագծով «ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 300-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

Էսքիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ»
հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15» հուշադրամի

Հուշադրամը նվիրված է Հավաքական անվտանգության պայմանագրի 25-ամյակին և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 15-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը, թողարկման տարեթիվը՝ «2017», ՀԱՊ երկրների պետական դրոշների ոճավորված պատկերները: Ներքևի մասում անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ»: Կիսաշրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին ՀԱՊ պատկերանիշն է և «15 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ОРГАНИЗАЦИЯ» և «ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ДОГОВОР 25» մակագրությունները: Շրջագծով «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» և «КОЛЛЕКТИВНАЯ БЕЗОПАСНОСТЬ» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	200 հատ

էսքիզների հեղինակներ՝ էդուարդ Կուրղինյան (դիմերես) և Դավիթ Դովլաթյան (դարձերես):
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15» հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին[*]

ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել է բանկերի միացման ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ միջազգային պրակտիկայում առկա է կորպորատիվ միացումների (Statutory Merger) իրականացման 3 հիմնական եղանակ.

(1) Բաժնետոմսերի փոխանակմամբ միացում (Stock Swap Statutory Merger), որտեղ միացող ընկերության բաժնետերերն իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցումը ստանում են պահպանվող ընկերության բաժնետոմսերով□ Ընդ որում՝ բաժնետոմսերի փոխարկումն իրականացվում է նախապես որոշված համամասնությամբ (Swap ratio),

(2) Դրամական հատուցմամբ միացում (Cash-for-Stock Statutory Merger), որտեղ միացող ընկերության բաժնետերերն իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցումը ստանում են ոչ թե պահպանվող ընկերության բաժնետոմսերով, այլ դրամական միջոցներով, կամ երբեմն նաև այդ ընկերության ոչ բաժնային արժեթղթերով (կամ երկուսի համադրությամբ),

(3) Նախորդ 2 եղանակների համադրություն, որտեղ միացող ընկերության բաժնետերերն իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցումը ստանում են միաժամանակ մի քանի միջոցների համադրությամբ:

Որպես կանոն, զարգացած կորպորատիվ իրավունք ունեցող երկրների օրենսդրությունները (օրինակ՝ Delaware General Corporation Law (Title 8, Chapter 1 of the Delaware Code), UK Companies Act 2006) միացման իրականացման տարբերակներ չեն պարտադրում կողմերին□ Ընդհակառակը, վերջիններս թույլատրում կամ սահմանում են կորպորատիվ միացումների և ձեռքբերումների հնարավոր բազմաթիվ եղանակներ□

Բանկերի միացման ոլորտում ՀՀ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից ակնհայտ է, որ Հայաստանում ևս օրենսդրական կարգավորումների նպատակն է պաշտպանել միացման կողմ բանկերի բաժնետերերի և այլ շահառուների (ավանդատուներ, հաճախորդներ, պարտատերեր) օրինական շահերը, ինչպես նաև ապահովել բանկային համակարգի մրցակցային և կայուն կենսագործունեությունը□ Նշված կարգավորումները չեն սահմանափակում թե ինչ եղանակով կամ ինչ բիզնես կառուցակարգերի կիրառմամբ կողմերը պետք է իրականացնեն միացումը, այդ թվում՝ դրա դիմաց վճարումները□

Վերը նշված օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը կայանում է նրանում, որ եթե գործարքը համապատասխանում է Պատշաճ ընթացակարգի (Due Process) և Արդար գնի (Fair Price) միջազգային պրակտիկայում ճանաչված սկզբունքներին, և եթե բավարարվել են վերահսկող մարմնի կողմից ներկայացված պահանջները, ապա գործարքի պայմանները, այդ թվում միացող բանկի բաժնետերերին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց հատուցման եղանակը կամ միջոցները, կարող են ազատորեն որոշել միացման կողմերը□

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով բանկերի միացման ոլորտում ՀՀ օրենսդրական կարգավորումները,

Նպատակ ունենալով ապահովել Հայաստանում բանկերի միացման գործընթացների լավագույն միջազգային փորձին համահունչ իրականացումը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2011 թվականի հուլիսի 19-ի ««Բանկերի միացման կարգը» հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի միացման կարգի» 3-րդ կետի 3-րդ ենթակետում.

1) «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. միացման կարգը, պայմաններն ու ժամկետները,»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.11.2016 թ. (ՀՀՊՏ N23 (566), 15.11.2016):

2) լրացնել նոր «բ.1» պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«բ.1. միացող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման (դրանց դիմաց հատուցման) կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով: Ընդ որում, նշված կարգի համաձայն կարող է նախատեսվել միացող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց պահպանվող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) տրամադրում, այլ արժեթղթերի տրամադրում և (կամ) դրամական (փողային) հատուցման տրամադրում միացող բանկի բաժնետերերին,ե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 նոյեմբերի 2016 թ., N 193-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացում կատարելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի թիվ 19-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ներդրումները, զարգացնել մասնավոր ներդրումային ֆոնդերի շուկան, դյուրացնել ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի գրանցման ընթացակարգերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 175-րդ, 176-րդ և 194-րդ հոդվածները, 200-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, 21-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի 4-րդ մասը, 100-րդ հոդվածի 7-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 10/29)՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է)□

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ը հաստատելու մասին» թիվ 117-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.11.2016 թ. (ՀՀՊՏ N24 (567), 1.12.2016):

ու պայմանները» կանոնակարգ 10/11-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 10/11) լրացնել 1.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն կանոնակարգը չի տարածվում առցանց ընթացակարգով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման, դրանցում փոփոխությունների կամ լրացումների գրանցման հետ կապված հարաբերությունների վրա:»:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 5/10) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 5/10-ի 3-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Բացառությամբ սույն կանոնակարգի 19.1-րդ կետով նախատեսված դեպքերի»,

2) Կանոնակարգ 5/10-ի 19-րդ կետից հետո լրացնել նոր 19.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«19.1. Այն դեպքում, երբ անձը առցանց ընթացակարգով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման արդյունքում ստացել է ֆոնդի օպերատորի կարգավիճակ, ֆոնդի փայերի ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու համար թողարկողի և ֆոնդի օպերատորի միջև պայմանագրի առկայություն չի պահանջվում: Ֆոնդի արժեթղթերի ռեեստրավարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու նպատակով վերը նշված անձը ֆոնդի օպերատորի կարգավիճակ ստանալու դիմումի հետ միասին ներկայացնում է սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները:»,

3) Կանոնակարգ 5/10-ի 84-րդ կետը լրացնել հետևյալ նախադասություններով.

«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնները առցանց ընթացակարգով գրանցած և այդ ֆոնդի կառավարումն իրականացնող անձի կողմից համապատասխան միջնորդագրի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան շնորհում է հաշվի օպերատորի հատուկ սահմանափակմամբ կարգավիճակ՝ ֆոնդի օպերատորի կարգավիճակ՝ միայն իր կողմից կառավարվող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերի հետ կապված հաշվի օպերատորի ծառայություններ մատուցելու համար: Ֆոնդի օպերատորի կարգավիճակ ստացած անձի վրա տարածվում են հաշվի օպերատորին վերաբերող դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով, Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով»:,

4) Կանոնակարգ 5/10-ը լրացնել նոր 109.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«109.1. Սույն կանոնակարգի 105-109-րդ կետերը չեն տարածվում ֆոնդի օպերատորի կարգավիճակ ստացած անձանց վրա: Սույն կետում նշված ֆոնդի օպերատորի կարգավիճակից հրաժարվելու հարաբերությունները կարգավորվում են այդ անձի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված հաշվարկային համակարգի անդամի և ֆոնդի օպերատորի կարգավիճակի շնորհման պայմանագրով:»,

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի փետրվարի 16-ի ««Ներդրումային ֆոնդերի միացմանը նախնական համաձայնություն տրամադրելու, միացման մասին տեղեկությունները տրամադրելու և հրապարակելու կարգը» կանոնակարգ 10/28-ը հաստատելու մասին» թիվ 19-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի միացմանը նախնական համաձայնություն տրամադրելու, միացման մասին տեղեկությունները տրամադրելու և հրապարակելու կարգը» կանոնակարգ 10/28-ի 2-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Առցանց ընթացակարգով գրանցված ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերը կարող են սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկին ներկայացնել ֆոնդ-նեթ համակարգի միջոցով:»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը□

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
14 նոյեմբերի 2016 թ., N 194-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի
նոյեմբերի 8-ի թիվ 194-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/29
ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌՁԱՆՁ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Գլուխ 1. Կարգավորման առարկան

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) տարածքում ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների, ֆոնդի կառավարման և ֆոնդի պահառության պայմանագրերի և դրանցում կատարված փոփոխությունների առցանց գրանցման ընթացակարգը:

Գլուխ 2. Հասկացություններ

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
1) ***Ֆոնդ***՝ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդ,
2) ***Միջնորդագիր ներկայացրած անձ***՝ սույն կանոնակարգով նախատեսված չափանիշներին համապատասխանող այն անձը, ով իրականացնելու է գրանցման ենթակա Ֆոնդի գործադիր կառավարումը,
3) ***Ֆոնդի օպերատոր***՝ հաշվի օպերատորի հատուկ սահմանափակմամբ կարգավիճակ, համաձայն որի միջնորդագիր ներկայացրած անձին հնարավորություն է տրվում միայն իր կողմից կառավարվող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերի հետ կապված հաշվի օպերատորի ծառայություններ մատուցել,
4) ***Առցանց Հեռակա (ԱՀ) ընթացակարգ***՝ պայմանագրային ոչ հրապարակային ֆոնդերի գրանցման ընթացակարգ, որը նախատեսված է այն ֆոնդերի համար, որոնք չեն բավարարում ԱԿ ընթացակարգով գրանցվելու համար սահմանված պահանջները,
5) ***Առցանց Կենտրոնացված (ԱԿ) ընթացակարգ***՝ պայմանագրային ոչ հրապարակային ֆոնդերի գրանցման ընթացակարգ, որը նախատեսված է բացառապես այն ֆոնդերի համար, որոնց կենտրոնական կառավարումն (central administration) իրականացվելու է ՀՀ-ում կամ որի կառավարումն իրականացնող անձը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆոնդի կառավարման լիցենզիա ստացած անձ է կամ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ է,
6) ***ՖոնդՆեթ համակարգ***՝ ֆոնդի կանոնների և փոփոխությունների էլեկտրոնային գրանցման միասնական ցանց, որը ստեղծվել է արժեթղթերի շուկայի օպերատորի և Կենտրոնական բանկի կողմից համատեղ և ապահովում է անմիջական կապ Կենտրոնական բանկի, Կենտրոնական դեպոզիտարիայի և միջնորդագիր ներկայացրած անձի միջև,
7) ***Կենտրոնական կառավարում(central administration)***՝ Ֆոնդի հաշվապահության և զուտ ակտիվների արժեքի հաշվարկ և (կամ) Ֆոնդի ակտիվների պահառություն:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակությունը:

Գլուխ 3. Ընդհանուր դրույթներ

4. Սույն կանոնակարգով սահմանվում են ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի գրանցման.
1) Առցանց հեռակա (այսուհետ՝ ԱՀ) ընթացակարգ
2) Առցանց կենտրոնացված (այսուհետ՝ ԱԿ) ընթացակարգ

5. Սույն կանոնակարգով ԱՀ ընթացակարգով սահմանված բոլոր դրույթները կիրառվում են ԱԿ ընթացակարգի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ այդ ընթացակարգով:

6. Սույն կանոնակարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվում են «Փի-Դի-էֆ» ֆորմատով: Փաստաթղթերի անվանման մեջ նշվում է միջնորդագիր ներկայացրած անձի անվանումը, փաստաթղթի վերնագիրը և ամսաթիվը:

7. Արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորը (այսուհետ՝ Շուկայի օպերատոր) ապահովում է իր կայքէջում սույն կանոնակարգով նախատեսված ընթացակարգերով՝ ինչպես ԱՀ, այնպես էլ՝ ԱԿ ոչ հրա-

պարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոններ գրանցելու, ֆոնդի օպերատորի կարգավիճակ ստանալու, ինչպես նաև հաշվի օպերատորի հետ ռեեստրի վարման պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը□

8. Կենտրոնական բանկը ֆոնդի գրանցման փաստաթղթերը ստանում է ՖոնդՆեթ համակարգի միջոցով□

9. Կենտրոնական բանկը, Շուկայի օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան միջնորդագիր ներկայացրած անձի հետ սույն կանոնակարգով սահմանված ամբողջ գրագրությունը վարում են ՖոնդՆեթ համակարգով՝ միմյանց միջև կնքված պայմանագրի և (կամ) Կենտրոնական բանկի սահմանած ձեռնարկի համաձայն:

10. Սույն կանոնակարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը և տեղեկատվությունը Կենտրոնական բանկին, Շուկայի օպերատորին և Կենտրոնական դեպոզիտարիային համարվում են որպես իրավասու անձի կողմից ներկայացված, միայն եթե ներկայացվում են ՖոնդՆեթ համակարգի միջոցով: Միջնորդագիր ներկայացնող անձի կողմից փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու պահից Կենտրոնական դեպոզիտարիան, Շուկայի օպերատորը և Կենտրոնական բանկը համարվում են տեղեկացված:

11. ՖոնդՆեթ համակարգի անսարքության յուրաքանչյուր դեպքում փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է համակարգի մուտքային էջում հայտարարված այլընտրանքային եղանակով: Այս եղանակով իրականացված ցանկացած փաստաթղթաշրջանառություն համարվում է ՖոնդՆեթ համակարգով իրականացված:

12. Սույն կանոնակարգի համաձայն ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և (կամ) նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է միջնորդագիր ներկայացրած անձին, և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացվելուց հետո: Թերությունների մասին տեղեկացված միջնորդագիր ներկայացրած անձը պարտավոր է տասը օրացուցային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) վերացնել դրանցում առկա թերությունները: Այդ դեպքում համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը գրանցման ՖոնդՆեթ համակարգով ուղարկվելու պահից: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի մերժման համար:

13. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում՝ սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում նշվում է այդ մասին:

Գլուխ 4. Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների, դրանցում փոփոխությունների և լրացումների ԱՀ ընթացակարգով գրանցման կարգն ու պայմանները և այդ ընթացակարգով դիմելու իրավասություն ունեցող անձինք

14. ԱՀ ընթացակարգով ֆոնդի կանոնները գրանցելու համար միջնորդագիր ներկայացնող անձը ՖոնդՆեթ համակարգով ֆոնդի կանոնների գրանցման համար դիմելիս կատարում է ընտրություն

1) միայն դիմել ֆոնդի գրանցման համար, կամ
2) դիմել ֆոնդի գրանցման համար և ֆոնդի փայերի ռեեստրավարումը ՀՀ-ում գործող հաշվի օպերատորի կարգավիճակ ունեցող ընկերության միջնորդությամբ հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային, կամ
3) դիմել ֆոնդի գրանցման համար և Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացնել հաշվարկային համակարգի անդամ դառնալու, ֆոնդի օպերատորի կարգավիճակ ձեռք բերելու և ռեեստրավարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու մասին պայմանագրի նախագիծը:

15. ԱՀ ընթացակարգով ֆոնդի կանոններ գրանցելու համար կարող է դիմել այն իրավաբանական անձը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ պայմանները.

1) իրավաբանական անձ է, որն իրականացնելու է գրանցվող ֆոնդի գործադիր կառավարումը,
2) որի նկատմամբ չեն կիրառվել պատասխանատվության միջոցներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավվածության համար,
3) որը վերջին 5 տարվա ընթացքում ներգրավված չի եղել անվճարունակության կամ սնանկության վարույթում, որի նկատմամբ չի նշանակվել անվճարունակության կամ սնանկության ժամանակա-

վոր կառավարիչ կամ իր գրանցման վայրի օրենսդրությամբ նմանատիպ իրավասություններով օժտված անձ,

4) որի կառավարում իրականացնող անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների, այդ թվում՝ տնտեսական հանցագործությունների համար դատվածություն չունի,
5) որի կառավարում իրականացնող անձը քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
6) որի կառավարում իրականացնող անձը դատարանի կողմից զրկված չէ ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
7) որի կառավարում իրականացնող անձը երբևէ չի զրկվել որակավորումից այն երկրի ֆինանսական վերահսկողի կողմից, որի տարածքում գործունեություն է իրականացրել,
8) որը կամ որի կառավարում իրականացնող անձը անցյալում չեն կատարել այնպիսի արարք, այդ թվում՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտում, որը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը չի կարող պատշաճորեն իրականացնել արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի գործունեությունը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել հաշվարկային համակարգի հեղինակության կամ գործարար համբավի վարկաբեկմանը կամ կարող են վտանգել ներդրողների իրավունքները կամ օրինական շահերը:

16. Ֆոնդի գործունեության ընթացքում սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում միջնորդագիր ներկայացրած անձը այդ մասին Կենտրոնական բանկին տեղեկացնում է խախտման պահից 5 օրվա ընթացքում:

17. Միջնորդագիր ներկայացրած անձը ֆոնդի կանոնները ԱՀ ընթացակարգով գրանցելու նպատակով ֆոնդՆեթ համակարգի միջոցով ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման սույն կանոնակարգի 14-րդ կետի 1-3-րդ ենթակետերից մեկի ընտրությամբ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
2) միջնորդագիր ներկայացրած անձի որոշումը՝ տվյալ ֆոնդն ստեղծելու և կառավարելու մասին,
3) ֆոնդի կանոնները,
4) միջնորդագիր ներկայացրած անձի որոշումը՝ ֆոնդի կանոնները հաստատելու մասին,
5) միջնորդագիր ներկայացրած անձի և պահառուի միջև կնքված ֆոնդի պահառության պայմանագրի նախագիծը (առկայության դեպքում),
6) փակ պայմանագրային ֆոնդի ժողովի որոշումը ֆոնդի կանոնների և ֆոնդի պահառության պայմանագրի նախագծերը հաստատելու կամ միջնորդագիր ներկայացրած անձի համապատասխան որոշմանը համաձայնություն տալու մասին (եթե տվյալ ֆոնդում ֆոնդի ժողով գումարվում է),
7) միջնորդագիր ներկայացրած անձի անունից հանդես եկող անձի՝ իրավասությունները հավաստող փաստաթղթեր,
8) միջնորդագիր ներկայացրած անձի իրական շահառուի վերաբերյալ տեղեկություններ,
9) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
10) միջնորդագիր ներկայացրած անձի կանոնադրությունը և գրանցման վկայականը, ինչպես նաև առկայության դեպքում՝ վերջինիս տրված գործունեության լիցենզիան,
11) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆոնդի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտը,
12) սույն կանոնակարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետի ընտրության դեպքում՝ նախապես ընտրված հաշվի օպերատորի անվանումը և (կամ) նախնական պայմանագիրը (առկայության դեպքում): Միջնորդագիր ներկայացրած անձը պարտավոր է Ֆոնդի կանոնների գրանցման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկին ներկայացնել Դեպոզիտարիայի անունից գործող հաշվի օպերատորի հետ կնքված պայմանագիրը,
13) սույն կանոնակարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի ընտրության դեպքում՝ միջնորդագիր ներկայացրած անձի կողմից ստորագրված՝ Շուկայի օպերատորի կայքում նախապես տեղադրված հաշվարկային համակարգի անդամի և ֆոնդի օպերատորի կարգավիճակի շնորհման, ռեեստրավարման հանձնման պայմանագրի նախագիծը:

18. Սույն կանոնակարգի 17-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով պահառության պայմանագրի մասով սահմանված տեղեկությունները ներկայացվում են միայն առանձնացված պահառուի առկայության դեպքում:

19. ԱԿ ընթացակարգով գրանցվելու համար միջնորդագիր ներկայացնող անձը կարող է դիմել, եթե բավարարում է սույն կանոնակարգի 15-րդ կետի պահանջներին և

1) «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆոնդի կառավարման լիցենզիա ստացած անձ է, և (կամ)
2) ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ է, և (կամ)
3) ֆոնդի հաշվապահությունը և զուտ ակտիվների արժեքի հաշվարկը հանձնվում է ՀՀ-ում գրանցված և գործող ընկերության, և (կամ)
4) ֆոնդի ակտիվների պահառությունը հանձնվել է ՀՀ-ում գրանցված և գործող ընկերության:

20. Ֆոնդի գործունեության ընթացքում սույն կանոնակարգի 15-րդ և 19-րդ կետերով սահմանված պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում միջնորդագիր ներկայացրած անձն այդ մասին Կենտրոնական բանկին տեղեկացնում է խախտման պահից 5 օրվա ընթացքում:

21. ԱԿ ընթացակարգով գրանցվող ֆոնդը ռեեստրավարումն իրականացնում է.

1) ՀՀ-ում գործող հաշվի օպերատորի կարգավիճակ ունեցող ընկերության միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու, կամ
2) Կենտրոնական դեպոզիտարիային հաշվարկային համակարգի անդամ դառնալու, ֆոնդի օպերատորի կարգավիճակ ձեռք բերելու և ռեեստրավարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու մասին պայմանագրի նախագիծը ներկայացնելու միջոցով:

22. ԱԿ ընթացակարգով գրանցվող ֆոնդը սույն կանոնակարգի 17-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված միջնորդագրի փոխարեն պետք է ներկայացնի ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման սույն կանոնակարգի 21-րդ կետի 1-2-րդ ենթակետերից մեկի ընտրությամբ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի և ի հավելումն 17-րդ կետով նախատեսված փաստաթղթերի, պետք է ներկայացնի ֆոնդի ակտիվների պահառության և (կամ) ֆոնդի հաշվապահության և զուտ ակտիվների հաշվարկի համար նախապես ընտրված ընկերության անվանումը և (կամ) վերջինիս հետ նախնական պայմանագիրը: Ֆոնդը գրանցվելու պահից 10 օրվա ընթացքում պետք է ներկայացնի հաշվապահությունը և զուտ ակտիվների հաշվարկը և (կամ) ֆոնդի ակտիվների պահառությունն իրականացնող ընկերության հետ կնքված պայմանագիրը:

23. Ֆոնդի գործունեության ընթացքում սույն կանոնակարգի 15-րդ և 19-րդ կետերով սահմանված պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում միջնորդագիր ներկայացրած անձը այդ մասին Կենտրոնական բանկին տեղեկացնում է խախտման պահից 5 օրվա ընթացքում:

24. Կենտրոնական բանկը փոփոխությունների արդյունքում ֆոնդի՝ կենտրոնացված ֆոնդի համար չափանիշների վերացման դեպքում փոփոխում է ֆոնդի գրանցման կարգավիճակը՝ ԱՀ-ի:

25. Կենտրոնական բանկը կարող է միջնորդագիր ներկայացրած անձից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 17-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հավաստիությունը գնահատելու համար:

26. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի կանոնները գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին 17-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում□

27. Ֆոնդի կանոնները գրանցելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագիր ներկայացրած անձին հանձնվում է ֆոնդի կանոնների գրանցման վկայականը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, եթե ֆոնդի կանոնները գրանցվել են առցանց հեռակա ընթացակարգով և համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, եթե ֆոնդի կանոնները գրանցվել է առցանց կենտրոնացված ընթացակարգով:

28. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 26-րդ կետով նախատեսված որոշումը կայացնելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է միջնորդագիր ներկայացրած անձին՝ ՖոնդՆեթ համակարգի միջոցով:

29. Ֆոնդի կանոններում փոփոխությունների և (կամ) լրացումների (նոր խմբագրությամբ կանոնները հաստատվելու), ֆոնդի պահառության պայմանագրում փոփոխությունների, նոր պահառուի, նոր հաշվի օպերատորի հետ պայմանագիր կնքելու մասին միջնորդագիր ներկայացրած անձը Կենտրոնական բանկին տեղեկացնում է ՖոնդՆեթ համակարգի միջոցով՝ ներկայացնելով սույն կանոնակարգի Հավելված 3-ով նախատեսված միջնորդագիրը՝ վերնագրում նշելով ներկայացրած անձի լրիվ անվանումը և «փոփոխություն» բառը և կցելով փոփոխված փաստաթղթերը:

30. Միջնորդագիր ներկայացրած անձի վերաբերյալ Կենտրոնական բանկին ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի փոփոխությունների վերաբերյալ միջնորդագիր ներկայացրած անձը պետք է այդ փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 օրվա ընթացքում հայտնի Կենտրոնական բանկին՝

ֆոնդՆեթ համակարգի միջոցով ներկայացնելով սույն կանոնակարգի Հավելված 3-ով նախատեսված միջնորդագիրը՝ վերնագրում նշելով միջնորդագիր ներկայացրած անձի լրիվ անվանումը և «փոփոխություն» բառը և կցելով անհրաժեշտ փաստաթղթերը:

31. Ֆոնդի կանոններում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու (նոր խմբագրությամբ կանոնները հաստատվելու), ֆոնդի պահառության պայմանագրում փոփոխություններ կատարվելու, նոր պահառուի հետ պահառության պայմանագիր կնքվելու դեպքում փաստաթղթերը Կենտրոնական բանկ պատշաճ կերպով ներկայացվելուց հետո, Կենտրոնական բանկը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է այդ փոփոխությունները և լրացումները կամ նոր պայմանագիրը կամ մերժում է գրանցումը☐

32. Ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնող անձի փոփոխության դեպքում գործադիր կառավարումն իրականացնող նոր անձը պետք է կրկին անցնի սույն կանոնակարգի 4-րդ գլխով նախատեսված ընթացակարգը:

33. Սույն ընթացակարգով ֆոնդի օպերատորի կարգավիճակ ստացած անձի կողմից նոր ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոններ գրանցելու ընթացակարգն իրականացվում է համաձայն սույն գլխով նախատեսված ընթացակարգի՝ հաշվարկային համակարգի անդամի և ֆոնդի օպերատորի կարգավիճակի շնորհման պայմանագրի նախագիծը կցելու փոխարեն կցելով պայմանագրի փոփոխությունների նախագիծը:

ԳԼՈՒԽ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

34. Սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցում ստացած ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնող անձը, ով համապատասխանում է սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված պահանջներին, և ով ֆոնդի կանոնների գրանցման միջնորդագիր ներկայացնելու հետ միաժամանակ ներկայացրել է հաշվարկային համակարգի անդամ դառնալու, ֆոնդի օպերատորի կարգավիճակ ձեռք բերելու և ռեեստրավարումը Կենտրոնական Դեպոզիտարիային հանձնելու մասին պայմանագրի նախագիծը, կարող է դառնալ արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ:

Հավելված 1
«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ի

ԱՌՑԱՆՑ ՀԵՌԱԿԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական դեպոզիտարիային
Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսային

Հարգելի _____

Համաձայն ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք առցանց հեռակա ընթացակարգով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը☐

Խնդրում ենք

- ☐ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ստորև ներկայացված ֆոնդի կանոնները
- ☐ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ստորև ներկայացված ֆոնդի կանոնները և ՀՀ-ում գործող հաշվի օպերատորի միջոցով ֆոնդի ռեեստրի վարումը հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային
- ☐ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ստորև ներկայացված ֆոնդի կանոնները և տրամադրել ֆոնդի օպերատորի կարգավիճակ

Ստորև ներկայացնում ենք ֆոնդի և միջնորդագիր ներկայացրած անձի վերաբերյալ տվյալները:

Տեղեկություններ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի մասին

1.	Ֆոնդի անվանումը	
2.	Պահառուի ֆիրմային անվանումը (լրացվում է բացառապես առանձնացված պահառուի առկայության դեպքում)	
3.	Ֆոնդի մասնակիցների քանակը	
4.	Կոնտակտային անձի տվյալները, կապի միջոցները ֆոնդի հետ կապված հարցերով կապ հաստատելու համար (առկայության դեպքում)	
5.	Այլ տվյալներ, մեկնաբանություններ (ցանկության դեպքում)	

Տեղեկություններ միջնորդագիր ներկայացրած անձի վերաբերյալ

1.	Լրիվ ֆիրմային անվանումը	
2.	Գտնվելու և գործունեության վայրը	
3.	Գրանցման վկայականի համարը	
4.	Ֆոնդի կառավարում իրականացնելու լիցենզիա և լիցենզիա շնորհած մարմինը (առկայության դեպքում)	
5.	Հեռախոսահամար	
6.	Ինտերնետային կայքի հասցե (առկայության դեպքում)	
7.	Կազմակերպության հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը	
8.	Միջնորդագիր ներկայացրած անձի ստատիկ IP հասցեն	

- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի նկատմամբ կամ նրա գործադիր կառավարմամբ զբաղվող անձի նկատմամբ չեն կիրառվել վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում իրականացված իրավախախտումների համար:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձը վերջին 5 տարվա ընթացքում ներգրավված չի եղել անվճարունակության կամ սնանկության վարույթում, նրա նկատմամբ չի նշանակվել անվճարունակության կամ սնանկության ժամանակավոր կառավարիչ կամ իր գրանցման վայրի օրենսդրության ներքո նմանատիպ իրավասություններով օժտված անձ:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն չունի:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը դատարանի կողմից զրկված չէ ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը ֆինանսական վերահսկողի կողմից զրկված չէ որակավորումից:
- Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:
- Հավաստում ենք, որ միջնորդագրում և կից փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Կազմակերպության լիազոր անձի անուն, ազգանուն _____

Ստորագրություն _____

Կազմակերպության կնիք
(առկայության դեպքում)

Միջնորդագիրը ներկայացնող անձ (եթե տարբեր է)՝_____
(իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, բնակության վայրը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 2
«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ի

ԱՌՑԱՆՑ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական դեպոզիտարիային

Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսային

Հարգելի _____

Համաձայն ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք կենտրոնացված ընթացակարգով ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը☐

Խնդրում ենք

- ☐ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ստորև ներկայացված ֆոնդի կանոնները և ՀՀ-ում գործող հաշվի օպերատորի միջոցով ֆոնդի ռեեստրի վարումը հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային
- ☐ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ստորև ներկայացված ֆոնդի կանոնները և տրամադրել ֆոնդի օպերատորի կարգավիճակ

Ստորև ներկայացնում ենք ֆոնդի և միջնորդագիր ներկայացրած անձի վերաբերյալ տվյալները:

Տեղեկություններ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի մասին

1.	Ֆոնդի անվանումը	
2.	Պահառուի ֆիրմային անվանումը (լրացվում է բացառապես առանձնացված պահառուի առկայության դեպքում)	
3.	Ֆոնդի մասնակիցների քանակը	
4.	Կոնտակտային անձի տվյալները, կապի միջոցները ֆոնդի հետ կապված հարցերով կապ հաստատելու համար (առկայության դեպքում)	
5.	Այլ տվյալներ, մեկնաբանություններ (ցանկության դեպքում)	

Տեղեկություններ միջնորդագիր ներկայացրած անձի վերաբերյալ

1.	Լրիվ ֆիրմային անվանումը	
2.	Գտնվելու և գործունեության վայրը	
3.	Գրանցման վկայականի համարը	
4.	Ֆոնդի կառավարում իրականացնելու լիցենզիա և լիցենզիա շնորհած մարմինը (առկայության դեպքում)	
5.	Հեռախոսահամար	
6.	Ինտերնետային կայքի հասցե (առկայության դեպքում)	
7.	Կազմակերպության հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը	
8.	Միջնորդագիր ներկայացրած անձի ստատիկ IP հասցեն	

☐ Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի նկատմամբ կամ նրա գործադիր կառավարմամբ զբաղվող անձի նկատմամբ չեն կիրառվել վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում իրականացված իրավախախտումների համար:

- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձը վերջին 5 տարվա ընթացքում ներգրավված չի եղել անվճարունակության կամ սնանկության վարույթում, նրա նկատմամբ չի նշանակվել անվճարունակության կամ սնանկության ժամանակավոր կառավարիչ կամ իր գրանցման վայրի օրենսդրության ներքո նմանատիպ իրավասություններով օժտված անձ:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն չունի:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը դատարանի կողմից զրկված չէ ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
- Հավաստում ենք, որ միջնորդագիր ներկայացրած անձի կառավարում իրականացնող անձը ֆինանսական վերահսկողի կողմից զրկված չէ որակավորումից:
- Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:
- Հավաստում ենք, որ միջնորդագրում և կից փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժմանը:

Կազմակերպության լիազոր անձի անուն, ազգանուն _____

Ստորագրություն _____

Կազմակերպության կնիք
(առկայության դեպքում)

Միջնորդագիրը ներկայացնող անձ (եթե տարբեր է)՝ _____
(իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, բնակության վայրը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 3
«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ի

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____
(միջնորդագիր ներկայացրած անձի անվանումը)

1. որոշում է կայացրել

- □ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել Ֆոնդի կանոններում (կանոնները հաստատել նոր խմբագրությամբ),
- □ փոփոխություններ կատարել Ֆոնդի կառավարման պայմանագրում,
- □ փոփոխություններ կատարել Ֆոնդի պահառության պայմանագրում,
- □ կնքել նոր պահառուի հետ պահառության պայմանագիր,
- □ այլ:

2. առաջացել են ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնող անձի վերաբերյալ փոփոխված տեղեկություններ.

1.	Լրիվ ֆիրմային անվանումը
2.	Գտնվելու և գործունեության վայրը
3.	Գրանցման վկայականի համարը
4.	Ֆոնդի կառավարում իրականացնելու լիցենզիա և լիցենզիա շնորհած մարմինը (առկայության դեպքում)
5.	Հեռախոսահամար
6.	Ինտերնետային կայքի հասցե (առկայության դեպքում)
7.	Կազմակերպության հիմնական գործունեության հակիրճ նկարագրությունը

Կից ներկայացնում ենք փոփոխությունները ներառող տարբերակը (նոր խմբագրությամբ հաստատված կանոնները, նոր պայմանագրի նախագիծը), ինչպես նաև փոփոխությունները հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր _____ թերթ:

Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում կազմակերպության մասին տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական☐

Խնդրում ենք գրանցել կատարված փոփոխությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության լիազոր անձի անուն, ազգանուն _____

Ստորագրություն _____

Կազմակերպության կնիք
(առկայության դեպքում)

Միջնորդագիրը ներկայացնող անձ (եթե տարբեր է)՝ _____
(իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները, բնակության վայրը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 4
«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ի

ԱՌՑԱՆՑ ՀԵՌԱԿԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Գրանցված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
20__ թվականի թիվ _____ որոշմամբ
առցանց հեռակա ընթացակարգով

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

_____

_____

(անվանումը, ֆոնդի տեսակը)

ներդրումային ֆոնդին առ այն, որ ֆոնդի կանոնները գրանցված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ «__»_____ _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը _____

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.

Հավելված 5
«Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կանոնների առցանց գրանցման ընթացակարգ» կանոնակարգ 10/29-ի

ԱՌՑԱՆՑ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Գրանցված է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
20__ թվականի թիվ _____ որոշմամբ
առցանց կենտրոնացված ընթացակարգով

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ _____

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

(անվանումը, ֆոնդի տեսակը)

ներդրումային ֆոնդին առ այն, որ ֆոնդի կանոնները գրանցված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը _____

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21[2]-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության կիրառման մասին[*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պարբերաբար հարցադրումներ են ուղղվում բանկի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու ժամկետների վերաբերյալ:

Խնդրի նկարագրությունը

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21[2]-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Վերոնշյալ դրույթը տարաբնույթ ընկալումների տեղիք է տալիս այն պատճառով, որ շուկայի մասնակիցների համար հասկանալի չէ, թե ինչ իմաստով է կիրառվել «ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ» արտահայտությունը: Մասնավորապես, հարց է առաջանում, թե ցուցակը կազմելու ամսաթվի «ավելի ուշ» չլինելը նշանակում է, որ այդ ամսաթիվը.

1. չի կարող նախորդել «ժողովի գումարումից 45 օր առաջվա» ամսաթվին և, հետևաբար, կարող է օրինակ սահմանվել ժողովի գումարումից 43, 20 կամ 10 օր առաջ, բայց ոչ երբեք՝ 47, 50 կամ 60 օր առաջ, թե՞

2. չի կարող հաջորդել «ժողովի գումարումից 45 օր առաջվա» ամսաթվին և, հետևաբար, կարող է օրինակ սահմանվել ժողովի գումարումից 47, 50 կամ 60 օր առաջ, բայց ոչ երբեք՝ 43, 20 կամ 10 օր առաջ:

Վերլուծություն

Վերը նկարագրված խնդրին պատասխան տալու համար նշված դրույթն անհրաժեշտ է դիտարկել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տրամաբանության ներքո:

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հետևյալը. «Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ»:

Ստացվում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք փաստացի ստանում են ոչ թե ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ընդգրկված անձինք, այլ ժողովի գումարման նախորդ օրվա դրությամբ բանկի մասնակից հանդիսացող անձինք: Օրենքի տրամաբանությունից բխում է, որ Ցուցակի տվյալների և ժողովի գումարման օրվան նախորդող օրվա դրությամբ բանկի մասնակիցների ցանկի միջև պետք է որքան հնարավոր է քիչ տարբերություններ լինեն, և իրենց մասնակցությունն արդեն իսկ օտարած բանկի նախկին մասնակիցները և բանկի նոր մասնակիցները պետք է հնարավորինս քիչ դեպքերում ստիպված լինեն լիազորագիր տրամադրել և ձեռք բերել: Իսկ քանի որ այդ տարբերությունները հնարավոր չէ ամբողջությամբ բացառել, որպես լուծում կիրառվում է 76-րդ հոդվածի 2-րդ մասը: Այս ամենից հետևում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման օրվա և Ցուցակը կազմելու օրվա միջև ընկած ժամանակահատվածը պետք է հնարավորինս կարճ լինի: Հետևաբար, Ցուցակը կազմելու օրը պետք է լինի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումից հետո, բայց չի կարող նախորդել «ժողովի գումարումից 45 օր առաջվա» ամսաթվին:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 8-ին (ՀՀՊՏ N23 (566), 15.11.2016):

2. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21^2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը սահմանում է. «եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ»: Ի տարբերություն նույն հոդվածի նույն մասի 2-րդ պարբերության, այստեղ ի նկատի է առնվում, որ Ցուցակը կազմելու օրը չի կարող հաջորդել «ժողովի գումարումից 35 օր առաջվա» ամսաթվին: Նման ժամկետ սահմանելու պատճառը հանդիսանում է հեռակա քվեարկության անցկացման նկատմամբ սահմանված պահանջը: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ»:

Նշված պարբերությունների միջև հակադրությունն ընդգծելու համար օրենսդիրը օգտագործել է հականիշ բառեր՝ «ավելի ուշ» և «շուտ»:

3. Ցուցակի ժամկետի հետ կապված համանման դրույթ է պարունակում նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Մասնավորապես, նշված օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերությունները սահմանում են հետևյալը. «Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից **ավելի:**

Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ»:

Այսինքն, բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա և ժողովի գումարման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 60 օրվանից ավելի լինել: «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքը պարզապես նպատակ է ունեցել կրճատելու այդ ժամկետը՝ սահմանելով 45 օր:

Հաշվի առնելով վերոգրյալ վերլուծությունը և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21^2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության տարբեր ընկալումների վերացման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պ ա շ տ ո ն ա պ ե ս պ ա ր զ ա բ ա ն ու մ է.

1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրվանից ավելի լինել:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 նոյեմբերի 2016 թ., N 5-Ն

Ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ [*]

Հիմք ընդունելով մի շարք իրավական դրույթների («Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մաս և 7-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդված, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետ) ոչ հստակ և տարաբնույթ ընկալման, ինչպես նաև իրավական ակտերի միջև հակասության (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 98-րդ և 111-րդ հոդվածներ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված) կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հասցեագրված գրությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը սույն պաշտոնական պարզաբանմամբ անդրադառնում է ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի վերաբերյալ հետևյալ հարցերին.

1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության տարածքում ընթացիկ արժութային գործարքների դիմաց անկանխիկ վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային անկանխիկ գործարքները կարող են իրականացվել նաև արտարժույթով՝

ա) իրավաբանական անձանց միջև.

բ) անհատ ձեռնարկատերերի միջև.

գ) սույն մասի «ա» և «բ» կետերում նշված սուբյեկտների միջև»: Սակայն, քանի որ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում բացակայում է որևէ դրույթ ներդրումային ֆոնդերի մասին, հստակ չէ՝ ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի փայերի գնանշումը արդյո՞ք ընկնում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո և համապատասխանաբար արդյո՞ք ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի փայերը հնարավոր է գնանշել արտարժույթով:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացվում են ՀՀ դրամով: Ակնհայտ է, որ վերոնշյալ արժութային սահմանափակումը կիրառելի է բացառապես իրավաբանական անձանց կապիտալում իրականացվող ներդրումների նկատմամբ:

Հասկանալու համար, թե այս արժութային սահմանափակումը կիրառելի՞ է արդյոք ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի նկատմամբ, պետք է հասկանալ՝ ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդն ունի՞ արդյոք իրավաբանական անձի կարգավիճակ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 968.1-րդ հոդվածի համաձայն ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի համաձայն մի կողմը պարտավորվում է կառավարել մյուս կողմի դրամական միջոցները□

Այսինքն՝ ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդն ակտիվների համախումբ է, որը կարգավորվում է քաղաքացիաիրավական պայմանագրով և իր բնույթով իրավաբանական անձ չի հանդիսանում: Հետևաբար՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արժութային սահմանափակումը, որը կիրառելի է բացառապես իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում իրականացվող ներդրումների նկատմամբ, չի կարող տարածվել ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի փայերի գնանշման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ պարբերությունը՝ անհրաժեշտ է նաև պարզել՝ արդյոք ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի վրա տարածվում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը, որը թույլատրում է արտարժույթով անկանխիկ գործարքների կնքումը, միայն եթե գործարքի մի կողմը ռեզիդենտ իրավաբանական անձ է (կամ անհատ ձեռնարկատեր), իսկ մյուսը՝ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ (կամ անհատ ձեռնարկատեր):

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. նոյեմբերի 25-ին (ՀՀՊՏ N26 (569), 21.12.2016):

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում արտարժույթով լայնածավալ գործարքների թույլատրումը կարող է ֆինանսական համակարգի կայունության և տնտեսական ռիսկեր առաջացնել, հարցին պատասխանելու համար առաջարկում ենք անդրադառնալ օրենքի կարգավորման նպատակին:

Օրենքի կարգավորման նպատակներն են.

- ՀՀ ռեզիդենտների միջև արտարժույթով գործարքների արգելումը,
- ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց միջև ոչ ձեռնարկատիրական նպատակ ունեցող գործարքներն արտարժույթով գնանշելու բացառումը,
- ձեռնարկատիրական, բիզնես ոլորտի գործարքների արտարժույթով թույլատրումն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է□

Վերջին նպատակի համար օրենքը ընտրել է որպես չափանիշ երկու բիզնես սուբյեկտների միջև ձեռնարկատիրական բնույթ ունեցող գործարքները:

Կարևոր է, որ ֆոնդի կառավարման պայմանագիրն ինքնին հանդիսանում է ձեռնարկատիրական բնույթ ունեցող գործարք. այն հիմնում է ձեռնարկատիրական գործունեություն□ Այս պայմանագիրն իր ձեռնարկատիրական լինելու բնույթը չի փոխում, *անկախ այն հանգամանքից, թե կողմերը իրավաբանական, թե ֆիզիկական անձինք են*□

Գործարքի առարկան ֆինանսական միջոցների մասնագիտացված կառավարումն է, ինչը ենթադրում է, որ գործարքը պետք է ազատականացված լինի գործարքների արժութային ստանդարտ կարգավորումից□ Ֆիզիկական անձը՝ որպես ներդրող, իրավունք ունի իր արտարժութային դրամական միջոցները հանձնել կառավարման այնպես, ինչպես ՀՀ դրամով արտահայտված միջոցները□

Ֆինանսական համակարգի կայունության պահպանման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, տնտեսական ռիսկերի կանխարգելման շրջանակներում կարևոր է նաև, որ տվյալ գործարքը և դրան հետևող ամբողջ գործունեությունը լինեն թափանցիկ և մշտադիտարկվող:

Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային այն ֆոնդերը, որոնք գրանցվել են ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված գրանցման առցանց ընթացակարգով, ապահովում են թափանցիկությունը, ենթակա են մշտադիտարկման և վերահսկողության, ինչպես նաև ենթակա են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից վերահսկողության□

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված առցանց գրանցման ընթացակարգով գրանցված ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի փայերի գնանշումն ընկնում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո և համապատասխանաբար ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի փայերը հնարավոր է գնանշել արտարժույթով, եթե գործարքն անկանխիկ է և ներդրողներից առնվազն մեկն օտարերկրյա անձ է, ընդ որում՝ անկախ այն հանգամանքից՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձ է□

2. Արդյո՞ք հնարավոր է ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին մեզանին ֆինանսավորման (mezzanine finance) տրամադրումը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 98-րդ և 111-րդ հոդվածների և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համադրությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 111-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել՝ ներառյալ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով, չի թույլատրվում: Օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ չի թույլատրվում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին ազատել ընկերության կանոնադրական կապիտալում ավանդ ներդնելու պարտականությունից՝ ներառյալ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով: Նույն դրույթները կրկնվում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում□

Միևնույն ժամանակ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը նախատեսում է, որ ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Այսպիսով՝ օրենսդրությունը մի կողմից արգելում է պարտավորության դիմաց բաժնետոմսերով «վճարելու» հնարավորությունը, իսկ մյուս կողմից թույլատրում է փոխարկելի պարտատոմսերով գործարքները: Սակայն, Քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համադրումը անորոշ է թողնում այն հարցը, թե արդյոք հնարավոր է մեզանին ֆինանսավորման տրամադրումը, ինչն այնպիսի գործարք է, որն ի սկզբանե և

իր բնույթով նախատեսում է պարտավորությունը չկատարելու դեպքում այն կապիտալում մասնակցության փոխարկելու հնարավորություն:

Քաղաքացիական օրենսգրքի 98-րդ և 111-րդ հոդվածներն ուղղված են այնպիսի գործարք արգելելուն, որն իր բնույթով և ի սկզբանե չէր ենթադրում բաժնետիրացում□ Հակառակը միայն պարտավորության չկատարման ուժով որոշում է կայացվել պարտավորությունը մարել այն փոխարկելով կապիտալում մասնակցության□ Այսպիսի գործարքները պետք է արգելվեն հնարավոր չարաշահումների և բաժնետերերի և այլ պարտատերերի իրավունքների պաշտպանության նպատակով□ Այլ է հարցը, երբ ի սկզբանե այնպիսի գործարք է կնքվում, որտեղ նախատեսված է փոխարկման հնարավորությունը□

Հաշվի առնելով կարգավորման այս տրամաբանությունը, կարելի է եզրակացնել, որ քանի որ *մեզանին ֆինանսավորումն ի սկզբանե և իր բնույթով նախատեսում է պարտավորությունը չկատարելու դեպքում այն կապիտալում մասնակցության փոխարկելու հնարավորություն, թույլատրելի է*□ Ընդ որում՝ կարգավորման տեսանկյունից ընկերության կազմակերպաիրավական ձևը որևէ նշանակություն չպետք է ունենա նմանատիպ գործարքների կնքման օրինականության հարցում□ Նմանատիպ գործարքում պարտադիր պահանջ պետք է լինի միայն այն, որ այդ գործարքի հաստատման համար կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված ընթացակարգերը պահպանված լինեն (օրինակ՝ բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկություն և այլն)□

Ուստի, ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը *կարող են ՀՀ-ում գրանցված և գործող կազմակերպություններին մեզանին ֆինանսավորում (mezzanine finance) տրամադրել* և, հետևաբար, ձեռք բերել այդ կազմակերպությունների բաժնետոմսերը այդ կազմակերպության նկատմամբ պահանջների հաշվանցով, եթե գործարքն ի սկզբանե և իր բնույթով նախատեսում է պարտքի դիմաց կապիտալի մասնակցության հնարավորություն և գործարքը հաստատվել է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված ընթացակարգերով□

3. Մեզանին ֆինանսավորումը պարտքային գործիք է, որն իր բնույթով նախատեսում է հետագայում կապիտալում մասնակցության փոխարկվելու հնարավորություն: Միևնույն ժամանակ՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացվում են ՀՀ դրամով: Արդյո՞ք կարող է ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին արտարժույթով մեզանին ֆինանսավորում տրամադրել՝ հաշվի առնելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը և մեզանին ֆինանսավորման՝ հետագայում կապիտալում մասնակցության փոխարկվելու հնարավորությունը:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացվում են ՀՀ դրամով:

Միևնույն ժամանակ, մեզանին ֆինանսավորումը պարտքային գործիք է, որն իր բնույթով նախատեսում է պարտավորությունները չկատարելու դեպքում կապիտալում մասնակցության փոխարկելու հնարավորություն: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել, արդյոք ***մեզանին ֆինանսավորման*** տրամադրումը արտարժույթով կիամարվի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում, քանի որ ի սկզբանե հայտնի է, որ պարտավորությունները չկատարելու դեպքում այն կարող է փոխարկվել կապիտալում մասնակցության:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5^1-*րդ* մասը նախատեսում է, որ ՀՀ տարածքում փոխառությունները կարող են տրամադրվել նաև արտարժույթով, բացառությամբ սպառողական փոխառությունների□

Հարկ է նշել, որ արժութային կարգավորման տեսանկյունից կարևորվում է գործարքի էությունը՝ անկախ այդ գործարքի կնքման ձևից և օգտագործվող գործիքներից□ Ուստի, փոխառության հասկացությունը ներառում է նաև այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ ստորադաս փոխառությունները, *մեզանին ֆինանսավորումը (mezzanine finance)* և այլ պարտքային գործիքներ□ Հետևաբար՝ *«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5^1-րդ մասը տարածվում է նաև մեզանին ֆինանսավորման՝ որպես պարտքային գործիքի մի տեսակի վրա, և համապատասխանաբար մեզանին ֆինանսավորումը կարող է տրամադրվել արտարժույթով:*

Սպառողական փոխառության բացառությանն անդրադառնալով նշենք, որ ՀՀ-ում գործող առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը կամ այլ պարտքային գործիքները չեն կարող որակվել որպես սպառողական, քանի որ հետապնդում են ձեռնարկատիրական նպատակ□

Հարկ ենք համարում հղում կատարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հունիսի 12-ի թիվ 5 պաշտոնական պարզաբանմանը, որտեղ նշվում է, որ «միայն կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ ազդագրի («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն ազդագրի հրապարակման պահանջից բացառությունների և/կամ ոչ հրապարակային թողարկման դեպքում՝ թողարկման պայմանների) համաձայն՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման ենթակա պարտատոմսերի արտահայտումն արտարժույթով, ներառյալ՝ անվանական արժեքի նախատեսումը), այդ պարտատոմսերի ձեռքբերման ժամանակ վճարումները և այդ պարտատոմսերի մարումը կարող են կատարվել արտարժույթով»:

Այսպիսով՝ ոչ *հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը* ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին *կարող են արտարժույթով տրամադրել մեզանին ֆինանսավորում*, սակայն, քանի որ կապիտալ ներդրումները և կապիտալի գնանշումը՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրականացվում են միայն ՀՀ դրամով, մեզանին ֆինանսավորումը կապիտալի փոխարկման պահին պետք է գնանշվի ՀՀ դրամով□

4. Արդյո՞ք ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագիրը կարող է կարգավորվել օտարերկրյա իրավունքով՝ հաշվի առնելով դրա պայմանագրային բնույթը□

Ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը կնքվում է երկու մասնավոր սուբյեկտների միջև□

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1284-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը կարգավորվում է կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կատարված հարցումները ցույց են տալիս, որ իրավաբանների միջև բացակայում է միասնական կարծիք՝ արդյո՞ք այս դրույթը կիրառելի է ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի նկատմամբ, և արդյո՞ք դրույթը շարունակում է կիրառելի լինել այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական պայմանագրում բացակայում է որևէ օտարերկրյա տարր:

Ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը կնքվում է երկու մասնավոր սուբյեկտների միջև□ Հարաբերության բնույթից հետևում է, որ սուբյեկտներն օգտվում են պայմանագրի ազատության իրավունքից: Դա ենթադրում է, որ կողմերը կարող են ընտրել իրենց քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող իրավունքը՝ անկախ որևէ հանգամանքից□ Իսկապես, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը թույլատրում է պայմանագրի կարգավորումն օտարերկրյա իրավունքով կողմերի համաձայնության դեպքում (ՀՀ քաղ. օր. 1284-րդ հոդված)□ Ընդ որում, այս իրավունքը կողմերին տրված է *անկախ իրենց քաղաքացիությունից, գրանցման վայրից, գործունեության վայրից կամ որևէ այլ կապից այս կամ այն պետության հետ:*

Հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ 2016 թ. հոկտեմբերի 27-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում նոր լրացվող 3.1-րդ հոդվածով ՀՀ Ազգային ժողովը վերահաստատեց հիշյալ քաղաքականությունը և ուղղակիորեն իրավասություն վերապահեց ՀՀ կենտրոնական բանկին կանոնակարգել տվյալ ոլորտը ֆինանսական շուկաների համար:

Կիրառելի իրավունք ընտրելու իրավունքը պայմանագրի ազատության սկզբունքից է բխում և չի կարող սահմանափակվել□ Այլ հարց է, թե այն պետությունը, որը կիրառելու է տվյալ համաձայնությունն իր մարմինների միջոցով, ինչ սահմանափակումներ է նախատեսում տվյալ իրավունքի կիրառման ոլորտում□ Նմանատիպ համաձայնություն կիրառող յուրաքանչյուր մարմնի կողմից օգտագործվող սահմանափակումները տարբերվում են՝ կախված տվյալ մարմնի յուրիսդիկցիայում գործող օրենսդրությունից□ ՀՀ-ում կիրառող դատարանների համար այդ սահմանափակումները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (հանրային կարգի վերապահումը և իմպերատիվ նորմերը): Ի հաստատում վերոնշյալի՝ անդրադառնանք միջազգային փորձին, մասնավորապես՝ Եվրամիության (այսուհետ՝ ԵՄ) կարգավորմանը□ Հռոմ I ԵՄ կանոնակարգը[1], որը կարգավորում է ԵՄ տարածքում պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքը, ամրագրում է պայմանագրի ազատության սկզբունքը և կիրառելի իրավունք ընտրելու կողմերի իրավունքը: Ի հավելումն, այն նախատեսում է, որ եթե իրավահարաբերության (իրավիճակի) *բոլոր մյուս տարրերն* իրավունքի ընտրության ժամանակ գտնվում են այլ պետությունում, քան ընտրված իրավունքի պետությունն է, ապա կողմերի *ընտրությունը չի խափանի այդ պետության այն իրավանորմերը, որոնցից չի կարելի*

[1] *Regulation (EC) No 593/2008 of the European Parliament and of the Council of 17 June 2008 on the law applicable to contractual obligations (Rome I).*

վերապահում նախատեսել[2]*:* Նորմն ինքնին նշանակում է, որ նույնիսկ, եթե գործարքի բոլոր տարրերը գտնվում են մի պետության սահմաններում, նրա նկատմամբ, այնուամենայնիվ, կարող է կիրառվել այլ պետության իրավունքը, եթե կողմերի միջև այդ մասին առկա է համաձայնություն և եթե դրա կիրառման հետևանքները չեն հակասում պետության իրավունքի իմպերատիվ նորմերին կամ իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին): Եզրակացությունն այն է, որ կողմերը կարող են ընտրել ցանկացած իրավունք, նույնիսկ, եթե այն որևէ օբյեկտիվ կապ չունի պայմանագրի հետ[3]:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագիրը *կարող է կարգավորվել օտարերկրյա իրավունքով* կողմերի համաձայնության դեպքում, այնքանով որքանով դրա կիրառման հետևանքները չեն հակասում Հայաստանի Հանրապետության իրավունքի իմպերատիվ նորմերին կամ Հայաստանի Հանրապետության իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին):

5. Արդյո՞ք առկա են սահմանափակումներ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կողմից ներդրումների իրականացման հարցում՝ հաշվի առնելով ներդրումային ֆոնդի հասկացությունը:

«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը ներդրումային ֆոնդը բնութագրում է որպես իրավաբանական անձ կամ ակտիվների համախումբ, «որը ստեղծվել և (կամ) գործում (օգտագործվում) է որպես նպատակ կամ հիմնական նպատակներից մեկն ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցները միասնական ներդրումային քաղաքականության ներքո արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների միջոցով ապահովել այդ միջոցների վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման, շահաբաժինների և (կամ) այլ ֆինանսական եկամտի տեսքով՝ վերջինների կողմից իրավաբանական անձի կապիտալում (ակտիվների համախմբում) կատարված ներդրումներին համապատասխան և կախված այդ ներդրումների կառավարման արդյունքներից»:

Հաշվի առնելով վերոնշյալ հոդվածի ընդհանրական բնույթը և ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ այլ հոդվածների բացակայությունը՝ հստակ չէ, արդյո՞ք ներդրումային ֆոնդի հասկացությունը որևէ կերպ կաշկանդում է ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի ներդրումային քաղաքականությունը կամ լրացուցիչ սահմանափակումներ դնում դրա նկատմամբ, մասնավորապես՝ տարատեսակ ներդրումներ կատարելու կապակցությամբ:

Ներդրումային ֆոնդերի օրենքում հստակ ամրագրված նպատակը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ ֆոնդերն իրենց գործունեության բնույթով կոչված են տարատեսակ ներդրումներ իրականացնել: Կենտրոնական բանկը ներդրումային ֆոնդերի գրանցումն իրականացնում է միայն այդպիսի գործունեություն ծավալող սուբյեկտներին:

Ուստի, պետք է բացառվի ֆոնդերի միջոցով անձնական ձեռնարկատիրական գործունեությանը որևէ առավելություն տալու ցանկացած չարաշահում: Անթույլատրելի է ֆոնդի միջոցով այնպիսի կազմակերպություններում ներդրումներ իրականացնելը, որոնք որևէ կերպ կապված են ֆոնդի, կառավարչի, փայատերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ: Կարգավորման տրամաբանությունը պարզ է. անձը չի կարող ներդնել իր իսկ բիզնեսում՝ օգտագործելով ներդրումային ֆոնդը: Նմանատիպ վարքագիծը կհակասի ներդրումային ֆոնդերի գործունեության բնույթին և նպատակին, որի համար ֆոնդերը գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից:

Ուստի, ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի համար կան ներդրումային ֆոնդի հասկացությունից բխող սահմանափակումներ, մասնավորապես՝ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը կարող է իրականացնել միայն տարատեսակ ներդրումներ և չի կարող ներդրումներ իրականացնել ՀՀ-ում գրանցված և գործող այն կազմակերպություններում, որոնցում ֆոնդը, կառավարիչը, ֆոնդի փայատերերը կամ իրենց հետ փոխկապակցված անձինք մասնակցություն ունեն: Սույն պարզաբանման իմաստով փոխկապակցվածության չափանիշները որոշվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իէ» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պ ա շ տ ո ն ա պ ե ս պ ա ր զ ա բ ա ն ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված առցանց գրանցման ընթացակարգով գրանցված *ոչ հրապարակային պայմանագրային ներդրումա-*

[2] *Regulation (EC) No 593/2008, Article 3.3.*
[3] *Garcimartin Alferez, The Rome I Regulation: Much ado about nothing? EurLF 2008, I-61 (I-65) para 22.*

յին ֆոնդերի փայերի գնահշումն ընկնում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո, և համապատասխանաբար ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդերի փայերը *հնարավոր է գնահշել արտարժույթով*, եթե գործարքն անկանխիկ է, և ներդրողներից առնվազն մեկը օտարերկրյա անձ է, ընդ որում՝ *անկախ այն հանգամանքից՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձ է:*

2. *Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը* կարող են ՀՀ-ում գրանցված և գործող կազմակերպություններին մեզանին ֆինանսավորում (mezzanine finance) տրամադրել և, հետևաբար, ձեռք բերել այդ կազմակերպությունների բաժնետոմսերը այդ կազմակերպության նկատմամբ պահանջների հաշվանցով, եթե գործարքն ի սկզբանե և իր բնույթով նախատեսում է պարտքի դիմաց կապիտալի մասնակցության հնարավորություն և գործարքը հաստատվել է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված ընթացակարգերով□

3. *Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը* ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին *կարող են արտարժույթով տրամադրել մեզանին ֆինանսավորում*, սակայն, քանի որ կապիտալ ներդրումները և կապիտալի գնահշումը, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրականացվում են միայն ՀՀ դրամով, մեզանին ֆինանսավորումը կապիտալի փոխարկման պահին պետք է գնահշվի ՀՀ դրամով:

4. *Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի* կառավարման պայմանագիրը *կարող է կարգավորվել օտարերկրյա իրավունքով՝* կողմերի համաձայնության դեպքում, այնքանով որքանով դրա կիրառման հետևանքները չեն հակասում Հայաստանի Հանրապետության իրավունքի իմպերատիվ նորմերին կամ Հայաստանի Հանրապետության իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին):

5. *Ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը* կարող է իրականացնել միայն տարատեսակ ներդրումներ և չի կարող ներդրումներ իրականացնել ՀՀ-ում գրանցված և գործող այն կազմակերպություններում, որոնցում ֆոնդը, կառավարիչը, ֆոնդի փայատերերը կամ իրենց հետ փոխկապակցված անձինք մասնակցություն ունեն:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 նոյեմբերի 2016 թ., N 6-Ն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՆՈՅԵՄԲԵՐ 2016)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 134

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 137

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 152

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 153

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 163

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

